


1190

82

4-18


1884



14 IV. 88
265.

Марка.

31.



ՓԱՅՏԱԳԵՎԻ ԿՐՃԹԻՑ

Մ Ի Ն Զ Ե Կ

ՄՊԻՐԵԱԿ ՏՈՒՐԵ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Փայտագեվին
Ն. Տէր-ԱկեՏիքեան Եի Լ. Մելիք-Ադուսեան

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՅՈՎՀՈՆԻԿՈՅ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊՈՐՈՅ
ՕՐԵԼԱՅԵ ՓՈՎԵ. 5

1884

82

- 18

1931

«ԱՐԵՒՐ» ԱՄՍՈԳՐԻ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻՒՆ № 1

82

Կ-18

ՓԱՅՏԱՁԵՆ ԽՐՃԹԻՑ

Մ Ի Ն Չ Ե Ւ

ՍՊԻՏԱՎՀ ՏՈՒՆՔ

ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ն. ՏԵՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՅՈՒՆԱՆԵՍԿՈ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵԼԵԱՆ ՓՈՎԱՑ № 5

1884

2003

ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ

Ա Տ Զ Բ Գ Թ

ԶԵՎԱՇ ՄԱՇԱԲՐ



Դозволено цензурою. Тифлисъ, 1 июня 1883 г.
Типография И. Мартirosian, Орбл. ул., д. №

Տ 0 0 8

35991-66

8

ՓԱՅՏԱՇԵՆ ԽՐԱՉԹԻՑ

Մ Ի Ն Չ Ե Կ

ՍՊԸՆՏԱԿ ՏՈՒՆՔ *

Հետախոս Ամերիկայի Միացեալ նահանգների եր-
բեմն նախագահ - Ձեմս Հարֆիլդի կենսագրութիւնը:

— Ելեղա, քո վզիդ եմ թողնում այս չորս «ոստիկ-
ները», ասաց Աբրահամ Հարֆիլդը իր կնոջը մահուա-
նից մի ըսպէ առաջ՝ մատնանիշ անելով չորս երեխաներին —
մեծացրու դրանց:

Արգ մանուկներից մինն էր իր տասն և ութ ամ-
սեալ Ձեմս զաւակը, որ ծնուել էր 1831 թուականի
նոյեմբերի 19-ին, և որին վիճակուած էր ժամանակով
Միացեալ նահանգների նախագահը լինել:

Աբրահամ Հարֆիլդը մի լազմանդամ, ուժեղ և
գեղեցկաղէմ մարդ էր. նա իր եռանգով, հաստատամտու-
թեամբ, զարմանալի աշխատասիրութեամբ և համբերու-

*) Ս պ ե տ ա կ տ ո ւ ն ա ն ու ա ն վ ու մ է Հ ե տ ս ի ս ա լ ի ն Ա-
մերիկայի Միացեալ նահանգների նախագահը բնականը:

թեամբ կարող էր օրինակելի լինել Ամերիկայի բոլոր
գաղթականութեան: Իր լուսաւոր խելքով և անխոնչ
գործունէութեամբ նա կարող էր իր որդու պէս փա-
ռաւորութել իր երկրի հասարակական գործերում, բայց
ընտանեկան հոգսերով խեղդուած լինելով, նա ապրեց միայն
ընտանիքի համար:

Նրա մահը շատ զգալի հարուած էր մատաղ ամուս-
նուն, որ նրա հետ թաղեց և իր բաղտն ու երջանկութիւնը:

Հաւաքուեցին բոլոր հարեանները, շինեցին մի հասա-
րակ կաղնէ դագաղ և հանգուցեալի մարմինը աղօթքով
և արտասուքով հողն իջեցրին: Գերեզմանը փորել էին
ցորենի արտի ծալրում ծառերի մէջ, այնպէս որ նա ե-
րեսում էր իր տնակի պատուհանից:

Հանդարտ լալիս էին մալրն ու չափահաս երեխա-
ները, իսկ մանկիկ ջէմսը անմեղ ժպտում էր:

Մօտենում էր ձմեռը. որբացեալ ընտանիքը, որ
կորցրել էր իր միակ կերակրողն ու պաշտպանը, մեծ
հոգսի մէջ էր: Դժուար է մարդուս երեակալել, թէ
ինչեր պիտի չը քաշէր ձմեռուան ամիսներում այն ալրի կինը
իր չորս զաւակներով ամալի փալտաշէն բնակարանի մէջ
Ամերիկայի անտառների խորքերում առանց ապրուստի,
բացի այն պաշարից՝ որ թողել էր ամուսինը, և պիտի
մեծ խնալողութեամբ բանեցնէր, որպէս զի ազատէր ըն-
տանիքը քաղցից: Թէ այդ ինչ սարսափելի ձմեռ էր
դժբաղտ մօր համար – միայն Աստուած զիտէ:

Չինի քուէքը նրա խրճիթը գրեթէ բոլորովին
թաղել էին, այնպէս որ սիրելի ամուսնի շիրիմը անհետացել
էր աչքից. քամին վզվում էր դարերի ծառերի միջով, անձ-
կութիւն բերելով երեխաների վրայ. քաղցած գալերի
ոռնալը և լովազների աղաղակը, որոնք գիշերները հա-

ւաքվում էին նրանց ցանկապատի շուրջը, այնպիսի սար-
սափ էին ձգում նրանց վրայ, որ խեղճերը չէին կարողանում
քնել և գողում էին, կասես տենդի մէջ, ամեն վայրկեան
սպասելով՝ ահա վայրի գաղանները ներս կը թափուին:
Միայն փոքրիկ ջէմսն էր, որ անխոռով քնում էր մանկական
անմեղ ննջով, իսկ ցերեկները զուտրհացնում բոլորին
իր թոթով լեզուով . . .

Սակայն ձմեռն անցաւ: Տաքացաւ երկիրը, ձիւնը
սկսեց հալուիլ, անտառում խոխոջացին առուակները,
կենդանացան ծառերն ու բոյերը, գարնան հոտ փչեց:
Բնութիւնը, կարծես, յարութիւն առաւ, իսկ նրա հետ
և փալտաշէն խրճիթի բնակիչների լուսը կրկին վառուե-
ցաւ: Միայն դառնութիւնը շուտով պատեց նրանց, երբ
տեսան թէ՛ ուտելու պաշարը գրեթէ բոլորովին վերջացել էր
և տան վրայ պարտքը օրէցօր ծանրացել: Մօտեցաւ այն
օրը, երբ երեխաները «Հաց, Հաց» պիտի կանչէին մօրը,
և նա պիտի պատասխանէր. «Հը կայ, որդիք, համբերեցէք:»

Պ

Հարփիլդի աւագ որդի թռմիի գեռ տասն և մէկ
տարին նոր էր լրացել: Ամերիկայի օրէնքների համաձայն
հօր մահուանից իւտոյ պէտք է նա լինէր ազարակի կա-
տարեալ տէրը: Մալրը կանչեց խորհուրդի իբրև փորձա-
ռու, հասակն առած տղամարդի և պատմեց նրան թէ
ինչ վիճակի մէջ են իրանց գործերը:

— Մալրիկ, ինչո՞ւ ես նեղասրտվում, ասաց նա. Ես կա-
րող եմ վարուցանք անել, հնձել, կասել, փայտ կտրել,

կով կթել, մի խօսքով քո լաւ օգնականը կը լինիմ:
— Այդ օրինակ ծանը աշխատութեան համար դու
դեռ շատ փոքր ես, ասաց մայրը, բայց իմ ձեռիս տակ,
կարելի է գլուխ կը տանես տնալին գործերը: Իմ
սիրու չի տալ, որ դու հեռանաս ինձանից:

— Ինչու հեռանալ, մայրիկ, շուտով ընդհատեց մօր
խօսքը փոքրիկ թոմին, ես ուզում եմ անպատճառ այս-
տեղ ապրել և երեքիդ փոխարէն էլ կը բանեմ:

— Զը պէտք է ոյժերդ այդպէս շուտով սպառես,
հողիս, նկատեց խորը զգացուած մայրը, ապա թէ ոչ մի
շիրիմի փոխանակ երկուար կունենանք... Առաջ մենք
ցանկով կը պատենք մեր ցորենի արտը, ուր հօրդ գե-
գերեզմանն է. ես ցցեր կը պատրաստեմ և ապա երկու-
սով ցանկապատը կը շինենք:

— Ես, մայրիկ, կալ էլ կը շինեմ, ասաց թոմին,
առանց կալի չի կարելի գործ առաջացնել:

Եւ ահա մայր ու որդի գործի կացան. գարնան
սկզբում մի գետին զնող լայտնուեց. տիկին Հարֆելդը
վաճառեց ՅՈ փարսախ իր հողից և վճարեց բոլոր պարտ-
քերը և իրան մի աւելորդ դրօշ չը մնաց: Թոմին վեր
առաւ գրացուց բանացնելու համար մի ուժեղ ձի,
հերկեց իր գաշտը ցորենի ու գարու համար, գետնա-
խնձոր ցանեց և ածուներ պատրաստեց բանջարանոցի
համար: Տասն և երկուամեայ քրոջ և մօր օգնութեամբ,
փոքրիկ հողագործը, աշխատելով վաղ առաւօտից մինչև
պինդ մթնելը, հասնում էր նաև տնալին բոլոր գործերին,
ալնպէս որ ամառուայ կիսին դուրեկան բան էր նայել
Հարֆելդի «փայտաշէն խրճին» և նրան շրջապատող
շինութիւններին ու գաշտերին:

Ցցերի պատրաստելը և անտառում ցախ կտրելը

բոլորովին ոյժից գցել էին տիկին Հարֆելդին: Այդպիսի
աշխատութիւնն անսովոր էր նրա համար և նա յաճախ
ասում էր մտքում, որ ոյժից վեր աշխատութիւնը գե-
րեզման պիտի տանէ ոչ թէ թոմին, այլ և իրան: Սա-
կայն յուլիսի վերջերում նա իր գործերը հասցըել էր
վախճանին: Բայց զրան մի նոր դժբաղդութիւն եկաւ՝ հաց
գնելու փող չունենալով, նրանք պէտք է բաւականա-
նային դաշտից մի տարի առաջ հաւաքած ցորենով, իսկ
այդքանը հերիք եղաւ մինչև ամառուայ կէսը, բայց նոր
հնձին դեռ. ևս մի քանի շաբաթ կար: Ա.Հ ու երկիւղով
խեղճ մայրը համոզուեց, որ եթէ խիստ հաշուի չառնէ
օրական ընտանիքին բաց թողած ուտեստը, նրանք կա-
րող են քաղցածութիւնից մեռնել:

Էլ երկար մտածելու տեղը չէր, իր կողմից հարկա-
ւոր էր զոհողութիւն, բայց ինչպէս պէտք է տանէր
բանը, որ երեխաները գլխի չընկնէին: Որովհետեւ բո-
լոր գլխաւոր գործերը կատարում էր թոմին, ուստի տի-
կին Հարֆելդը միշտ հոգում էր, որ մեծ որդին ամեն
օր կուշտ հաց ուտէր. իսկ իրան զբկեց սկզբում նախա-
ճաշիկից, ապա ճաշից, և գոհ էր լինում միայն չափա-
ւոր ընթրիքով: Մօր այդպիսի անձնուիրութեան մասին
երեխաները շատ ուշ իմացան, որովհետեւ նա զգուշու-
թեամբ ծածկում էր նրանցից գաղտնիքը: Բայց Աստուած
վարձատրեց նրան այդ անձնուիրութեան համար: Հունձը
այդ տարի անսաելի առատ էր, ալնպէս որ որբացած ըն-
տանիքն ամբողջ աշունը և ձմեռը անցկացրեց ոչ միայն
առանց կարօտութեան, այլ և լիութեան մէջ: 1835
թւին գարնանը նոր աշխատանքի դուռ բացուեցաւ
մօր և որդու համար: Նրանց ագարակի շրջակալքում
մի հարուստ գաղթական ընտանիք բնակութիւն հաս-

տատեց, նրանք միշտ կար ու կարկատան էին տալիս տիկին Հարֆիլդին կամ որևէ տնային յանձնաբարութիւն Թոմիին:

Էլ ոչ մի պակասութիւն չը կար նրանց տանը, մինչև անգամ աւելորդ փող էլ էր մնում: Փոքրիկ Զէմին զուգուել էր իրան համար յատուկ կարել տուած կօշիկներով, որ անասելի ուրախութիւն էր պատճառել երեքամեայ տղային, որ պանդխտում էր 0դիօի ափերում: Տեսնելու բան էր՝ թէ ինչ հիացման մէջ էր Զէմսը, երբ թափառական կօշկակարը տուաւ նրան ալդ մի զոյգ բաւականին կոշտկար կօշիկը: Զէմս Հարֆիլդը՝ երեսուն տարուց յետոյ նախագահ գառնալով Ամերիկակի Միացեալ նահանգներին, խոստովանել է իր բարեկամներին, որ ալդ առաջին կօշիկները նրան աւելի ուրախացրին, քան թէ նախագահ ընտրուիլը: Զնչին բան էր մի թէ. նա կարող էր ձմեռը վազվել ձիւնի վրայով, չը վախենալով ցրաից, իսկ աշնանը և գարնանը ման գալ ցեխերում: Թոմին էլ իր կարգին, ուրախութիւնից խելքը կորցըել էր, Հրճում էր, որ սիրելի եղբայրիկը իր աշխատանքի արդիւնքով ոտաբորիկ չէ մնացէլ:

— ասիով ոչև ուր պատման դրյամզան ու մասն ու մզնութ պատուի կօշիկն մուռան զմայ լը քրնու ցծու մնացաւ այս ու կամ ու մատու այս պատման ու մասն ու մուռան զմայ: III Առաջ պատմակայ գիւղում գլորոց է բացվում: — Մայրիկ, պէտք է Զէմին ուսումնաբան գնալ, ասաց Թոմին:

— Այս, Զէմին անպատճառ կը գնալ դպրոց, պատախանեց մայրը և մի ուրախ ժպիտ փայլեց նրա երեսի վրայ, երբ լսեց պստիկ տղալի անունը, որ տակալին չորս տարեկան չը կար: Բայց ես կը ցանկալի, որ դու էլ այնտեղ գնալիր, Թոմի, յարեց մայրը:

— Վատ չէր լինիլ, պատախանեց երեխան, բայց ով ալնուհետեւ մեր գետնախնձորը կը քանդէ, ցորենը դաշտից կը հաւաքէ, գարին կը ցանէ, եթէ ես ուսումնաբան մտնեմ: Ոչ, լաւ է, որ քոյրս ու Զէմին գնան ուսում տոնեն, իսկ ես իմ աշխատանքով կը կերակրեմ և կը հազցնեմ մեր ընտանիքը:

Թոմին այնպիսի մի զգացմունքով արտասանեց վերջին խօսքերը, որ կարծես նրա համար ուրիշ գուարծութիւն չը կար աշխարհիս մէջ, բացի ինքնուրոյն կերպով տնային գործերի վարելը իրանց փոքրիկ ընտանիքում:

Նրա խօսքերը մայրը լսելով, չէր կարող ծածկել իր պարծանքը, որ իր անդրանիկն այնպիս անշահասէր և մեծահոգի երեխայ էր:

— Այս, որչափ ուրախ եմ Զէմսի համար, ասաց Թոմին. և ալդ խօսքով նա լայտնեց իր անհուն սէրը դէպի փոքրիկ եղբայրը:

Այնուհետեւ սկսուեցաւ պատրաստութիւն տեսնելը երեխաներին ուսումնաբան ուղարկելու:

Քանի որ Հարֆելդի ընտանիքը դեռ չէր փոխագրուել Օրանք գետի ափերը Օգիօի գաւառը, Թոմին ու երկու քոյլերը գնում էին դպրոց, ուրեմն այդ գործը նրանց ծանօթ էր, իսկ Զէմիի համար այս նորութիւն էր. նա ձեռքը թէև ամենեին գիրք չէր առել, բայց գեղեցիկ պատմում էր Կալէնի և Աբէլի, Յովսէփի ու Յակովի և մսուրի մէջ ծնած Մանուկի և ուրիշ շատերի մասին:

Դպրոց գնալու նախնժաց օրը Թոմին ասում էր. — Զէմին չի կարող ոտով մինչև կէս ճանապարհն էլ է գնալ, նա կը լոգնի . . .

— Ես չեմ թողնիլ, ասաց մեծ քոյլը, Զէմին չի լոգնիլ:

— Ուրեմն ի՞նչպէս կանես, հարցըց Թոմին:

— Կը տեսնես ինչ կանեմ, պատասխանեց քոյլը քառելով:

Եղբայրը նրա երեսից հասկացաւ, թէ նա մի բան էր գրել մտքումը:

— Լաւ, ասա տեսնենք, ինչպէս ես անելու, ստիպում էր Թոմին:

— Կը շալակեմ Զէմիին և կը տանեմ մինչև դըպրոց, ասաց աղջիկը ծիծաղելով, որի համար մի չնչին բան էր իր անձը տուժել, միան թէ չը լոգնէին մանկիկ-եղբօր ստիկները:


— Զէ որ նա ծանր է, ուժաթափ կը լինիս և կը հիւանդանաս:

— Ես աւելի ծանր բաներ եմ տարել ու չեմ նեղացել, ասաց Խետան Հանգիստ կերպով:

Խետան լաջորդ օրը առաւօտեան շալակեց եղբօրը և իր կրտսեր քրոջ հետ գնաց ուսումնարան:

Զէմին ուրախութիւնից խելքը կորցրել էր ալդ-

տեսակ ճանապարհորդութեան պատճառով, նրան նայելով բոլոր ընտանիքն էլ ուրախացաւ: Բայց այդ նշանաւոր առաւօտեան ամենից բաղտաւորը Թոմին էր, որ՝



Խետան տանում է Զէմիին ուսումնարան:

Ճանապարհ ձգելով եղբօրն ու քոյլերին, աւելի եռանդով սկսեց աշխատել իր դաշտալին պարապմունքներով:

— մաս մասին իւսումնական ժամանակում առջև դրաստիւն է մաս մասին առջև դրաստիւն է մաս մասին:

IV
Տիկին Հարգիլդը ճախարակ էր մասում, երբ երեխաներն ուսումնարանից տուն գարձան. նա պէտք է օրական երկու, երեք ժամ աւելորդ աշխատէր, որ կարողանար քիչ էլ է մանել ու գործել, որովհետեւ թէ իրան և թէ ընտանիքի հագուստեղենը նա ինքն էր պատրաստմ իր ձեռքի աշխատանքով:

—Մայրիկ, մայրիկ, որպիսի ուրախութիւն էր մեզ համար, ասաց Խետան՝ Զէմիի ու փոքրիկ քրոջ հետ խրճիթը վազելով:

—Մի մտածիր, մայրիկ, 20 երեխալ կար ուսումնարանում, վրայ բերաւ փոքրիկ աղջիկը: Այնտեղ մեր հարեան Սանդերսի երեխաներին տեսանք, այն ինչ նրանց տունը ուսումնարանից երկու անգամ հեռու է քան թէ մերը: Նոքա պէտք է օրական երեք մզոն գնան...

—Դէ, ասա, տեսնեմ, Զէմին ուսումնարանում լաւ պահեց իրան, Հարցըց մայրը, երբ աղջկերքը լուցին:

—Եաա լաւ, բացականչեց Խետան, ի՞նչպէս էլ լաւ գիտէ ալբեէնը: Երեւակալի՛ր, երբ նա Ի տառին հասաւ, յանկարծ Հարցնում է ուսուցչին. «Դուք որտեղից գիտէք որ սա Ի է. կարելի է սա Ի չէ»:

—Խելքս չէ կտրում, որ դա ալդ ասէր, ծիծաղելով նկատեց թոմին, ես կուզէի իմանալ թէ ուսուցիչն ի՞նչ պատասխան տուեց սրան:

—Ա՛յ ինչ, նա ասաց. «Երբ ես էլ քեզ պէս փոքր էի ու գնացի ուսումնարան, այնտեղ ինձ սովորեցըն, որ ալդ տառը Ի է»:

Թոմին խտաց փոքրիկ եղբօրն ու սկսեց վեր վեր թուցնել. փոքրիկին ալդ բանը շատ դիւր եկաւ և երկուսն էլ սկսեցին քրքջալ: Յետով աշխովմ Զէմին սկսեց

պատմել, իրան կարողացածին չափ՝ ի հարկէ, թէ Խետանի մէջքի վրայ նստած գնալը ինչպէս լաւ էր, թէ ինչպէս հաւան կացաւ ուսումնարանին, թէ ինչպէս կամեցաւ մի փոքրիկ աշակերտի հետ ծանօթանալ՝ որի համար տեղից վեր թուաւ, որ վազէնրա մօտ, բայց ուսուցիչը ձեռքից բռնելով յետ տարաւ իրա տեղը և ասաց, որ դասատան մէջ պէտք է հանդարտ նատել և ոչ թէ վազգել:

Փոքրիկ Զէմին սիրեցին միանգամից թէ աշակերտները և թէ ուսուցիչը: Նրա սրամիտ, երեւմն իսկ կծու հարցերի ու պատասխանների վրայ ամբողջ դասատունը ծիծաղից թուլանում էր:

Մէկ անգամ աւագ աշակերտներից մինը, Զէմին նստեցնելով սեղանի վրայ առաջարկեց, որ նա ուսուցիչը կատարէ:

—Դու, Զէմի, Հարցմունք արա մեզ, իսկ մենք խմբովին քեզ կը պատասխաննենք: Միայն նայիր, որ դժուար բաներ չեն հարցնես, թէ չէ կը կտրուենք:

Փոքրիկ Զէմիի աչքերը բերկըութիւնից կրակ կը ըստեցին:

—Տեղներդ, բարձր կոչեց նա: Երեխաները ցըսեցան դասատան մէջ ու ամեն մարդ իրա տեղը նստեց:

—Ասացէք, տապանն ո՞վ շինեց:

—Նոյր, ձայն տուին մի քանիսը:

—Ո՞վ հրամայեց նոյին, որ տապան շինի:

—Աստուած, խմբովին պատասխաննեցին Երեխաները:

—Ինչու համար:

Ամենքն էլլուցին ու սկսեցին միմեանց Երեսին նայել

— Որպէս զի նոյին և նրա ընտանիքին փրկէ ջըրհեղեղից, ծանրաբարոյ կերպով բացարեց չորս տարեկան ուսուցիչը:

— Ամենքից շատ ապրողը մվէր, նորից հարց տուեց նա:

— Մաթոսաղան, հինգ հոգի պատասխանեցին:

— Քանի տարի նա ապրեց:

Կրկին լոեցին ամենքը:

— Ինը հարիւր վաթսուն ինը տարի, փառաւորապէս պատասխանեց Զէմին:

Այսպիսով չորս տարեկան երեխան կէս ժամի չափ հարցաքննելով իրանից մեծերին, նա և ամեն մի դժուար հարցի պատասխանն էլ կարողացաւ տալ: Զարմանալի լիշտիւն ունէր. բերան էր անում անուններ, թւեր, դիպուածներ, անցքեր և այն զարմանալի արագութեամբ ու ճշտութեամբ: Շատ անգամ դառնալով տուն՝ մօրը անգիր կրկնում էր աւագ աշակերտների դասից ամբողջ հատուածներ, այն էլ մի անդամ միայն լսելով: Նորա դիտողութիւնից ոչ մի բան չէր խուսափում. նա ուզած մէկին ներկայացնում էր՝ նրա ձայնը հանելով, նրա ձեւերը բանացնելով, մինչեւ անգամ բաւականին յաջողակութեամբ նոյն իսկ երեսի գծագրութիւնը փոփոխելով: Նրա մօտ խօսել չէր կարելի, իսկոյն նկատում էր մարդուս լաւ ու վատ կողմերը, և ալդ քննողական ընդունակութեան շնորհով էր որ՝ չը նայելով իր տարիքին, ամեն բան ճիշդ քննադատելու ձիրքը զարգանում էր նրա մէջ:

Օգիօի ուսումնարանը այնպէս յառաջադիմութիւն էր անում, որ ծնողները վճռեցին միայն երեք շաբաթ հանգիստ տալ երեխաներին, իսկ գեկտեմբերից կրկին ուղարկել ուսումնարան: Տիկին Հարֆիլդը մտածեց, որ սաստիկ ցրտերի միջոցին չի կարելի թողնել, որ Զէմին

ուսումնարան գնալ, մասաւանդ որ Խետան դեռ էլի շալակած էր տանում բերում երեխալին: Տիկին Հարֆիլդը առաջարկեց Թոմիին, որ կովերին խնամելը քոյրերին, յանձնի, իսկ ինքը պարապ ժամերին յաճախէ ուսումնարան, որ գիտեցածն էլ չը մոռանալ:

Բայց Թոմին լսել անգամ չէր կամենում, որ իրան համար պէտք է քոյրերը զրկուելին ուսանելուց:

— Ես, մայրիկ, տանը կը սովորեմ, յայտնեց նա: Եթէ ձմեռը ձիւնի շեղչերը մեզ չեն ստիպի ձիւն դէն տալ, ես ժամանակ կը գտնեմ — կովերին էլ նայելու, վայտ էլ կոտրելու, և էլ կարգալու: Զէմիին չը պէտք է թողնել որ ուսումնարան գնալ. ես ինքս կը պարապեմ նրա հետ:

Մայրը շատ գոհ մնաց ալդպիսի վճռով և ինքը ձեռք առաւ երկու որդկերանց ուսում տալր:

Ձմեռուայ երկար գիշերներին Հարֆիլդի ընտանիքի ապրուստը լաւ էր: Հէնց որ մայրու որդիք իրանց տնային պարապմունքը վերջացնում էին թէ չէ, նատում էին վառարանի մօտ կրակի տռաջ, որովհետև նրանց համար ճրագ կամ լամպար ասած բանը անառելի շուայլութիւն էր համարվում: Մայրն ու աղջկերքը աշխատում էին, իսկ Թոմին կարդում էր բարձր ձայնով, կամ թէ չէ խօսակցում էին լրջօրէն, կամ հանաք անում, որից երեխաների ուրախ ծիծաղը յաճախ թնդեցնում էր խրճիթը:

Բայց ամենից շատ ալդպիսի երեկոները երեխաների կարդացնելուն էր նուիրվում: Բուքը զօղանջում էր անտառում, ձիւնը վրայ տալի, ծառերը ձայն էին հանում. իսկ «վայտաշէն խրճիթում» հոլանդական վառարանի մէջ բորբոքվում էր վայլուն բոցն ու ախորժելի տաքութիւն սըփուում տան ամեն մի սնկիւն, և գերանների արանքներից անցնելով տաքացնում էր նոյնպէս վերնալարկը, ուր

Թոմին ու Զէմին էին քնում: Աման զամբ մայրամեռան
Փոքրիկ Հարֆիլդի համար ալդ ձմեռը լիշտակի
արժանի էր, գարնան մօտ նա վանկով լսւ կարգում էր
և բաւականին կանոնաւոր էլ գրում. մայրը հարևաննե-
րից էր ճարում մանկական գրքերը, այն էլ մեծ դժուա-
րութեամբ, երբեմն էլ ուրիշն էր գրքեր ընծայում երե-
խալին, և գրանից էլ լսւ ընծայ չէր. կարելիս գտնել:
Մի անգամ Զէմին առանց ուրիշի օգնութեան վանկե-
րով կարգաց հետեւեալ նախադասութիւնը: Անձն չել
«Անձրեւ ծեծում էր տանիքին»: Անձն ու յառ
—Մայրիկ, կոչեց նա համարեան զարմացած, ես ինքս էլ
լսել եմ թէ ինչ էր լինում անձրեւելիս:

—Ի՞նչ էր լինում, զաւակս, հարցրեց մայրը:
—Ծեծում էր տանիքին, . . . այս, ես ինքս ձայնը
լսել եմ: Անձրեւ ծեծում էր տանիքին . . .
—Անձրեւ ծեծում էր տանիքին . . .
Կը կնեց երեխան մուր մտածմունքի մէջ ընկաւ: Առա-
ջին անգամ նա հասկացաւ թէ բառերով կարելի է ոչ
միայն պատկերացնել առարկաներ, հաղորդել մտքեր,
անցքեր, այլ և ձայներ, և այս բոլորն էլ թղթի վրայ կա-
րելի է գրել:

Ալդ ըոսէից երեխան սրտանց կպաւ գրքերին: Հին-
գամեալ Զէմին գրեթէ չէր բաժանվում «Անգղիացի ըն-
թերցող» անունով մանկական ամսագրից. նա ամբողջ ժամե-
րով տանը յատակի վրայ պառկած, կամ ծառերի տակին
խոտի վերայ խորասուգուած էր լինում ընթերցանու-
թեամբ: Հէնց այս ժամանակուանից մօր մտքի մէջ ծա-
գեց այն համոզունքը, թէ իր փոքր որդին փառաւոր
ասլագալ է ունենալու, թէ և իրանց աննախանձելի
դրութեանը նախելով դժուար էր ալդ բանը ենթադրել,
որ երբ և իցէ կարող էր ալդ բանը պատահել: Միայն

մայրը կարծես նախատեսնում էր, որ այդ արագ ու վաղ
զարգացող մտքի համար գործունէութեան լայն ասպա-
րէզ է ներկայանալու: Տարբերակը մասնաւոր է և առ պատճեն
Սիկին Հարֆիլդը մտածեց՝ թէ լաւ կը լինէր, որ
նոր ուսումնարան բացուէր իրանց տանից մօտիկ. ուստի
խորհրդակցելով գրացիների հետ, ուսումնարանի շինու-
թեան համար տեղ առաջարկեց իր սեպհական հողի վրայ: Եւ
ահա, Զրօրհնէքից բաւական առաջ, Հարֆիլդի ագարա-
կի մի ծայրին մի նոր ու գեղեցիկ տնակ երեաց այս
ցուցանակագրով: «Մանկական ուսումնարան»:
—Այժմ, Զէմի ջան, կարծեմ դու քո ոտով կարող
ես ուսումնարան գնալ, սսում էր Թոմին փոքրիկ եղ-
բօրը, — հերիք է ինչքան լսետան քեզ համար բեռնա-
կիր կենդանու պաշտօն կատարեց: Յուսով եմ թէ՝ դը-
գոհ չես լինելու: Երեխան ժպտալով պատասխանեց, որ ինքը շատ գոհէ:
Ուսումնարանի շէնքը 20 քառակուսի ոտնաչափ
տեղ ունէր բռնած, յատակն ու առաստաղը տախտա-
կամած էր, սեղանները թէւ առանց յինարանի էին,
բայց նրանց վրայ կարելի էր հեշտութեամբ 25 երեխայ
տեղաւորել: Այն ժամանակ Ամերիկայի գաղթականների
մէջ սովորութիւն կար, որ ծխական ուսումնարանի ու-
սուցչին պէտք է հերթով հիւրասիրէին և «ճաշ» տային
այն ընտանիքները, որոնց երեխաները ուսումնարան
էին յաճախում:

Թոմի Հարֆիլդը մօր և երկու քոյլերի օգնու-
թեամբ կարողացաւ աշնանը իր ժամանակին վերջա-
ցնել դաշտալին բոլոր գործերը և ձմեռուայ համար փալտ
պատրաստել, այնպէս որ ուսումնարանի բացուելուն պէս

35999/1-66



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

նա կարող էր մի կերպ ազատ ժամանակ ունենալ ուսման գնալու:

Դեկտեմբերին եկաւ ուսուցիչը, որի ազգանունն էր Ֆօստեր, սա մի 20 տարեկան տգեղ, քաշուող, բայց աշխատասէր, խելացի, բարի, չափազանց ընդունակ և իր գործը ջերմ կերպով սիրող երիասարդ էր:

Ուսուցիչը եկածին պէս տեղաւորուեց տիկին Հարֆիլդի «Փայտաշէն խըճթում», որի վերնայարկում քնում էր Թոմիի և Զէմսի հետ: Հէնց առաջին վարկեանից փոքրիկ երեխան ուսուցչի առանձին ուշադրութիւնը գրաւեց: Ֆօստերն ու մանուկը շուտով բարեկամացան: Ուսումնարանի բացման օրը նրանք տանից միասին դուրս եկան և ճանապարհին գնալիս անընդհատ խօսում ուծիծաղում էին:

— Լսիր, Զէմի, եթէ դու լաւ սովորես, ասաց ուսուցիչը քնքշաբար երեխայի մազերը շոյելով, երբ մեծանաս՝ «Գօրավար» կը դառնաս:

Զէմսը զօրավար բառի միտքը թէւ լաւ չը հասկացաւ, սակայն ենթադրեց թէ անշուշտ մի լաւ բան պէտք է լինի, որ ուսուցիչը այդ խօսքն ասելով փայփայեց իրան: Գօրավար խօսքը պինդ նստեց խոհուն մանուկի գլխում: Ուսումնարանից տուն դառնալուն պէս վազեց մօր մօր և հարցրեց:

— Մայրիկ, ինչ կը նշանակէ «Գօրավար»:

— Ի՞նչիդ է պէտքը, որ դու այդ բանը իմանաս, ասաց մայրը ժպտալով:

— Ի՞նչպէս չէ, ուսուցիչը ասում է, եթէ ես լաւ սովորեմ՝ ինձ գօրավար կընարեն:

— Տեսնում ես, ծիծաղեց տիկին Հարֆիլդը՝ հիմա դու կամենում ես իմանալ արդեօք արժէ գօրավար լենել, թէ ոչ, այնպէս չէ:

— Ես ուզում եմ իմանալ թէ ինչ բան է գօրավար, պնդում էր Զէմին:

— Ի՞նչպէս տեսնում եմ քո ձեռքից չի կա, ելի ազատուել. դէ լսիր, ես քեզ կը պատմեմ պապիդ մասին, որը կոռուելիս է եղել Ամերիկայի գաղթականների ազատութեան համար մի նշանաւոր զօրավարի հրամանատարութեան տակ: Զեր պապերը ազգով անգղիացի էին, նրանցից մինին, այն է, Եղուարդ Հարֆիլդին դիւր չեկան Անգղիայի կարգերը: Նա մի քանի ընկերների հետ թողեց հայրենիքն ու եկաւ Ամերիկա և բնակութիւն հաստատեց Մասաչուզետա գաւառում անտառի մէջ, ուր բնակվում էին վայրենի ցեղեր: Եղուարդը նրանցից մի փոքր կտոր հող գնեց, որի վրայ շինութիւն կառուցանելով մեծ մտերմութեամբ ապրում էր կարմրամորթների հետ: Առաջին գաղթականների օրինակին հետեցին էլի ուրիշ գժգոհ անգլիացիներ, որոնք ովկիանոսը անցնելով գալիս բնակութիւն էին հաստատում Ամերիկայի կուսական անտառներում, առաւելապէս գետերի և լճերի ափերին: Այս բանը զայրացրեց անգղիական կառավարութեանը, որը վճռեց Մասաչուզետա գաւառի լանդուն գաղթականների դէմ պատերազմ սկսել, որովհետև սրանք գալտնի գրգռում էին նորեկներին չը հպատակուիլ Անգղիայի թագաւորին: Կարմիր նշանազգեստներ հագած զինուորներով լի մի քանի տասնեակ նաւեր եկան հասան Ամերիկա: Նրանք իրանց հետ բերին մեծ քանակութեամբ թնդանօթ, հրացան, գնդակ, վառօդ: «Զեզ ամենիդ մէկ-մէկ կը կոտորենք» սպառնում էին նրանք պանդուխտներին, բայց գաղթականները չը վախեցան, այլ հրացան վերցնելով սկսեցին բրիտանական զօրքի վրայ կըակ տալ: Այն ժամանակ և քո պապ Սողոմոն Հարֆիլդը զինուոր գրուեց ամերիկական գնդում և արիաբար կոռուեց գաղթականների ազատութեան համար: Բոլոր մեր զինուորները կապոյտ էին հազար պղնձէ կոճակներով, կարմիրներից զանազանուելու համար: Գաղթականների զօրքին

առաջնորդում էին զօրավարներ. այն ժամանակուալ ամենից ականաւոր զօրավարը Գէորգ Վաշինգտոնն էր: Զօրավարների նշանազգեստները ոսկեթելով էին կարած, ոսկէ ուսնոցներ էին կրում, իսկ գլխների վրայ ոսկեթել ժապաւէնով փետրազարդ գլխարկներ: Միտք է Վաշինգտոնի պատկերը, որ նկարած էր օրացոյցի մէջ. ահա արդպէս էին հագնուած բոլոր զօրավարները: Միայն նրանք հրացանի փոխարէն սրեր էին կախում կոխքերից և միշտ ձիով էին շրջում զօրքերի առաջ, որ հեշտութեամի տեսնեն ամեն կողմից: Տար Աստուած որ մենք այլ ևս զօրավարների կարօտութիւն չ'ունենանք—պատերազմը սարսափելի բան է: Սակայն կարելի է զօրավար դառնալ և առանց պատերազմի, հարկաւոր է լաւ ուսում առնել և կարելի է զօրավարի կոչում ստանալ: «Անկախութեան պատերազմից» յետոյ քո պատ Սողոմոն Հարֆիլդը տեղափոխուեց Նիւ—Եօրկի նահանգը, ուր ամուսնացաւ և Աստուած նրան մի որդի պարգևեց, որին անուանեց Թոմի: Թոմի Հարֆիլդը քո հարազատ պապն է. երբ նա էլ մեծացաւ, նոյնպէս ամուսնացաւ, որից նա մի որդի ունեցաւ և անուանեց Արքա Համ, որ է քո հայրը: Յիշիր, որ Սողոմոն Հարֆիլդը եղել է քո մեծ պապը և կոռուլ է Ամերիկայի պանդուխտների ազատութեան համար. Թոմի Հարֆիլդն էլ քո պապն է՝ Նիւ—Եօրկում առաջին բնակողներից մինը. նրա որդի Արքահամը՝ քո հայրը, է Օգիօ նահանգի առաջին բնակիչը: Ուրեմն նըշանակում է քո պապերից ոչ ոք զօրավար չէ եղած, թէպէտ իրանց արժանաւորութիւններով զօրավարի հաւասար էին: Եթէ ժամանակով դու զօրավար դառնաս, ալսպիսի պատուի կը հասնես, որին չի հասել քո պապերից և ոչ մինը ալս երկու հարիւր լիսուն տարուալ ընթացքում:

Տէ՛ր Աստուած, ինչպէս զարմացաւ Զէմին՝ երբ լսեց

մօր պատմութիւնը, նա չէր էլ երևակայում, որ գոյութիւն ունին ուրիշ երկիրներ, ուրիշ աշխարհ, քան այն անտառները, որոնք շրջապատում են իրանց «փալտաշէն խրճիթը»: Եւ յանկարծ, մայրը յայտնում է, որ Հարփիլդեանք ծովի այն երեսից, մի ինչ որ Անգղիալից են եկել, որ նրանք յալտնի մարդիկ են եղել և թէ նրանք փոքր գեր չեն խաղացել Ամերիկայի առաջին պանդուխտների պատմութեան մէջ:

Այդ օրից իր հայրական «փալտաշէն խրճիթը» առանձին նշանակութիւն ստացաւ Զէմիի աչքում. և շատ, հազար մի նոր մտքեր յղացան քանքարաւոր մանուկի գլխում:

Փոխադարձ սէրը նրա և ուսումնարանի ուսուցչի մէջ ամրանում էր աւելի ու աւելի. Ֆօստերը համոզուած էր, որ փոքրիկ Հարփիլդի մէջ ապագայում մեծ մարդ դառնալու նշուլը կայ: Բայց մի անգամ այնպէս բան պատահեց, որ մանուկը շփոթեցրեց դաստիարակին: Իր ուսումնարանում հաստատուելու երկրորդ օրը այս տեսակ կանոն սահմանեց.

«Աշակերտները երեք դասերը չեն սերտիլ, եթէ սկսեն նայել իրանց չորս կողմը, ուստի խստիւ պատուիրվում է նայել միայն գրքերին, երբ նստած կը լինին դասարանում»:

Բոլոր երեխաների, մանաւանդ Զէմիի համար անտառնելի ծանր էր այդ նոր կանոն մտցնելը: Գըեթէ բոլորը՝ ինչ որ փոքրիկ Հարփիլդը գիտէր, ձեռք էր բերել իր դիտողութեան օգնութեամբ, նրա համար իր երկու աչքը և երկու ականջն աւելի նշանակութիւն ունէին քան թէ տասը գիրք. որտեղից ուրեմն կարելի էր խելք սովորել, եթէ հանգարտնստէր մի քանի ժամ առանց յենարան նստարանի վրայ և ցցի պէս տնկուած աչքը գրքից չը հեռացնէր, քանի որ տղան ծնած օրից հինգ ըոպէ ընթացքում:

անգամ հանդարտ մի տեղ նստած չէր: Բայց և այնպէս նա ինքն իրան խօսք տուեց անպայման հնազանդուիլ իր նոր բարեկամի կարգադրութեանը: «Դէ՛ թէ որ զօրավար դառնալ ես ուզում, դատում էր ինքն իրան մանուկը, պիտի վարժուիս մեծերին լսել»: Բայց բանը այդ չէ. թէև Զէմսին ուրախ էր հնազանդուելու, միայն ինչ արած որ աչքերը չէին հնազանդվում, այլ շարունակ այս ու այն կողմն էին նայում:

— Զէմս Հարֆիլդ, — կոչեց ուրախ դէմքով ուսուցիչը, միթէ արդէն ալդպէս շուտ մոռացաք դասարանական կանոնը:

— Մոռացայ, պատասխանեց խոնարհութեամբ մանուկը և աչքերը գրքի վրայ ձգեց. բայց ոչ երկար միջոց. ընկերներից մէկի հարցմունքին պատասխանելով՝ նա էլի աչքերը բարձրացրեց:

— Զէմս, էլի մոռացաք կանոնը, կոչեց կրկին ուսուցիչը, շատ թոյլ լիշողութիւն ունիք . . .

Երեխան զբնուեց և լուռ սկսեց գրքի վրայ նայել: Թէև նո ամենայն կերպ պատրաստ էր հնազանդուիլ, բայց իր աշխոյժ աչքերին չէր կարողանում բան հասկացնել: Ամբողջ երկու շաբաթ ֆօստերը հանգստութիւն ըլ տուեց Զէմս Հարֆիլդին և ամեն վալրկեան հետեւում էր նրան դասարանում, լիշեցնելով ատելի կանոնը: Փափագելով հաճելի գտնուիլ բարեկամին և դաստիարակին, մանուկը բոլոր իր ուշադրութիւնը կենդրոնացրեց միայն աչքերի վրայ, դրա համար էլ լաւ չէր լսում թէ ինչ էին դաս տալի, ուստի և սկսեց վատ պատասխանել դասերը: Ուսուցիչը, պատրաստուելով դրացի ագարակատիրոջ մօտ տեղափոխուելու «ճաշի» համար, Զէմսի ներկալութեամբ, նրա մօր հետ սկսեց հետեւեալ խօսակցութիւնը.

— Տիկին Հարֆիլդ, ես չէի կամենալ ձեզ վրդովել . . .

Զէմսը շատ պատուական երեխայ է, բայց ես պէտք է ձեզ հաղորդեմ . . .

— Ասացէք ուղղակի, բանն ի՞նչումն է, — անհամբերութեամբ նկատեց տիկին Հարֆիլդը, սակաւ ինչ լուգուած ֆօստերի պեղճ ձեից:

— Զէմսը բոլորովին այն չէ, ինչ որ ես էի սպասում, — անվստահաբար արտասանեց ուսուցիչը:

— Ի՞նչ է նշանակում այդ գուշ ինձ գարմացնում էք:

— Նա դասատանը երբէք հանգիստ չէ նստում, դասերը վատ է սովորում: Ես չեմ հաւատում, որ նա ժամանակով պիտանի մարդ դառնայ:

— Օ՛հ, Զէմս, արտաբերեց բոլոր հոգով խուվուած տիկին Հարֆիլդը: Ուրիշ ոչինչ նա չ'աւելացրեց, բայց այդ բացականչելը բաւական էր, որ բոլորովին լուսահատութեան մէջ ձգէր խեղճ երեխալին, որը մօր մօտ կանգնած լսում էր բոլոր խօսակցութիւնը:

— Նա գլուխը կպցնելով մօր ծնկներին հեկեկալով կրկնում էր անդադար՝

— Մալրիկ, ես խելօք կը լինիմ, ես ուզում եմ խելօք տղայ լինել . . .

— Կարելի է նա հանդարտ չէ նստում դասատանը, շարունակեց մալրը իր հարցմունքը ուսուցչին. պէտք է ձեզ ասեմ, որ նա խաղաղ նստել չէ կարող. ալդպէս է նրա բնաւորութիւնը . . .

— Ես հանդարտ կը նստեմ, — զոչեց Զէմսը, արտասուալից աչքերով ու մի քանի անգամ կրկնելով միենոյն խօսքերը:

— Նա դասերը միշտ լաւ էր սերտում, միշտ, հատատում էր նրա խօսքը մալրը, աւելի լուզուելով:

— Մալրիկ, ալժմ ես լաւ կը պատասխանեմ դասերս, գոռալով ասաց Զէմին, արտասուքը կուլ տալով:

— Ես հաւատում եմ, պնդեց մալրը: Մի քանի

Երեխաների երբեմն խլութիւն է պատահում, կարելի է նրան էլ է պատահել, դարձաւ նա դէպի ուսուցիչը. բայց ես լոյս ունիմ, որ այդ շուտով կանցնի:

— Ի հարկէ, ի հարկէ, — ասաց վարժապետը, սղալելով մանուկի մազերը: Նա խիստ վախեցաւ և սիրտը շարժուեց երեխայի արտասուքից և աղաղակից: Հերիք լաս, հանգստացիր, ես չեմ բարկանում քեզ վրայ, շուտ հաշտուինք և մոռանանք անցեալլ:

Անփորձ ուսուցիչը միայն այժմ հասկացաւ իր սըխալը և անյապաղ փոխեց դպրոցական անտեղի կանոնը: Զէմսին թոյլատրուեց նստել դաստիանում ինչպէս իր կամքն է ուզում և նայել ուր և կամենալ: Հետեանքը հիանալի բան դուրս եկաւ: Անսովոր երեխայի զննողականութեանը արձակ ընթացք շնորհուեցաւ, նրան ոչ մի բանում չէին ճնշում, շուտով նա եղաւ ուսումնարանի զարդը: Մայրը մի քանի օր չէր տեսել ուսուցչին. երբ նրանք կրկին հանդիպեցին, Փօստերը շտապեց հաղորդել նրան, որ Զէմսին այժմ չի կարելի ճանաչել. ճշմարիտ է, նա դարձեալ դաստիանում անդադար վեր է թռչում, անցնում է մէկ նստարանից միւսը, շարժվում է, նայում է ամեն կողմ, սակայն շատ լաւ է սովորում:

— Յիշեցէք իմ խօսքը, ասաց ուսուցիչը, որ ձեր որդուց նշանաւոր մարդ պիտի դուրս գալ: Նրա վրայ շատ բան կը խօսեն:

— Ես այդ բանին հաւատացած եմ, ասաց համեստութեամբ տիկին Հարֆիլդը՝ արտալալտելով նրանով իր բոլոր ծնողական խանդաղատանքը դէպի Զէմսը: Մանուկի չափազանց աշխոյժ և շարժուն բնաւորութիւնը լաճախ բարկացնում էր երեց եղբօրը՝ Թոմիկին: Նրանք երկուսը միասին մէկ մտհճակոլի վրայ էին քնում գիշերները. Զէմսը այնքան էր պարան—պարան անում, ծուլ—ծուլ լինում, որ նրա պաստառը և վերմակը ընկ-

նում էին յատակի վրայ, որի համար Թոմին անդադար արթնանանում էր: Նատ անգամ պատահում էր, որ Զէմսը ամեն ինչ ձգելով վերալից, մրառում էր և քնի մէջ կանչում: — «Թոմի, ծածկիլ ինձ»:

Մեծ եղբայրն էլ ստիպուած վեր էր կենում անկողնից և խնամքով ծածկում փոքրիկ չարաձճիին: Զարմանալու չէ, որ Զէմսը այնպէս վարժուել էր եղբօր հոգատարութեանը՝ որ տակաւին 25 տարուց լետոյ երբ նազօրավար էր, ինչպէս պատմում են ականատեսները, գեռչէր մոռացել այդ մանկական սովորութիւնը: Մի անգամ գիշերը՝ արիւնահեղ ճակատամարտից լետոյ, Զէմս հարֆիլդը պառկեց քնելու մերկ գետնի վրայ ի իր ընկերների հետ, նա այնքան շարժուել էր, որ բաց էր եղել մրսելով քնի մէջ կոչեց, ինչպէս երեխայական օրերում:

— Թոմի, ծածկիլ ինձ: Սպաներից մինը շտապեց վրան վերմակ ձգեց, բայց անզգուշութիւնից արթնացրեց նրան: Երբ նրան բացատրեցին թէ բանն ինչումն է, նա երեսը շրւու տուեց, և սկսեց հեկեկալ, հեկեկալ ինչպէս մի մանուկ. նա լիշեց «Փալտաշէն Խրճիթը» Օգիօ գաւառում, իր ննջարանը վերնայարկում, իր բարի եղբայր Թոմիկին և վերջապէս Փօստեր ուսուցչին, որ մի անգամ տարակուեց Զէմսի պիտանի մարդ գառնալուն:

Ոչ միայն ազգականները, այլ և բոլոր դպրոցական ընկերները Զէմս Հարֆիլդի մէջ ոչ թէ հոգի այլ մի առանձին բան էին տեսնում, որ այնպէս գրաւում էր ամենքին դէպի ինքը: Նա ազահութեամբ կարգում էր ձեռքն ընկած ամեն մի գիրք, սովորում էր փառաւոր կերպով և արդէն 6 տարեկան հասակում քաջ օգնական էր Թոմի եղբօրը տնալին գործերում:

Հարֆիլդի և Բոլտօնի երեխաները իրանց համար ժողովատեղիի ալէս մի բան էին սարքել «ընթերցա-

նութեան մըցում» անունով, ուր ձմեռուայ գիշերները, կատարելագործվում էին բարձրաձայն ընթերցանութեան մէջ: Զէմսը այդ բանումն էլ բոլոր երեխաներից գերազանցեց, նրանց միաձայն վկալութեամբ կարգում էր նա վարպետութեամբ: Առհասարակ ինչ բանի որ կայում էր՝ միշտ ամեն բանի մէջ առաջինն էր լինում:

Երբ Զէմին ութ տարեկան եղաւ, նա իր վրայ առաւ հանդի բոլոր ծանր աշխատութիւնները, որովհետև Թոմին շատ անգամ մէկ, երկու շաբաթով շրջականերում բանուրութեան էր գնում, որից մեծ շահ էր ստանում. գիւղատնտեսութիւնը մնում էր Զէմսի ձեռքում, որ արդէն կարողանում էր փայտ կտրել, կովերը կիթել, կասել ցորենը, տնկել և ցանել զանազան բանջարեղէններ:

— Զէմս, ասաց մէկ տնգամ տիկին Հարֆիլդը, դու ութ տարեկան ես, իսկ Թոմին տասնեօթը: Երբ մեռաւ քո հայրը, եղբայրդ դեռ տասնմէկ տարեկան թէև չը կար, բայց և ալնպէս նա հօրդ տեղը բունեց դաստակերտում: Պատրաստուիր, որ դու էլ մեծ եղբօրդ փոխանակես. երբնա շուտով բոլորովին հասակն առած կը լինի և կերթայ օտարութեան մէջ իր ապագայի ասլահովութեան համար միջոցներ ձեռք բերելու, դու կը մնաս տան կատարեալ տէրը:

— Ինչ կը լինի որ, մայրիկ, ես պատրաստ եմ, պատասխանեց Զէմսը. այն ժամանակ իմ տասնմէկ տարիս լրացած կը լինի և ես լաւ տեղեակ կը լինիմ գիւղատնտեսութեանը:

— Յոյս ունիմ թէ դու իր ժամանակին կը լինտրես

քեզ համար աւելի հասուն գործ, քան հողադործութիւնը, նկատեց մայրը:

— Մի՞թէ երկրագործութիւնից լաւ բան կարող է լինել, կոչեց Զէմսը:

— Բայց դու չէի՞ր կամենալ քարոզիչ կամ ուսուցիչ դառնալ:

— Երբ ես հասակս առած կը լինիմ, ինչու չէ:

— Ինչու յետաձգել. տասնութ տարեկան դառնալուդ պէս դու կարող ես ծխական դպրոցի ուսուցիչ լինել:

— Ալդպէս վաղ, զարմացած հարցրեց Զէմսը:

— Ես ճանաչում եմ շատ երիտասարդներ, որոնք այդ հասակում ուսուցիչ են դառնել, ասաց մայրը: Բայց 'ի հարկէ մեր ալժմեան վիճակում գլխաւոր բանը հողադործութիւնն է, որով միայն կարող ենք ճարել մեր հացը:

— Ի հարկէ, ի հարկէ, ոտ ու ձեռք էլաւ Զէմսը, և տեսնելով կովերի կիթ դալը վազեց դէպի նրանց:

Նատ եռանդ և կամքի ուժ ունէր այդ տաղանդաւոր երեխան: Նրա համար «չեմ կարող, իմ բանը չէ» բառերը գոյութիւն չ'ունէին: Նրա հաստատամտութիւնը երեւմն իսկ հասնում էր մինչև յամառութեան:

Մի անգամ էդվին անունով մի տղակի հետ գընաց մարագը հաւերի ձու ժողովելու համար: Էդվինը մի ալլանդակ փոքրիկ ձու գտաւ:

— Կուզես ես այդ ամբողջովին կուլ տամ, ասաց Զէմսը:

— Օհօ, սա էլ բան ասաց, բացականչեց էդվինը. ձուն թէպէտ փոքր է, բայց պկումդ կը մնար:

— Չի մնայ, և այդ ասելով ձուն կոխեց բերանը: Ընկերը ծիծաղեց:

— Տես, կեղևով կուլ տուր մի անգամից, ապա թէ ոչ կը խեղդուես, կոչեց նա:

Զէմսը պինդ սեղմեց շրթունքները, բայց ինչպէս
եղաւ, չըխկացրեց ատամները, ձուն ջարդուեց և դեղ-
նուցն ու սպիտակուցը թափուեց չարաճճիկ կոկորդում, ե-
րեսը կարմրեց աչքերը դուրս դառան:

Էդվինը աղաղակեց ՚ի նշան յաղթութեան, երեա-
կալելով որ Զէմսը մեռնում է: Խոկ նա վազեց տուն
մի կտոր հաց առաւ բերանը ծամեց ու կուլ տուեց
ձուի հետ:

— Կերայ, կոչեց նա յաղթական ձախով:

Էդվինը ծիծաղից թուլացաւ: Քառասուն տարուց
յետու երկու բարեկամները առանց ծիծաղի չէին կարող
լիշել Հարֆիլդի ալդ արածը: Երբ մարը իմացաւ ալդ
բանի մասին՝ ժպտաց և ասաց. «Ալդպէս էլ չարաճճի»...
Նա գոհ մնաց, որ որդին կարողացաւ իր տսածն
անելու, որովհետև նրա գլխաւոր հոգսն ալն էր՝
որ երեխալի մէջ զարգացածնէ հաստատակամութիւն նոլն
իսկ մանր բաններում: Շատ անգամ ասում էր Զէմսին և միւ-
ներին. «Զանացէք հասնել ալն բանին ձեր կեանքի մէջ,
որ ձեր խօսքը՝ կամենում եմ, նշանակէ կան եմ: Ոչ
մի դժուարութեան առաջ մի նահանջէք. աշխատեցէք յաղ-
թահարել նրանց ձեր սեպհական ոլժերով. բացի Սատու-
ծոլ օգնութիւնից ուրիշ ոչ մէկի օգնութեան երբէք մի
լուսաք. և ապրեցէք ալնպէս, որ ձեր խօսքն ու դոր-
ծը անբաժան լինին: Երեխալութիւնից վարժուեցէք
հնազանդուել մեծերին, որպէս զի ապագալում դուք էլ
կարողանաք ուրիշին հնազանդեցնել»:

Զէմս Հարֆիլդի մանկութեան ժամանակ մի դէպք
էլ պատահեց, որ ցոլց է տալիս նրա բնաւորութեան յատ-
կութիւնը և կամքի հաստատութիւնը: Նա ինն տարեկան
էր. դպրոցում նստած էր իր հօրեղբօր որդու Հենրիկ
Բօլտօնի հետ մի կարգում: Մի անգամ երկուսն էլ կար-
գեց ելան, սկսեցին փսխալ ու ծիծաղել: Ուսուցիչը՝

իմանալով որ երկու չարաճճիները անպատճառ ուզում
են մի բան անել, վախացրեց նրանց:

— Զէմս և Հենրիկ կոչեց նա, հաւաքեցէք ձեր
գըքերը և տուն գնացէք:

Ալդ հրամանը շփոթեցրեց երկու երեխաներին. նրանք
իրար երես նայեցին, բայց տեղերիցը չը շարժուեցին:

— Էլ միք ուշացնիլ. շնոր, կրկնեց ուսուցիչը, կո-
րէք դուրս:

— Այս ըռպէին կը գնամ, պատասխանեց Զէմսը, և
իսկոյն կրակ կտրած դուրս թռաւ գնաց տուն և մտիկ
իսկ չանելով մօրը՝ կրկին վագէվազ յետ դարձաւ ընդա-
մենը երեք չորս ըռպէուայ մէջ, մտաւ դասատուն հւա-
լով ինչպէս շոգիի անօթ և հանգիստ կերպով նստեց իր
տեղը:

— Զէմս Հարֆիլդ, կոչեց, իբր զայրացած ուսուցիչը,
դուք չը լսեցիք միթէ, որ ես ձեզ հրամայեցի տուն գը-
նալ:

— Ես արդէն տանն էի, պարոն, յալտարարեց Հար-
ֆիլդը:

— Ինչպէս, թէ տանն էիք:

— Այս, պարոն, գնացի և վերադարձայ. չէ որ դուք
չը հրամայեցիք մնալ ալնտեղ:

— Դէ լաւ ուրեմն մնացէք ալնտեղ, ասաց ժպտա-
լով ուսուցիչը, տեսնելով որ աւելի լաւ է կատակի տեղ
գնել ալդ բանը:

Զէմսը մնաց դասարանում և, ՚ի հարկէ, իրան
այնպէս պահեց, որ էլ հարկ չը կար նրան տուն ու-
ղարկելու: Խոկ Հենրիկը՝ չը լինելով հնարագէտ Զէմսի
չափ, ճիշտ կատարեց ուսուցչի հրամանը, մի քիչ մնալով
դպրոցի մօտերքը գնաց տուն և ալնտեղ մնաց:

Զէմս Հարֆիլդը աչքի էր ընկնում իր հաստատ
բնաւորութիւնով. նա ծիծեռնակի պէս ուրախ էր, անդադ-

բում ինչպէս ծղրիտ և պարզահոգի ինչպէս մալիսեան առաւօտ:

Մեր հերոսի 11 տարին լրացաւ, իսկ Թոմիի 20-ը՝ Տեղական թեմական հոգաբարձութիւնը կարգադրեց, որ Օգիում հասարակութեան հաշուով շինուի մի մեծ դըպրոց, իսկ հին շէնքը ծախել Թոմի Հարփիլդի վրայ չընչին գնով: Թոմին ու Զէմսը իրանց հօրեղբօր որդկերանց օգնութեամբ քանդեցին դպրոցի շէնքը և բերին իրանց խրճին կցեցին. այդպիսով մօրը համար շինուեց առանձին, հանգիստ օթևան: Թոմին վաղուց այդքանի մասին մտածում էր, որովհետեւ արդէն բոլոր երեխաները հասել էին և նա պատրաստվում էր գնալ օտարութեան աշխատանքի: Ուրեմն կարելի է երեակալել՝ թէ ինչպէս նա ուրախացաւ, երբ ուզածը կատարուեց:

VII

— Զէմս, այժմ դու ես մնում ազարակի կատարեալ տէրը, որովհետեւ ես ուղեւորվում եմ Միջիգան գաւառը, յայտնեց մի անգամ Թոմին իր կրտսեր եղբօրը, երբ վերադարձաւ Կլեելանդից, ուր նա վարձով հունձ էր անում. ես այստեղ ինձ համար գործ եմ գտել:

— Ինչպէս, ուր, ինչու համար, անհամբերութիւնով ուզեց իմանալ զուարթ երեխան:

— Ես գնում եմ Միջիգան գաւառը, կրկնեց երէց եղբայրը, այնտեղ էլ աւելի յետ ընկած տեղ է, քան մեր Օրանք գետավիլ. ինձ վարձել են անտառը մաքրելու, և ես ամսական ստանալու եմ 12 դենար:

— Ե, լաւ, միթէ քեզ ամսական այդքան փող կը տան պատախանեց Զէմսը:

— Քեզ ասում են, որ ամսական 12 դենար պիտի ստանամ. Էլ ի՞նչ ես ուզում գործը, ճշմարիտ է, ծանր է՝ առաւօտուանից մինչև ուշ երեկոյեան պէտք է բանեմ, բայց զբա փոխարէն մենք կարող կը լինինք մեր մօր համար քարաշէն տուն կառուցանել:

— Ահա այդ լաւ բան է. ուրախ ուրախ ասաց Զէմսը: Մայրը թէպէտ ցաւում էր Թոմիի ամբողջ կէս տարով հեռանալու վրայ, մանաւանդ որ պիտի գնար այնպիսի յետ ընկած տեղ, այնու ամենայնիւ գո՞ն էր որդու ջանասիրութեան համար:

— Մայրիկ, մի ցաւիր, փայփայում էին նրան երկու որդիքը. կէս տարին այնպէս շուտ կանցնի, որ իսկի չես էլ իմանալ. սակայն դու կունենաս տախտակամած իսկ տուն և ոչ փայտաշէն խրճիթ, քիչ բան է, ախր 12 տարի է որ դու այդպիսի տան մէջ չես ապրել:

— Այդ շատ լաւ կը լինի, նկատեց մայրը ժպտալով, այնպէս լաւ կը լինի, որ չեմ հաւատում թէ այդ բանը գլուխ գար:

— Անպատճառ գլուխ կը գալ, վճռեց Թոմին: Մօրը այնպէս էր թւում թէ յաւիտեան զրկուելու է անդրանիկ որդուց, այնքան նրա սիրտը ցաւում էր երբ միտն էր ընկնում, որ ամբողջ վեց ամիս Թոմին օտարութեան մէջ էլինելու և այդ բոլոր ժամանակը չը պիտի տեսնէ նրա սիրելի գէմքը, չէ լսելու նրա թանգագին ձայնը, որ նա պիտի զրկուի իր քաջ օգնականից և խորհրդատու ընկերոջից: Ոչ պակաս մօրից Զէմսն էր ցաւում. երկու եղբայրներն իրար հոգու պէս էին սիրում: Թոմին պարծենում էր իր փոքրիկ Զէմսով, իսկ Զէմսը յարգում էր Թոմիին և հաւատում նրա ամեն մի խօսքին: Չը նայելով բաժանուելու դառնութեանը, եղբայրները զգուշութեամբ ծածկեցին իրանց զգացմունքները մօրից ու քոյրերից և ուրախ էին երեսում.

մինչեւ անգամ և այն օրը, եղբ Թոմին պիտի ճանապարհ ընկնէր դէպի հեռու տեղ: Առանց նրան «փայտաշէն խրճիթը» կարծես դատարկ էր, բայց Հարֆիլդի ընտանիքը ցաւերով և աշխատանքով ամրապնդած չը կորցը իր հոգու արիութիւնը և առաջուայ պէս տանում էր իր լուծը:

Զէմսը բոլորովին գոհ էր իր աշխատասիրութիւնից. նա վարժուել էր վաղ մանկութիւնից Արսելիր մօր բերնից թէ՝ անտառում բնակուելը չափազանց օգտակար է իրանց պէս չքաւոր մարդկանց համար: Ոյնտեղ չը կային ոչ գայթակղեցուցիչ բաներ, ոչ հարուստ հարեւաններ, որոնք նախանձ շարժէին, իսկ նրանց աղքատ կեցութեանը պէտք չը կար առանձին աւելորդ ծախսերի: Եւ ի՞նչ բանի պիտի ծախսէին փողը. ամեն բան տնալին էր, իրանց սեպհական աշխատութիւնով և հոգսով պատրաստած:

Զարմանալի չէ որ Զէմսը ծնելուարից մեծ քաղքներ, կամ թէ գիւղեր չը տեսած և ունենալով հասկացողութիւն բացի իրանց անտառային կեանքից մի այլ կեանքի վրայ, իրան բոլորովին բաղտաւոր էր համարում: Սև օրերը անցել էին Հարֆիլդի տան գլխով, երբ նա դեռ փոքր էր, այժմ այլ ևս նրանք չը կային և ընտանիքը ապրում էր, կարելի է ասել, կատարեալ ուրախութեան մէջ, համեմատելով հօր մահուանից լեռոյ առաջին տարիների հետ: Համբարձումը գոյն ու զա գոյն ոչ մասն ըմբոն առներ չի բնիզրեմ առարդը ուներին մէջ սիր արու ուղարք նվազարք այլի նույն ուղարք ունեման պահանձնութիւն ունի առաջարկական նույն ազգութիւն առաջ առաջ ազգական ուղարք ունեման պահանձնութիւն ունի առաջարկական նույն ազգութիւն



VIII

— Մայրիկ, մայրիկ, Թոմին գալիս է, աղաղակում էր մի առաւոտ Զէմսը, դիմելով դէպի լուսամուտը և վեր-վեր թուշելով կանգնած տեղը. յետոյ դունչը քամի մտածի պէս սկսեց վագել փայտաշէն խրճիթը շրջապատող ալգու միջով. այդ միջոցին տիկին Հարֆիլդը աշխատում էր իր նոր սենեակում. նա բարձրացնելով գըլուխը նաևց լուսամուտից. առջի բերան նրան այնպէս թուաց թէ իր փոքրիկ որդին խելքը կորցը է, այն աստիճան նա բղաւում և ցատկուտում էր վագելիս: Վագել դէպի գուռն ու բանալը նրա համար մի բոպէի բան էր: Եւ ի՞նչ, իրաւ որ հեռուից, անտառի միջի ճանապարհով գալիս էր Թոմին. Թոմին, որին վեց ամիս շարունակ այնպէս կարօտով սպասում էր ամբողջ ընտանիքը: Եղբայրներն իրար հասնելուն պէս մէկ մէկու ճտով ընկան. ապա ձեռք ձեռքի տուած գնացին դէպի տուն՝ խօսելով իրար հետ և անդադար ծիծաղելով:

— Ոէհ, Թոմի մի բան ունիս, որ մայրիկի համար քարաշէն տուն կառուցանենք. Զէմսի առաջին հարցումներից մինն այս եղաւ:

— Ի հարկ է, կայ. տուն կը կառուցանենք, իսկ խըրճիթը հաւաբուն կը դարձնենք, պատասխանեց ուրախ կերպով Թոմին:

— Լաւ հաւաբուն կունենանք:

— Ուրիշ կերպ չի կարելի. լաւ տանը լաւ էլ բակի շինութիւններ են պէտք, կատակով ասաց մեծ եղբայրը:

Այդ միջոցին, տիկին Հարֆիլդը մոռանալով իր տարիքը և թէ սովորական ինքն իրան զսպելը, աղջըկերանց հետ շտապ շտապ վագում էր իրանց տնակից դէպի անտառը տանող շաւիղով: Նա ուրախութիւնից չէր զգում իր քայլուածքը... Այժմ գարձեալ ամբողջ

ընտանիքը միասին էր: Խետան արդէն հասած աղջկէ էր 23 տարեկան, թումին 22: Այդ առաւօտը բախտաւոր առաւօտ էր Հարֆիլդի ընտանիքի համար . . .

Նրանք հայրական խրճիթը հասնելուն պէս դեռ չէին նստել մօր շուրջը մէկ էլ թումին հանեց գրպանից բռով ոսկի դրամներ և թափեց մօր գոգը:

— ԱՌ, մայրիկ, ասաց նա յաղթական ժպիտով, ահա քեզ դրամ քարաշէն տան համար:

— ԱՌ ինչքան ոսկի է, կոչեց Զէմսը, հիացած նալելով անակնկալ գանձին, որ թափուեց մօր ծնկների վրայ: Նա իր կեանքումը չէր տեսել միանգամից ալդչափ ոսկէ դրամներ: — Թո՛մի, այդ ի՞նչքան կը լինի, հարցրեց նա:

Ուղիղ ՇՌ գենար:

— Եւ այդ բոլորը քո՞ աշխատածն է:

— Բոլորը մինչև յետին նաքարակիտը:

— Մայրիկ, ի՞նչ ես սուս կացել, հարցնում էր մօրը անհանգիստ Զէմսը:

Յիրաւի մայրը լուս, ինչպէս արձան նստած էր անշարժ: Նրա ձայնը բռնուել էր զգացմունքների լորդութիւնից, բայց պահում էր արտասուքը, որ չը խանգարէ ընդհանուրի ուրախ տրամադրութիւնը: Տիկին Հարֆիլդը իրան շտա զսպեց, բայց վերջապէս երկար չը կարողացաւ համբերել, խոշոռ խոշոռ արասուքի կաթիւներ սկսեց թափուել աչքերից իր գոգն ածած ոսկու վրայ: Զէմին այն էր ուզում էր մի սրտանց ամուր բղաւել «ուրաա», բայց մօր արտասուքը խօսքը բողազումը թողին:

— Մայրիկ, երբ ձեր նոր բնակարանը շինեմ, ես էլի պէտք է գնամ Միջիգան, որովհետև այնտեղ չափից դուրս շատ գործ կայ: Ես պէտք է գնամ բոլորը վերջացնեմ:

— Արա, սիրելիս, ինչպէս գիտես, ասաց արտասուալի աչքերով ժպիտը երեսին մայրը: Տունը առանց քեզ էլ

կարող ենք գլուխ բերել. Ես կը վարձեմ պարոն Թրիթին. նա ալստեղի ամենալաւ հիւսն է:

— Հիւնալիէ, մենք միասին կը սկսենք և կը վերջացնենք բոլորը:

Զէմսը յատնեց, որ նա էլ կամենում է անպատճառ մասնակցել մօր համար շինուելիք տան զործում:

Մեծ եղբայրը յատնեց, որ առանց Զէմսի բանը գլուխ չի գայ. ով պէտք է պատրաստէ փոքրիկ տախտակներն ու գամէ, կիր և աւազ կը:

— Մենք միասին կը գնանք կլեելանդ զանազան բաներ գնելու, ասաց Թումին գրկելով եղբօրը:

Ի՞նչպիսի ուրախութիւն էր երեխայի համար, երբ կլեելանդից վերադարձին Թրիթ հիւսն ու Թումին սկսեցին տան շինութիւնը, որի համար Զէմսի ծառայութիւնը շատ պէտք եկաւ. վարպետը շարունակ փոքրիկ բանուորին գովում էր: Մանաւանդ խիստ ճարպիկ կերպով Զէմսը խցում էր գերանների արանքի բացուածքը և այն աստիճան կատարելութեան հասցըց, որ մեծ եղբօր ձեռքի տակ վարժուեց գեղեցիկ կերպով ոանդալ տալ տախտակները:

Ատախծագործութիւնը շատ գիւր եկաւ երեխային, և նա ինքն իր մէջ վճռեց վաղ թէ ուշ այդ արհեստով իր հացը հայթայիթել:

Վերջապէս տունը բոլորովին աւարտուեց, ընտանիքը փոխադրուեց նոր բնակարանը: Թումին գնաց Միջիգան, իսկ Զէմսը գլխովին անձնատուր եղաւ տնային պարապմունքին:

— Մայրիկ, ասաց նա մի անգամ մօրը, աւելի էլ ոյժ չ'ունենալով թագցնել սրտի ծածուկ խորհուրդը, ես մտածել եմ թէ ինչ միջոցով պէտք է իմ հացս ճարեմ:

— Ի՞նչ միջոցով, հարցըց մայրը:

— Հիւսն կը դառնամ:

— Ե՞ս սիրելիս, մի՞թէ կարող ես պարապել դրանով. դու տանը մինչև վիզի խրուած ես դործերի մէջ, նըկատեց մայրը:

— Փորձի համար մի քիչ գործ կը վերցնեմ դաշտային աշխատանքից ազատ ամիսներում. կարելի է քիչմիչ էլ փող ճանկեմ. այս մասին ես կը խօսեմ վարպետ Թրիթի հետ:

Ս.լդ խօսակցութիւնից յետոյ մի շաբաթ չէր անցել՝ Զէմսը եկաւ մօրը մօտ բոլորովին ուրախացած:

— Մայրիկ, ախր ես գործ եմ գտել վարպետ Թրիթի մօտ. նա ինձ պատուիրել է ռանդել մի ամբողջ դէզ տախտակ, ամեն մինը մի նաքարակիտի, գործի տւարտման համար էլ ժամանակ չի նշանակել: «Ես, ասում է, տեսել եմ, ինչպէս դու տանը կարգին բանում էիր, յոյս ունիմ թէ ինձ համար էլ կաշխատես»: Հրամայել է առաւտեսն գնալ: Մի ամսից աւել ես այդ գործի ետելից քաշ չեմ գալ, իսկ փողը գրալանս կը գնեմ: Սիրելի մայրս մի մտածի է՛, չէ՞ որ այդ կը լինի իմ առաջին աշխատանքի պատուղը:

— Դեռ վաղ է քեզ համար փող աշխատելը, քաղցրութեամբ նկատեց մայրը, այնու ամենալիւ ես ուրախ եմ, որ դու քեզ համար գործ ես գտել: Ե՞րբ պէտք է գնաս:

— Եգուց առաւօտ, որքան կարելի է վաղ-վաղ:

— Հը տես, քեզ չը յոգնեցնես աւելորդ աշխատելով: Երկու—Երեք ժամը շատ էլ է տախտակ ռանդելու համար:

— Ինչպէս կարելի է, ես ուզում եմ վեց ժամ անգաղար ռանդել: Երկու ժամում շատ բան կանես: Վարպետ Թրիթը ով գիտէ կը ծիծաղէ վրաս ասելով. «Երեկ խեղճ երեխան մօրը կարօտացել է»:

— Ես կարծում եմ վարպետ Թրիթը չի հակառակի այն բանին, որ քո հասակի երեխաներին վնաս է մինչ յոգնութիւն բանելը: Ես համոզուած եմ նոյնպէս, որ նա

այդ գործն էլ գիտմամբ է հնարել քեզ համար. Հօ գուգիտես թէ ինչպէս նա քեզ սիրում է: Բայց դու, Զէմս, չափազանց ինքնասէր ես և եթէ արձակ թողնեն դու պատրաստ ես մինչև ուշաթափ լինելդ աշխատել:

— Ես էգուց կը վերտպառնամ տուն երկու կամ երեք ժամից յետոյ, միայն այն էլ այն դիպուածում, երբ ձեռքս վնասած լինիմ կամ երբ հեռացնեն գործից, խիստ և վճռողաբար վերջացրեց խօսքը Զէմին:

Միւս առաւօտ, պատանի հիւսնը զարթեց մտքում հաստատ դրած, որ վարպետ Թրիթի ատախծագործի գործարանում օրական վեց ժամից պակաս չը պիտի բանէ և եթէ մայրը տեսնէր նրա խոհուն աչքերը և ամուր սեղմած շրթունքները, կը հասկանար՝ թէ Զէմսին անկարելի էր համոզել, որ խնայէ իր ոչժերը:

Վարպետ Թրիթը արգէն սպասում էր իր նոր բանւորին, որին նա հանդիպեց հետևեալ խօսքերով. «Վաղ զարթնող՝ որսի գնացող թոշնակի համար մի փոքրիկ որդն էլ մեծ բան է» և նշան արաւ ամբողջ շեղջ տախտակների վրայ, որոնք պատրաստուած էին նրա համար: Զէմսը իսկոյն վրայից ձգեց բաճկոնակը, կրծկալը և միայն շապկանց ու կոշտամազ վարտիքով մնաց: Գործի էր եկել նա բոքիկ, որովհետև կօշիկներ հագնելը Նարֆիլդի ընտանիքի համար կարելի էր միայն ձմեռժամանակ: Զէմսը թևքերը յետ ծալեց, վերցրեց ռանդան

և սկսեց ռանդել: Խըրաքանչիւր տախտակը 12 ռտնաչափ երկայնութիւն ունէր և մինչեւ նրանցից մի տասը ռանդելը՝ ով գիտէ ինչ մըտքեր էին անցնում նրա գըլխում, քանի նորանոր ծրագիրներ էին լղանում նրա



ուղեղում: Քրտինքը ոլոռն—ոլոռն թափում էր անխոնջ աշխատաւորի ճակատից, իսկ նա շարունակ ռանդում էր, առանց դադրելու: Վերջապէս արեգակը խոնարհեց դէպի անտառի ծառերի ետեր:

— Վարպետ Թրիթ, ձայն տուեց Զէմսը, Հարիւր տախտակ պատրաստ է, խնդրեմ համարէք:

— Անկարելի բան է, եղբայրս, Հարիւր տախտակը չի կարելի այդպէս շուտ պատրաստել:

— Համեցէք ստուգեցէք, իմ հաշուածովս ճիշտ Հարիւր է:

— Նատ ապրիս, ուղիղ է, յայտնեց վարպետը, Համբելով տախտակները: Բայց, հոգիս, դա քո հասակի բանւորի ոլժից վեր է: Խորհուրդ եմ տալիս քեզ վաղը միայն դրա կէսի չափ ռանդել:

— Բայց շատ էլ յոգնած չեմ, ասաց Զէմսը:

— Բանն նրանում չէ, որ դու հիմա չես յոգնել, կարող է լինել, որ 30 տարուց լետոյ այս օրը թանդ կը նստի քեզ համար: Ահա ինչից պէտք է վախենալ:

— Եթէ 30 տարի պէտքէ սպասենք, էլ աւելորդ էլ է խօսել յոգնածութեան մասին, ասաց ծիծաղելով Զէմսը:

— Ալո՛ ալդ ճշմարիտ է, ալդ այդպէս է, բայց այնու ամենալիւ մարդ իր ուժերը պիտի խնայէ, պնդում էր իր ասածը Թրիթը, հոգեպէս զմալելով եռանդուտ մանկան վրայ: Ալժմս, եղբայր, հարկաւոր է հաշիւ տեսնել. 100 տախտակի համար քեզ կը հասնի 100 կենտ. մեծ աշխատանք է ալդ քեզ պէս տղալի համար. դէ՛, ստացիր փողերդ:

Ալդ ասելով՝ Թրիթը համբեց 100 կենտ, որ մի դենար է անում, դարսեց գլանաձև կերպով և յանձնեց Զէմսին, որը հպարտութիւնով դրեց բաճկոնակի գրպանում իր առաջին վաստակը:

Ուրախութիւնից իրան մոռացած թռաւ երեխան

դէպի տուն և բարձրաձայն ինքն իրան կը կնելով՝ 100 կենտ մէկ օրում, հապա փորձեմ ԴՅ օր բանել, ինչպէս ալսօր, այն ժամանակ ես վաստակած կը լինիմ այնքան որքան Թոմին կէս տարում: «Ուրաա» . . .

Ապագալի մեծ մարդը, բոբիկ, կոշտ վարտիքով, բոլորովին կարմբած աշխատելուց, համարում էր իրան այս ըոպէիս ամենաբախտաւոր մարդը աշխարհիս երեսին:

— Ահա քեզ, մալրիկ, այս բոլորը քոնն է, կոչեց նա ներս վազելով և թափելով մօր գոգը պղնձէ դրամների շեղջը:

— Ինչպէս, այս բոլորը իմս է, ինչքան է, հարցըց մալրը:

— Ալստեղ իմ մի օրուալ աշխատանքս է՝ 100 կենտ:

— Դու ամբողջ մի դենար ես վաստակել:

— Ալո՛, 100 տախտակ եմ ռանդել:

Մօր լեզուն կապուել էր, ինչպէս այն օրը, երբ Թոմին բերաւ նրա համար ԴՅ դենար: Զգացումների յորձանքները խեղդում էին նրա ձայնը և նա մի բառ անգամ չէր կարողանում արտասանել: Եթէ անդրանիկ որդու հոգատարութիւնը և ուշագրսւթիւնը լացացրին նրան, ապա ինչ պիտի զգար նա ալժմ: Գիրկը բանալով նա պինդ սեղմեց կը ծքին իր սիրելի Զէմսին և լուռ համբուրում էր նրան: Երբ սիրալ լիքն է, էլ բառեր հարկաւոր չեն:

IX

Զմուռն մօտ Զէմսը խիստ յաջողութիւնով վերջացրեց իր գործը հիւսն Թրիթի մօտ և կարող էր աւելի շահաւետ պատուէրներ յանձն առնել, բայց որովհետեւ ձմեռ ժամանակ շինութիւններ կառուցանելը ամեն տեղ

դադարեց, ուստի երեխան սրտանց կպաւ դպրոցական պարապմունքներին, ջանալով որ մի օր էլ է յետ չը մնալ դասից:

Երբ գարունը եկաւ, տիկին Հարֆիլդի մօտ գալով վարպետ Թրիթը յատնեց, որ ինքը վարձուած է նրա ազգական Բօյտօնի համար մարագ շինելու և առաջարկում է Զէմսին գնալ իր հետ որպէս ընկեր վերցրած գործում: Աւելորդ է ասել՝ որ Զէմսը ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը, բայց մեծ եղաւ իր զարմանքը, երբ իմացաւ թէ՝ տուն կամ մարագ շինելու համար նախ քան գործի ձեռնարկելը, պէտք է յատակագիծ նկարել իմանալ: Բայց և այնպէս Թրիթը յանձն առաւ նրան այդ բանն էլ սովորեցնել:

— Առանց յատակագծի, հոգիս, բանուորին չի կարելի մի քայլ անել:

— Միթէ, խորամանկ ժպիտով հարցրեց Զէմսը, ապա ես ի՞նչպէս եմ կթում իմ կովերը առանց յատակագծի:

— Ասենք թէ առանց յատակագծի, բայց ոչ առանց կարգ ու կանոնի, նկատեց Թրիթը: Իսկ յատակագիծը միւնոյն կարդ ու կանոնն է: Փորձիր կովերին չը կթել ինչպէս հարկն է, կամ իր ժամանակին չը կթել նրան, կաթը իսկոյն կ'սկսի նուազիլ: Փորձիր արտում պէտք եղածից երկալատիկ աւել կամ պակաս ցանել՝ քան թէ որքան հողն է պահանջում, դու ոչինչ չես ստանալ, և այդպիսով կամ հողը ոլժից կը ձգես և նա ոչինչ չի արտադրի, կամ թէ չէ հունձը յարդ կարտադրէ և դու կը ստանաս միայն չնչին դարման: Ամեն բանում, եղբայր, հարկաւոր է կարգ: Եթէ դու առաջուց չը պատրաստես տան յատակագիծը և հաշիւչանես թէ որչափ քեզ հարկաւոր կը լինի ատախծ, մեխ, տախտակ և այլն, այն ժանակ դու ոչ մի շինուածք չես կարող գլուխ բերել:

Մի քանի երեկոյ իրար ետևից Թրիթը գծագրութեան և ճարտարապետութեան դասեր էր տալիս Զէմսին և նա ուշի ուշով զբաղվում էր կերպ-կերպ շինութիւնների մակարդակներ յօրինելով:

Վերջապէս նրանք աւարտեցին մարտի շինութիւնը և Թրիթը Զէմսին վճարեց 20 դենար, ասելով, որ նա բոլորովին բարեխղճօրէն է վաստակել այդ գումարը:

Զմեռուայ դասերն ուսումնարանում նոյնպէս զուր չ'անցան փոքրիկ Հարֆիլդի համար. նա այդ միջոցում բաւական զարգացաւ. սովորեց տեսակ—տեսակ տեղեկութիւններ, ուշադրութեամբ կարդալով ամեն ձեռքն ընկած դասագիրք, որ երբեմն ապուշ էր կտրեցնում նոյն իսկ իր ուսուցչին: Տանը յատակի վրայ վառարանի առաջ ամբողջ ժամեր պառկած մի քանի շաբաթ զբաղուած էր Ադամսի թուաբանութեան ընթերցանութիւնով և նրա մէջ եղած խնդիրների լուծումով: Այնպէս որ նա ամբողջ գերքը անգիր գիտէր ծայրէ ցծայր: Բացի Ադամսի թուաբանութեան դասագրքից, Զէմսը ունէր էլի մի ուրիշ սիրելի գերք, այն է՝ «Ոօբինզօն Կո-իւզօի արկածները». նա գլխովին չէր կարողանում յետ կենալ այդ գըքից իր ազատ ժամերում. տասն անգամ կարգացել էր և ամեն անգամ էլ ասելով մօրը թէ այդպիսի հետաքրքիր գերք աշխարհում չի կարող լինել:

Ընթերցանութեան միջոցներին նրա մշտական ընկերակիցն էր իր մօրաքրօջ Ռոդի Ուլիւեամ Բօյտօնը: Այդ երկուսը խնդրել էին ուսուցչից, որ ձմեռը դպրոցի մի դասարանը ընթերցարան շինեն և ուր նստելով բոլոր ազատ ժամանակ կարդում էին իրանց սիրած գըքերը:

Մօր հովանաւորութեան տակ անցուցած վերջին երկու տարիները մեծ օգուտ տուին Զէմսին թէ բարոյական և թէ մարմնական զարգացման կողմից: Նա

շատ մեծացաւ. ամրացաւ և դառաւ 14 տարեկան հասակում մի գեղեցիկ պատանի այդ բառի բուն նշանակութեամբ. ոչ ոք նրանից արագ չէր շըջում ու վագում. ոչ ոք չէր կարող նրա պէս ճարպիկութեամբ և բարձր ցատկել: Ընդհանրապէս՝ նայելով Զէմսի կազմուածքին, ձևերին, իրան պահելում և պատշաճ խօսելու շնորքին, նրան կարելի էր 18 տարեկան երիտասարդ մարդու տեղ ընդունել քան թէ 14 տարեկան պատանու: Նա վայելում էր բոլոր գողթականների լարգանքը. նրա՝ որպէս պատուական հիւսնի, ճարտար գծագրողի և փորձառու երկրագործի փառքը և համբաւը տարածուել էր շատ հեռու տեղեր և ամեն կողմից զանազան գործակատարութիւնների հրաւերներ էր ստանում: Մալրն ակամայ պարծենում էր իր Զէմսով, սակայն յաճախ նա մտատանջվում էր՝ համոզուած լինելով թէ այդ վառվուուն և ընդգարձակ գործունէութեան փափազող բնաւորութեան համար խիստ անձուկ է «փալտաշէն խրճիթը», անտառը և ընտանեկան նեղ շըջանը: Արծուիկը ճգնում էր սլանալ ծնողական բնից, նոր կեանքի նախագծեր էր ստեղծում նոր երկրներում, նոր մարդկանց մէջ: Մօրը վախ էին պատճառում փառասիրութեան այդ նշոյլները:

— Մի շտապիր, զաւակս, ասում էր նա յաճախ Զէմսին, երբ սա իրան յատուկ ոգեսրութեամբ հաղորդում էր նրան իր լուսերը ընտանիքի ապագայ փալի մասին: Մի շտապիր, Տէրը ինքը կը ցոյց տալ քեզ ճանապարհը գէպի նոր աշխարհ. սպասիր նրա հրամանին:

Եւ հնազանդ որդին, գոհ մնալով հիւսնի պաշտոնից, հոգատարութեամբ վարում էր տնալին գործերը և շարունակում իր մտաւոր զարգացումն ուսումնարանում:

X

— Տիկին Հարֆիլդ, զիտես, ես դարձեալ եկել եմ Զէմսի ետևից, ասաց մի օր գրայի գաղթական պ. Սմիթը, մտնելով «փալտաշէն խրճիթը». անանուխի քաղհանի ժամանակն է, իսկ ես առանց ձեր որդուն չեմ կարող այդ կատարել:

— Զէմսը ուրախութեամբ ձեզ կօգնէ պատասխանեց տիկին Հարֆիլդը. միայն կարծեմ այժմ նա խիստ զբաղուած է հանդում:

— Չի՞ կարելի արդեօք, որ գոնէ երկու—երեք օր գարինձ համար. այդ ինձ համար շատ բաւոկան է, պարաստ է արդէն քսան քաղհանող տղամարդ:

— Ալդքանը բաւական է, դուք կարող էք առանց Զէմսի էլ աւարտել:

— Աւելի լաւ է ասէք շափազանց շատ է, ասաց Սմիթը, սակայն առանց նրան ես ի՞նչ կարող եմ անել. նա նրանց ըոլորին իր կամեցածին պէս աշխատեցնում է:

— Այդ նոր բան է ինձ համար, նկատեց մպիտով տիկին Հարֆիլդը:

— Ես ձեզ ասում եմ, այդ ճիշտ է. պէտք է տեսնէք ինչպէս նա կառավարում է բանուորների խումբը, անդադար զուարճացնում է նրանց, պատմում է զանազան պատմութիւններ, անեկդօտներ, իսկ ինքը բանում է ամենից ժիր ու ճարտար: Ուրիշները նրան շըջապալատում են, որ նրա խօսքերից ոչինչ բաց չը թողնեն. երեխաների խելքը գնում է նրա համար: Ես պատրաստ եմ նրան աւելի վճարել, միայն թէ նա համաձայնէր ինձ մօտ գալ:

— Լաւ, գնացէք, ինքներդ խօսեցէք այդ մասին Զէմսի հետ, ասաց մալրը. ես անձամբ դրա դէմ չեմ:

Սմիթը Օգիօ գաւառում յալտնի էր ինչպէս գըլ-խաւոր անանուխ հայթայթողը շըջակայ շուկաների հա-մար: Անանուխը պէտք է առանձին զգուշութեամբ քա-ղուի, ուստի հողագործը ծախս չէր ինայում գարնանը խմբերով տղաներ վարձելու համար: Զէմսը շատ անգամ էր բանել նրա պարտէզում, նա մեծ շնորհք ունէր զուարթ պա-հել ընկերներին այդ լողնեցուցիչ և տխուր զբաղմունքի մէջ. նա գրաւում էր նրանց իր գեղեցիկ խօսակցու-թեամբ, ներկայացնումէր զանազան ծիծաղաշարժ պատ-կերներ կամ Մօրգի աշխարհագրութիւնից զանազան նկարագրական հատուածներ էր պատմում, որի համար բանուորները կուրօրէն հնազանդվում էին Հարֆիլդին: Այս անգամ էլ նոյնը եղաւ: Հէնց որ Սմիթը Զէմսին բերեց, գործը կենդանութիւն ստացաւ, այնպէս որ երկու օրուան մէջ անանուխի ածուները բոլորովին մաքուր քաղհանած էին:

«Փայտաշէն խըճթից» տասը վերատ հեռաւորու-թեան վրայ՝ կեւելանդից ոչ հեռու, կառուցանվում էր մի մեծ շէնք կալաքարի գործարանի համար: Կապալառո- — հիւսն թըրիթը վեր առաւ այդ գործը, և այստեղ ի հարկ է առանց Զէմս Հարֆիլդի բան չէր լինի: Թը-րիթը հրաւիրեց նրան մասնակցել շինութեան գործում: Նրա քաղաքավարի վարմունքը, սրամտութիւնը և ա-ռաւել ես նրա ուրախ բնաւորութիւնը հիացրին գոր-ծարանատէր ծերունի Բերտօնին:

—Ե՞կ, իմ գործարանում աւագ բանուոր եղիր, ա-սում էր նա անդադար պատանի հիւսնին: Շատ սըր-տովս ես եկել դու: Ե՞կ, չես զզալ:

— Եթէ մալրս թող կը տայ, կը գամ, առանց նրա կամքի ես ձեզ մօտ տեղ չեմ ընդունիլ, պատասխանեց Զէմսը:

— Ալ, դրա համար առաւել սիրեցի քեզ, առաց ծե-

րունին, Հէնց այդպիսի մարդ է ինձ հարկաւոր:

— Ո՞րքան ժամանակ ես ձեզ պէտք կը լինիմ:

— Կուզես ամբողջ կեանքումդ ինձ մօտ կաց, կը պահեմ: Ամիսը տասնչորս գենար կը տամ, երկու գե-նարով աւելի քան միւսները. միայն թէ գաս:

Տասնհինգ տարեկան հասակում հիմնաւոր պաշտօն ստանալը, չը լսուած բան էր այն ժամանակուայ գաղ-թականների մէջ: Միթէ մեծ բան չէ տարեկան 168 գենար հաստատ ոռճիկը: Այսպիսի ձեռնտու գործի մա-սին մտածելիս Զէմսը ուրախութիւնից համարեա թըռչ-կոտում էր: Տուն գառնալուն պէս, ի հարկ է, նրա ա-ռաջին գործն եղաւ մօր կարծիքը հարցնել: Մօրը շատ գիւր չ'եկաւ համարձակ տղայի այդ նոր ձեռնարկութիւնը Բերտօնը թէպէտ բարի մարդ էր, բայց տգէտ էր և նրա տնա-լին կենցաղավարութիւնը քիչէրտարբերվում քաղաքի մանը առեւտրականների կացութիւնից: Բայց գլխաւոր բանը, որ գիւր չ'եկաւ տիկին Հարֆիլդին՝ այդ նոյն իսկ գործն էր, որովհետեւ կալաքարի պատրաստութեամբ պարապում էին ստորին կարգի բանուորները, և Ամերիկայում առ-հասարակ զգուանքով էին նայում այդ արհեստի վրայ: Սակայն կարիքը այդ չէ հարցնում: Համեմատաբար ա-ւելի բարձր վճարը նիւթական կողմից շատ օգտակար էր աղքատ բանուորների համար և քնքով մալրը սըր-տի կսկիծը թաքցնելով ստիպուած եղաւ իր համաձայ-նութիւնը տալու:

— Ճար չըկալ, ընդունիր այդ տեղը Բերտօնի մօտ, ասաց մալրը. միայն լաւ իմացած կենաս որ դու պէտք է լինիս բոլորովին այլ կերպ ընկերակիցների մէջ, որոնք նման չեն նրանց, որոնց հետ մինչ օրս ապրել ես: Դու կը լսես և կը տեսնես այն, ինչ օր մինչեւ այժմ ոչ լսել, ոչ տեսել ես քո հայրական տանը: Պահպանիր հոգուդ մաքրութիւնը և չը գրաւուխ նրանց վատ օրինակներով:

Դրանից լետոյ առաջի երկուշաբթի օրը Զէմսը
մտաւ իր նոր տիրոջ մօտ: Գործարանը անչափ ցեխոտ
էր ու կալաքարի բանն էլ բացի ցեխից ոչինչ չ'ունի:
Բերտօնը հիացմամբ ընդունեց Հարֆիլդին և իսկոյն
ցոյց տուեց մի խուց, ուր նա գիշերելու էր: Բայց ցեխոտ
գործով Զէմսը շատ չէր զբաղվում. բացի դրանից նրան
էին լանձնել գանձապահի և հաշուապահի պաշտօնը: Նա էր
ստանում զանազան անտառներից բերած կաւը, հաշեւ
տեսնում գնողների հետ և վճարում էր բանուորների
ոռոճիկը: Նա ամենից առաջ էր գալիս գործարան և ա-
մենից վերջը գնում: Ընդհանրապէս նա այնպէս էր վե-
րաբերվում գէպի այդ գործը, որ կարծես գործարանը
պատկանելիս լինէր իր հարազատ հօրը: Հասկանալի է,
որ ծերուկ գործարանատէրը անսահման կերպով հաւա-
տում էր նրան և ծնողական քնքշութեամբ էր վարփում
նրա հետ:

Մէկ անգամ մի նոր գաղթական մի բեռը կաւ
բերեց ասելով.

—Ստացէք, այստեղ 25 չետվերիկ է:

—Թող առաջ ես ինքս չափեմ, ապա փողը տամ,
հանգիստ կերպով պատասխանեց Զէմսը, որը հէնց ա-
ռաջին օրերից նկատել էր թէ ինչպէս ծերունի գործարա-
նատիրոջը շատ են խաբում կաւ կրողները: Ինչքան էլ գաղ-
թականը ուզեց ընդդիմանալ, սակայն Հարֆիլդը՝ որի աչքը
արգէն վարժուել էր բերած նիւթերի քանակութիւնն
իմանալ, պինդ կանգնեց իր ասածի վրալ թէ բեռը 22
չետվերիկ է և ոչ թէ 25: Բանը վերջացաւ նրանով, որ
վաճառողը խոստովանեց իր մեղը և միայն 22 չետվերիկի
փողն առաւ: Ծերունի գործարանատէրը պատահմամբ
ներկայ գտնուելով այդ հաշուետեսութեանը, աւելի ևս
սիրեց իր երիտասարդ օգնականին:

Զէմսը գործարանում բանեց ամբողջ ձմեռը, գար-

նան սկզբներում ինքը բախտը դուրս բերեց նրան այդ
կացութիւնից, որ շատ էլ նրա սրտովը չէր. նրա ա-
ռաջ բացուեցաւ նոր և աւելի լայն ասպարէզ:

Իսկապէս Զէմսի ազնիւ ինքնասիրութիւնն էր, որ
առաջին զարկը տուեց նրա կեանքի այդ կարեոր շրջա-
նին: Բերտօնն մի աղջիկ ունէր, որը բաւականին քա-
ղաքավարի էր գէպի իր հօր սիրելի բանուորը. բայց
մի անգամ օրիորդը վշտացաւ թէ ինչու Հարֆիլդը չա-
փազանց երկար է զբաղվում թուաբանական խնդիրներով
հասարակաց սենեակում կրակի մօտ: Քունն էր տանում
օրիորդի, թէ Զէմսի պարզ վարմունքը նրան վրդովեց,
միայն նա չամբերեց և երբ իր մայրն ու հայրը գնա-
ցին իրանց ննջարանը, աղջիկը մօտեցաւ թուաբանա-
կան հաշիւների մէջ խորասուզուած Հարֆիլդին և կոչեց.

—Ի՞նչ ես. վայր ընկել. վարձկան ասածները վա-
դուց պէտք է քնած լինին:

Զէմսը կատաղեց. սակայն լոեց, առաւ ճրագը և
համարեա՛ գուրս փախաւ սենեակից, գողալով սաստիկ
բարկութիւնից:

—Ես վարձկան ծառայ եմ, հա՛, ասում էր նա
ինքն իրան քալելով իր սենեակում: Ի՞նչպէս նա հա-
մարձակուեց ինձ այդպէս անուանել, մի աւելորդ ըոպէ
այստեղ չեմ մնալ. վաղը և եթ կերթամ: Ես նրան ցոյց
կը տամ, թէ ես ինչ ծառայեմ: Վարձկան ծառայ . . .
կարելի է հանաք է անում. բայց ես ծառաներ կունե-
նամ, իսկ ինքս ոչ մէկին ծառայ չեմ դառնալ:

Ամբողջ գիշերը Հարֆիլդը լուզման մէջ անցկաց-
րեց, ոյժ չ'ունենալով սառնասրտութեամբ տանել տան-
տիրոջ աղջկայ լանդուգն վարմունքը: Հէնց որ լուսա-
ցաւ՝ իր ունիմ չ'ունիմ հաւաքեց և գնաց Բերտօնի մօտ
հաշիւ տեսնելու:

— Ես ձեզանից գուրս եմ գալի, կարճ և պարզ
լայտնեց գործարանատիրոջ:

Եթէ ծերունու ճակատին ատրճանակ բռնէին,
հազիւ թէ նա այնքան շփոթուէր ինչքան այդ խօս-
քերից:

— Դուրս ես գալի, ի՞նչպէս, ինչու, կմկմաց նա:

— Այն, գնում եմ, պատճառ մոխրաջուր եփելուց
զզուել եմ:

Զէմս, այդ չէ, չեմ հաւատում կոչեց ծերունին, լու-
սահատուած:

— Ես ձեզ ասում եմ, որ այդպէս է, պատասխանեց
Զէմին, ոչ մի բառով չ'ակնարկելով իր կրած վերառու-
թանքի մասին:

Բանը նրանով վերջացաւ որ Բերտօնը հաշիւ տեսաւ,
իսկ Հարֆիլդը մօտ կէսօրին արդէն իրանց «փայտա-
շէն իրճթումն» էր:



XII



Ուն վերադառնալով Հարֆիլդը մօրը յանձնեց բո-
լոր իր աշխատանքը, բացի Խետավին տուած սննդա-
դրամից: Տիկին Հարֆիլդը շատ ուրախացաւ որդու
գալստեան վրայ, սակայն նրան տան ջում էր դարձեալ այն
միտքը, թէ արդեօք լետ է կացել որդին նաւաստի լինե-
լու մտադրութիւնից, թէ ոչ: Բայց և այնպէս այդ եր-
կուսի համար փափուկ հարցի մասին խօսակցութիւն չը
բացուեց և Զէմսն էլ շարունակեց առաջուան պէս յառաջ
տանել գիւղատնտեսական գործերը ագարակում:

Ամառուայ կիսին քեռի Ամօս Բօյտօնը պէտք է
խոտահարներ և հնձողներ վարձէր չորս ամիս ժամանա-
կով՝ մինչև նոյեմբեր: Յաղթանդամ, ճարսիկ և աշխոլժ
Հարֆիլդը Բօյտօնի համար թանդագին գիւտ էր: Եւ
նա ուրախութիւնով վերցրեց նրան իր մօտ բոլոր այդ
ժամանակ: Զէմսը չորս մարդու չափ բան էր շինում.
Նա զարթնում էր արշալուսին և վերջացնում պարապ-
մունքը արևի մալր մտնելիս: Ուսման և առհասարակ
գրքերի վրայ խորհելու ժամանակ չը կար. նրա շուրջը
գտնուած աշխատաւորների մէջ մտաւորական զբաղմունք-
ների կարեւորութիւն չէր զգացվում. տասնուվեց ժամ
գաշտերում կամ մարդագետիններում անցկացնելուց յե-
տով՝ իւրաքանչիւրի միակ փափաղը շուտով քնելն էր:
Այդպէս անցաւ ամբողջ չորս ամիսը և Հարֆիլդը տուն
դարձաւ 48 գենարով, որ տուեց մօրը:

Հարֆիլդը թէկ տանն էր, բայց առաջուանը չէր, այլ
մտայոց և մի տեսակ հոգսի մէջ ընկած էր երեսում. մայրը
իսկոյն նկատեց այդ և հասկացաւ բանի էութիւնը՝ իր որ-
դին էլի անձկութեան մէջ էր ծովի պատճառով, բայց լոեց:

Զմեռն այդպէս անցաւ, Զէմսը էլի ուսումնարան
էր լաճախում, բանում էր ագարակում, գարնան սկզբում
պարապմունք գտաւ Կլելանդում, իսկ դաշտալին գոր-
ծերը երբ վրայ հասան՝ յետ եկաւ կրկին «փայտաշէն
խրճիթը»: Անձկութիւնը, անընկճելի անձկութիւնը հան-
գըստութիւն չէր տալիս նրան: Վերջապէս յուլիսի սկզբ-
քին խեղճը այլ ևս չը համբերեց:

— Սիրելի մայր, ասաց նա, դու չես կարող հաւա-
տաւ, թէ ինչպէս սիրտս ծովը քաշում է, թոյլ տուր ինձ
նաւաստի լինել նաւի վրայ:

— Ուր կը կամենալիր արդեօք նաւել, Զէմս, հարցըց
մայրը:

— Ինձ համար ողջ մէկ է, միայն նաւէի և տեսնէի,
թէ ինչեր են լինում լոյս աշխարհում, ակամայ պատաս-
խանեց յուզուած Զէմսը:

— Զարմացք է, որ քեզ պէս լնդունակ տղան չէ կա-
րողանում իրան հաշիւ տալ՝ թէ արդեօք ո՞ւր պէտք է
գնալ ինքը: Եթէ սիրտս ճանապարհորդել ուզենար, ես
առաջուց կորոշէի թէ նախ գէպի ո՞ր կողմը պիտի ճա-
նապարհ ընկնեմ: Միթէ քեզ համար բոլորը մէկ է, եթէ
քեզ տանեն Եւրոպտ, Ասիա կամ Աֆրիկա:

— Ոչ, մայրիկ, բոլորը մէկ չէ, ես ամենից առաջ կը
ցանկայի նաւել Ատլանտեան ովկիանոսի վրայ:

— Այո՛, որ գեռ ճանապարհի կէսին չը հասած յետ
գառնալիք, վրայ բերեց տիկին Հարֆիլդը, քո հասակի
տղաները շատ անգամ չը գիտեն թէ, ինչ է իրանց ուզածը:

— Ես, մայրիկ, գիտեմ թէ՝ ինչ եմ ուզում, ձայն
տուեց տաքացած Զէմսը, ինձ խիստ հետաքրքրում է ի-

մանալ թէ ինչպէս են ապրում նաւի վրայ. եթէ դիւր
չի գալ, յետ կը դառնամ:

— Ե՛, եթէ կընկնես Միջերկրական կամ Զինական
ծովը՝ այդպէս շուտով չի լինիլ յետ գալը. և դու շատ
կափսոսաս, որ չը լսեցիր մօրդ խորհուրդին, վերջացըց
խօսքը տիկին Հարֆիլդ, որի ձայնը ակամայ դողաց:

Զէմին, հաւաքեց իր գուքը՝ մի փոքրիկ տոսլրակ,
շորեր և ճերմակեղին, եկաւ մօրը մնաս բարով ասելու:

Երկու օրուայ մէջ հազիւ 17 մղոն ճանապարհ գնա-
լուց յետով, երրորդ օրը կէսօրին նա արդէն կանգնած
էր կապոյտ լճի ափին:

Հարֆիլդն իսկոյն գնաց մօտ եղող նաւի վրայ և
դառնալով առաջին հանդիպած նաւաստիին առաջարկեց,
թէ կընդունեն արդեօք իրան իբրև թիավար:

— Սպասիր, հիմա նավալետը դուրս կը գայ ներք-
նատնից, կը հարցնես, պատասխանեց նաւաստին: Եւ
հէնց այդ միջոցին մի ձայն լսուեց.

— Նաւապետը գալիս է:

Նաւի ներքնատնից բարձրացող մի բան զռնչաց
ու ճռնչաց, ապա լսելի եղաւ, կարծես մի ահաւոր գա-
զանի ծանր քայլուածք նաւի տախտակամածի վրայ, որը
հայլոյեանք էր թափում նաւաստիներից մէկի վրայ:

Հարֆիլդը շտապեց շուրջը նալեց և տեսաւ, որ
մութ ներքնատնից մարդի թէ տակառի պէս մի բան
ուզիղ գէպի իրան է գալիս:

— Դուք էք նաւապետը, հարցըց Զէմսը քաղաքա-
վարի բարովելով:

— Ես եմ, ինչ ես ուզում:

— Արդեօք ձեզ թիավար հարկաւոր չէ. ես վարձա-
ւոր եմ:

— Տեղդ ճանաչիր, լակոտ. իսկոյն դուրս ալտեղից,
ապա թէ ոչ ես քեզ կը ցոլց տամ:

Զէմսը ուզում էր ներողութիւն խնդրել, բայց նավապետը շարունակեց.

— Դուքս կորիր. լսում ես թէ չէ: Դեռ կաթի հոտ է գտվիս բերանից, սա եկել է թիավար դառնալու, կարծես, իմ նաւը չոլումն է գտած, որ քո պտտճառով ընկղմուի. կորիր ասում են քեզ:

Հարֆիլդի համար այն աստիճան ծանր թուեց նաւապետի խօսքերը, որ նա սկսեց փախչիլ և միայն այն ժամանակ ուշքի եկաւ, երբ արդէն ափին էր հասել, ուր գերաններ կալին ածած, նա նստեց նրանց վրայ և երբ քիչ հանգստացաւ, հանեց տոպրակից իր պաշարն ու նախաճաշեց: Դառն էր նրա սթափումը: «Եթէ բոլոր նաւապետները սրա նման են, դատում էր ինքն իրան Զէմսը, այն ժամանակ ուղիղ որ շատ քաղցր չի կարող լինել ծովի վրայ կեանքը: Բայց կարելի է ես ներկայանալու ձեւը չիմացայ. ինձ պէս վատ հագնուածին, գրեթէ ոտաքոքիկին՝ ի հարկէ, կարող են մուրացող տղայի տեղ ընդունել: Կարելի է, պէտք էր ասէի՛ ես կալուածատէր, փալտահատ եմ, գիտեմ կալաքար հալեցնել, ամբարներ շինել: Ոչ, մենակ ես ինքս եմ մեղաւոր. ուրիշ կերպ հարկաւոր էր ներկայանալ»: Նախաճաշիկը վերջացնելուց լետոյ Հարֆիլդը սկսեց ման գալ նաւահանգըտափի եղերքին և այժմ չը գիտէր իր անելիքը: Յանկարծ նա մի ծանօթ ձայն լսեց, որ կանչում էր. «Զէմս, Զէմս»:

Յետ նալեց տեսաւ, որ լճից հանած ջրանցքի վրայ լողում էր մի նաւ, որի ծալիին ընկած ծիծաղելով բարեւում էր երիտասարդ Ամօս — Լետչերը՝ Հարֆիլդի մօր եղբօր որդին ինչ. ասել կուզի, նրանք սկսեցին խօսակցիլ. Զէմսը հաղորդեց Ամօսին նաւապետի ընդունելութիւնը: Իսկ Ամօսը ծիծաղեց շատ և առաջարկեց մտնել իր մօտ իբրև «գրաստավար»:

— Ինչպէս, դոչեց Հարֆիլդը, միթէ նաւը քոնն է:

— Այս, ես եմ նաւի տէրը, մենք Պետսըուրգից պղնձի հանք ենք կրում. նաւը թիավարվում է, բացի այդ, ափի վրայից քարշ են տալիս նրան չորս ջորի:

Այդ գրաստների համար մենք քշողներ ունինք, նըրանք հերթով են բանում. մինչև մէկի հանգստանալն ու ուտելը և իր երկու ջորիներնին կերակրելը միւսը քըշում է երկրորդ զուգը: Գրաստավարը ստանում է մեզանից ամսական 12 դենար:

— Ես համաձայն եմ այդ տեղը բռնելու, նաւապետ Լետչեր, պայմաններն ինձ համար ձեռնտու են, կաշխատեմ ձեզ լաւ ծառալել, ասաց Զէմսը:

— Իսկ ես աւելորդ բան ձեզնից չեմ պահանջիլ, պատասխանեց նաւապետը նոյն հանդիսական ձեերով, վաղ առաւօտ մենք ճանապարհ կընկնենք. չի կարելի ժամանակ կորցնել:


— Նատ լաւ:

Այն միջոցին մի ահագին ջրանցքով միանում էր երիօ լիճը Օգիօ գետի հետ: Վերին լճի մօտ էին գտընվում պղնձի հարուստ հանգերը, որոնց տեղափոխում էին Կլեելանդ, իսկ այստեղից նաւերով տանում դէպի Պետըրուրդ ջրանցքի միջոցով:

Լետչերի նաւի անունն էր «Երեկոյեան աստղ». Նրա վրայի նաւորդներն էին՝ մի նաւապետ, մի ուղեցուց, երկու զեկավար, երկու գրաստավար և մի խոհարար, ընդգամենը եօթը հոգի: Ուղեցուցի պարտաւորութիւնն էր այնպէս առաջ տանել նաւը, որ ուրիշ նաւերին չը դիպչէր և զգուշութեամբ անցնէր սահանքներից: Բայցի նաւապետից, միւսները Հարֆիլդի համար անյարմար ընկերակիցներ էին, նա կեանքի փորձութեան մէջ ընկաւ:

Յաջորդ օրը նաւապետը արշալուսից առաջ վերկացրեց բոլոր մարդկանց: Զէմսին ցոլց տուին ինչ որ նա պիտի անէր և զգուշացրին, թէ այսօր ճաշից լետոյ պէտք

է անցնենք առաջին սահմանքից: Զէմսը ինչպէս հերթակալ գրաստավար պէտք է առաջ ինքը գնար պարանի միջոցով: Սկզբնաւորութիւնը լաւ էր, բայց յանկարծ հե-



— Զէմսին «Երեխոյեան աստղ» նաւել գրաստավար:

ոռում մի ըեռնակիր նաւ երեաց, որ ուղիղ դէպի նրանց էր գալիս. պէտք էր այնպիսի ճարտարութիւնով շրջան անուէր, որ պարանները իրար չը խառնուէին, մանաւանդ

որ կամուրջ էլ կար: Զէմսը աճապարելուց սկսեց չափազանց արագ վրայ տալ պարանը, խիստ պինդ ձգեց և յանկարծ ձեռից բաց թողեց, գեռ ուշքի չեկած մէկ էլ նրա երկու ջորին և ինքն ընկան ջրի մէջ: Սարսափելի աղաղակ բարձրացաւ. նաւապետը շուարուեց՝ նաւի վրայի բոլոր մարդիկ իրանց ջուրը ձգելով օգնութիւն հասան խեղդուղներին: Սակայն այս անգամ փորձանքը լաջող անցաւ. գրաստավարին բարձրացրին նաւի վրայ, իսկ ջորիներին ափը գուրս բերին: Դրանից լետոյ ծիծաղ իրնդումին և կատակներին վերջ չը կար. ինքը Նարֆիլդն էլ ծիծաղելով ասում էր թէ՝ ինքն առաւատեան բաղնիսն արաւ, որից այժմս շատ հովացաւ: Սակայն նրա ծաղրածու ընկերները երկար ժամանակ նրան հանգիստ չեին տալիս:— Մեր տղէն ուզում էր ջորիներին լողացնել, հա, աղաղակում էր մէկը:

— Մենք, եղբայր, միշտ այդպէս ենք վարժեցնում աշակերտներին, ասում էր մի ուրիշը:

Զէմին էլ իր կողմից էր ուրախ հանաքներ անում, նրա ջուր ընկնիլլ բոլոր նաւողների համար ամբողջ օրը ուրախութեան առիթ եղաւ:

Երբ որ նուրը մօտեցաւ առաջին սահմանքին, նաւապետը զգուշութեան համար հրամայեց Նարֆիլդին իր գրաստաներով մտնել նուրը և մէկ ուրիշ աւելի փորձառու գրաստավարին պատուիրեց նրան փոխանակել:

Ամերող այդ երեկոյեան նաւապետը և աշկերտ նաւաստին սկսեցին խօսել ամիրիկական անտառներում գըտնուած գպրոցների վրայ: Բանից գուրս եկաւ, որ Լետչերը նախ քան նաւապետի պաշտօն մտնելը՝ եղել է ինդիայում ծխական գպրոցի ուսուցիչ, նա գրանով շատ էր պարծենում և իրան շատ կրթուած մարդ համարում:

XIII

Նաւը մօտենում էր Ակրօն գետի քսան սահանքներին:
— Բացէք առաջին սահանքը, հրամայեց նաւապետը ուղեցոյցին երեկոյեան տասը ժամին:
— Պատրաստ է, ձայն տուեց ուղեցոյցը:
— Մի՞ բանաք, մեր մակոյկը դալիս է, յանկարծ մութի մէջից լսուեց մի ուրիշ ուղեցոյցի ձայն հակառակ նաւից:
— Պէտք է բանամ, մենք առաջ ենք հասել, գուաց «Երեկոյեան աստղի» ուղեցոյցը:
— Չես յանդգնիլ. կը տեսնենք ո՞վ է զօռով, աղաղակեց հակառակորդ նաւի ուղեցոյցը:
Պարզ երեւում էր թէ երկու նաւերը պատրաստ էին կռուելու: Գետագնացութեան օրէնքով առաջին մօտեցողի իրաւունքն էր ամենից առաջ մտնել. իսկ եթէ դըժքախտաբար պատահում էր, որ միաժամանակ երկու նաւեր հակառակ կողմերից դէմ էին ընկնում սահանքին, այն ժամանակ ուղեցոյցերի մէջ խօսք ու զրոյց էր լինում և հասնում էր շատ անգամ տուր ու դմբոցի: Այդ դէպքերում նաւապետի հեղինակութիւնը ոչինչ նշանակութիւն չունէր. նրան ոչ ոք չէր լսում: Այդպէս պատահեց և այժմ: Երկու ուղեցոյցները բարկութիւնից դողալով պատրաստ էին միմեանց վրայ լարձակուել, ինչպէս վայրի գազաններ: Հարֆիլդի համար այդ չը տեսնուած տեսարան էր. առջի բերան համարեա թէ վախեցաւ, վերջապէս ուշքի եկաւ և մօտենալով նաւապետին խփեց ուսին և ասաց.
— Թու ի՞նչ կասես, նաւապետ, սահանքները մերն են:
— Օրէնքով ոչ, պատասխանեց Լետչերը, բայց մենք առաջ կը մտնենք:
— Ոչ, չենք մտնիլ, համարձակ ասաց Զէմսը:
— Պատճառ, գարմացած հարցըց նաւապետը:

— Որովհետեւ մենք սեպհականատէր չենք այստեղ:
— Ուղիղ ես ասում, եղբայր, այդ խելքս չէր էլ կտրում. տղերք, սպասեցէք, գոչեց նաւապետը, ճանապարհ տուէք միւս պակոյկին . . .
Նաւաստիները չը համարձակուեցան ընդդիմանալ և գործը վերջացաւ առանց տուր ու դմբոցի: Այդ մի յաղթանակ էր Հարֆիլդի համար, բայց նաւաստիների հասկացողութիւնով սարսափելի անպատութիւն «Երեկոյեան աստղի» համար:
«Երեկոյեան աստղի» բոլոր մարդիկ գլխովին պարծենում էին իրանց երիտասարդ գրավաստավտրով. նրա ուրախ, անդորր բնաւորութիւնը, նրա պատրաստականութիւնը ամեն ցեխոտ գործ կատարելու հաւասար միւսներին, նրա սիրալիր վարմունքը իր ընկերների հետ, նրա խիստ կարգապահութիւնը նաւապետի առաջ, այդ ամենը Զէմսին խիստ բարձրացրին հասարակ և տգէտ նաւաստիների ոչքում. բայց դրանից կառավարչից սկսած մինչև յետին թիսվարն անկեղծօրէն սիրում էին նրան և թանգ էին գնահատում նրա ամեն մի խօսքը: Գրաստավարութիւնից նրա պաշտօնը փոխեցին զեկավարի:
Նաւի վրայ, ի հարկէ, գրքեր չը կալին, որի համար և Հարֆիլդը շատ էր տիրում: Միակ նրա մխիթարութիւնը այն հատ ու կտոր լրագերների ընթերցանութիւնն էր որ առնում էր նաւապետը այն տեղերում, ուր նրանք իջնում էին, Հարֆիլդը այդ լրագերները կարդում էր առաջին տողից սկսած մինչև վերջինը: Սակայն այդ երեք ամսուայ ընթացքում՝ որ նա անցկացրեց նաւի վրայ, գրքերի չը լինելը զարգացրեց նրա մէջ արտաքոյ կարգի դիտողական ընդունակութիւնը: Վերջը նրա բարեկամներից շատերը պնդում էին, որ Հարֆիլդը իր կեանքի մէջ ունեցած յառաջադիմութիւնով պարտական է այն հանգամանքին, որ նա փոքրութիւնից սկսեց աւելի ուսումնասիրել «մարդկանց քան թէ գրքերը»:

Զէմսին ջրանցքի վրայ, կարծես, տարօրինակ ճակատագիր էր հետեւում: Նաւելիս մօտ 1½ անգամ նա ջուրն ընկաւ: Այս հանգամանքը չը պէտքէ վերագրել նրա դանդաղկոտութեանը, որովհետեւ նա նշանաւոր մարմնամարզ էր, ճկուն էր և ուժեղ—կատարելապէս անտառի որդի: Պատճառն այն էր, որ մեծ ուշագրութիւնով նայելով իր ջորիներին մոռանում էր իրան և միայն նրանց վրայ հոգալով՝ յաճախ պարանի տակն էր ընկնում, որը նրան ձգում էր ջուրը: Վերջին անգամ նրա ջուրն ընկնելուց, քիչ մնաց նրա կեանքը մահուան կուր գնար: Ահա թէ ինչպէս պատահեց այդ բանը: Ամբողջ գիշերն անձրեւում էր, զեկավարելու հերթը Զէմսինն էր. նրան արթնացըն: Նաւը նոր էր դուրս եկել երկար տղմոտ ջրաւազուտից, որից շատ կար 0գիո—Փենսիլվանի ջրանցքում, և մօտեցել էր սահանքին: Զէմսը խոր քնի մէջ էր, երբ նրան վեր կացըին. նա որոշ չը դիտէր թէ ինչ է իր անելիքը. այնու ամենալիւ ելաւ նաւի վերնահարկը և կանգնելով զեկի մօտ սկսեց գանդաղ կերպով հաւաքել պարանը, որպէս զի սահանքով անցկացնէ մակոյիր: Պարանը՝ տախտակամածի վրայ բռնուելով, երկար ժամանակ չը կարողաւ հաւաքել: Զէմսին ոլժը կրկնապատկելով պոկեց, բայց չը կարողաւ ստը տեղը պինդ բռնել և մի ակընթարթում ջուրն ընկաւ: Շուրջը ոչինչ չէր երեւում. նաւը կամաց յառաջ էր լոգում, նաւաստիներից ոչ մէկը չէր էլ կարող գուշակել պատահածի մասին: Հարփիլդի կորուսը անխուսափելի էր: Ահից ուշը կորցնելով նա բոլորովին անգիտակցաբար ձեռը հանեց յրի տակից և յանկարծնրա մատերը շօշափեցին պարանի հաստ օղը: Դժուար չէր նրա համար պարանից բռնելն ու իսկոյն նաւի վըրայ բարձրանալը: Այսպէս էլ արաւ: Բայց ինչպէս էր պարանի ծալը օղաւորուել, որ այնպէս պինդ բռնուած էր նաւի վերնալարկում, Հարփիլդը չը կարողացաւ հասկանալ: Նը-

րա մաղերը բիզ-բիզ էին կանգնում, երբ մտածում էր եթէ այդ հրաշքով պըճնելը չը լինէր, նա կը կորչէր փիրուն և տղմոտ անգունդի մէջ ու ոչ ոք նաւից չէր իմանալու նրա ինչպէս անյալտանալը: Եւ ասում էր.

— Հրաշք կատարուեց ինձ վրայ: Երեկի իմ կեանքը հարկաւոր է մի սւրիշ աւելի օգտակար գործի քան նաւաստիի կոչման: Ձեռք կը վերցնեմ ես այս մեքենաներից, աւելի լաւ է զբաղուիմ իմ կրթութիւնով և սփոփեմ իմ անգին մօրա: Վշտացըի ես նրան, չը լսեցի նրա խորհուրդները: Ի՞նչ կը լինէր խեղճի հալը, եթէ ընկղմէի:

Տուն և մօրը մօտ վերադառնալու դիտաւորութիւնն այլ ևս Հարփիլդի գլխից չէր գուրս գալիս:

Սակայն Հարփիլդը թագուն պահեց իր ընկերներից այն ամենը ինչ որ պատահել էր և նոյն իսկ նաւապետից էլ. բայց գիշերակին ակամայ լողացումը ջրանցքի ճահճային հոտած ջրում աժան չը նստեց Հարփիլդին, մաշող տենդ ստացաւ նա, կատարեալ ուժաթափութիւն տիրեց նրան և նա անկողին մտաւ: Մի քանի շաբաթ պառկելով և զգալով՝ որ չէ կարող առողջանալ այս վատառողջ տեղում, Զէմսը վճռեց խնդրել նաւապետին արձակել իրան տուն գնալու: Նաւապետը ուղղակի ասաց, որ ինքը շատ ցաւում է նրա մեկնելովը, բայց և այնպէս շատ գոհ է, որ Զէմսը մի ուրիշ ասպարէզ կընարի իր համար և շատ հաւանական է, որ փառաւոր և մեծ յաջողութիւն էլ կունենար:

— Եթէ ես քո տեղը լինէի, ասաց նա, վաղուց թողած կը լինէի ամեն բան և ուսման ետևից կընկնէի:

Աւելորդ է ասել, որ ընկեր—նաւաստիներն էլ շատ տիրեցան Զէմսի գնալու վրայ. բայց և այնպէս նրանք էլ տեսնում էին, թէ տենդը նրան բոլորովին ոլժից ձըդել է, աւելի մնալ ջրի վրայ, կը նշանակէ մահուան դատապարտել իրան: Նաւապետը հաշիւ տեսնելուս Հարփիլ-

դին տուեց 14 գենար ամսական գրաստավարութեան համար և 18-ական դենար զեկավարութեան համար: Զէմսը բաւական փող ունէր բայց նա ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ: Նա թոյլ էր և տկար ու պէտք էր տուն հասնէր ոտով: Տենդը այն աստիճան աւերել էր նրա ջղերը, որ նա աւելի նման էր մի մանուկի քան թէ երիտասարդի. մայրը միտը գալուն պէս նրա լացը գալիս էր, անհամբեր սպասում էր նրա տեսութեանը և միւնոյն ժամանակ վախենում էլ էր նրանից: Նրան թւում էր, որ մայրը կը բարկանայ իր վրայ, թէ ինչու նա չը լսեց իրան և գնաց ծովալին պաշտօն վարելու: Բացի դրանից երեք ամսուայ ընթացքում նա ոչ մի լուր չէր հաղորդել իր մասին: Ինչ և իցէ ահա վերջապէս երևացին ծանօթ տեղերը, ահա և «փայտաշէն խրճիթը»:

Ծառերի միջից փայլում էր կրակը. Հարֆիլդը քայլերը արագացըց, մօտեցաւ պատուհանին և նայեց ներս. մայրը ծունդ չոքած, ձեռները կրծքին ծալած, աչքերը դէպի երկինք ուղած աղօթում էր . . .

Հարֆիլդը ներս նետուեց, մայրն ու որդին ուրախութեան արտասուքը աչքերին իրար գրկեցին : . . .

XIV

— Զէմս, հոգիս, երեսիդ գոյնը թռել է. կարելի է հիւանդ ես, գոչեց տիկին Հարֆիլդը, երբ սաստիկ ուրախութեան առաջին տպաւորութիւնը անցաւ:

— Այն, մայրիկ, ես հիւանդ եմ, և այդ է պատճառը, որ յետ եմ եկել տուն, բայց թէ ինչպէս եմ եկել մինչև մի՞ր խրճիթը՝ ինքս էլ չը գիտեմ: Ոլժից ընկել եմ բոլորովին:

Մայրը՝ նրան կրակի մօտ նստեցնելով, ինքը շտապեց ընթրիք պատրաստելու:

Զէմին ժպիտն երեսին դիտում էր մօրը և խիստ գոհ էր, որ ինքը տանն է: Նա սփոփում էր սիրաը պատմելով ամեն բան, ինչ որ անցել էր իր գլխովն այն երեք ամսուայ ընթացքում, ապա նկարագրեց և այն վերջի գիշերը, երբ մի մազ էր մնացել, որ նա ընկնէր մահուան ճանգը:

Վախենալով իր սիրելի հիւանդի չափազանց յոգնած լինելուց՝ տիկին Հարֆիլդը համոզեց նրան շուտ պառկել:

Այդ գիշերը խեղճ մօր համար ամենաբախտաւոր գիշերներից մինն էր. նա ուրախութիւնից ըլ կարողացաւ աչքը խփել, շարունակ աղօթում էր և շնորհակալ լինում Աստուածանից և մի քանի անգամ մտաւ որդու մենեակը, որ տեսնէ քնած է արդեօք:

Զէմսը գիշերը հանգիստ քնեց, առաւօտը զարթեց բոլորվին զուարթացած, թէպէտ թուլութեան պատճառով չը կարողացաւ տեղից վեր կենալ: Ճահճախին տենդը—ցաւալի բան է. երկու օր չանցած, Զէմսի հիւանդութեան նշանները դարձեալ երևացին և նա պառկած մնաց ամբողջ աշունը: Նրա ձախ կողքին ցաւ էր տուել: Ի՞նչ նեղութիւններ քաշեց այդ միջոցին տիկին Հարֆիլդը՝ անկարելի է երևակալել. իր վերջին կոպէկները տալով բժիշկներ էր հրաւիրում ամեն կողմից: Զէմսը ամեն օր դելն էր տալիս, նա իրան մին փայտահատ էր երևակայում, մին նաւաստի: Տեսնելով որ որդու դրութիւնը օրէ ցօր վատթարանում է, տիկին Հարֆիլդը որոշեց յանձնել նրան բնութեան խնամքին և դադարեցրեց գեղեր գործ ածելը: Այդ հնարը շատ օգնեց: Զրօրհնէքին Զէմսը ամրապնդուել էր. արդէն կարողանում էր ախորժակով ուտել, լաւ քնել. այլ ևս պառկած չէր մնում, այլ նստում էր ժամերով մօր մօտ, որ շարունակ առաջուան պէս կարում ու մանում էր անպարապ: Շատ անգամ նրանք խօսում էին այն բանի

մասին, թէ ինչ գործի նուիրէ իրան Զէմսը: Տիկին Հար-
Փելդը էլի պնդում էր, որ նա կամ ուսուցիչ, կամ քա-
րոզիչ թող դառնալ:

Դեկտեմբերի վերջին տեղական դպրոցի համար նոր
ուսուցիչ եկաւ անունը Տէր-Բաթս: Տիկին Հարփելդը
լսել էր իր հարևաններից, որ այդ մարդը շատ գործու-
նեալ, ուսեալ և բարոյական է:

Տիկինը ծանօթացաւ նրա հետ: Տէր-Բաթսը ամեն
երեկոյ գնում էր նրա տունը. սա շատ սիրեց Զէմսին և ա-
ռաջարկեց նրան տանը դասեր վերցնել, որովհետեւ հի-
ւանդը դեռ ևս բաւական թոյլ լինելով՝ չէր կարող դըպ-
րոցում զբաղուել: Նրա առողջութեան լաւանալուն հետ
առաջ էր գնում և նրա կրթական պարապմունքը:

Տէր-Բաթսը աշխատասէր տիկնոջ հաւատարիմ
օգնականն եղաւ: Նա ամեն կերպ ջանք էր գնում երի-
տասարդ Հարփելդին յետ կացնել նաւաստի լինելու յա-
մառ մտադրութիւնից. բայց թւում էր, թէ գուր ջանք էր
թափում: Սակայն ինչպէս եղաւ իր հիացումը, երբ մի
երեկոյ ընթրիքից յետոյ անակնկալ կերպով Զէմսը սկը-
սեց խօսել, որ իրան անհրաժեշտ է բարձրագոյն ուսման
ետեից ընկնել:

— Լաւ բան ես մտածել, — գոչեց ուրախացած Բաթսը
— Էլ երկար խորհել պէտքը չէ. մարտի սկզբին միասին կեր-
թանք Զեստէր, որտեղ դուք կը մտնէք ուսուցչական
դպրանոցը. այստեղից ձեզ համար բացուած կը լինի
բարձրագոյն կրթաններ մտնելու ճանապարհը:

— Թող այդպէս լինի. կերթանք Զեստէր, պատաս-
խանեց Հարփելդը:

— Դուք, իրաւի համաձայն էք, հարցրեց Բաթսը, տե-
սէք յետ չը կենաք ձեր խօսքերից. այդ ձեր կեանքի մէջ
նշանաւոր փոփոխութիւն է: Դպրանոցում ապրելու համար
միջոցների վրայ դուք հոգս մի քաշէք, այդ հեշտ բանէ,
դժուարն ալդ խնդիրը լուծելն էր:

— Իմ մօտ բաւական փող կալ ժողոված, ասաց տի-
կին Հարփելդը, ես էլի կը ճարեմ մի քանի դենար և
այդ քեզ հերիք կանի:

— Բայց, մայրիկ, ես կարծում եմ, որ այնտեղ կողմ-
նակի աշխատանք կը գտնեմ շաբաթ օրերը, ասաց Զէմսը,
դու անհանգիստ մի լինիր, աղաջում եմ. պէտք է խօ-
սել Ուիլեամ և Գարբրի Բոյտոնների հետ, կարելի է, նը-
րանք ևս ցանկանում են մտնել դպրանոց, այն ժամանակ
ճաշն ու բնակարանը աւելի աժան կը նստի: Ինչքան
ուրախացաւ տիկին Հարփելդը, երբ տեսաւ թէ իր հա-
նապազօրեալ փափագը վերջապէս կատարվում է: Բոյտոնի
որդիքը՝ շուտով խորհրդակցելով իրանց ծնողների հետ
յայտնեցին, որ իրանք նոյնպէս կը մտնեն դպրանոց և
կապեն Զէմսի հետ:

Այն ինչ պատրաստութիւններ էին տեսնվում երեք
երիտասարդների. Զեստէր ճամբելու՝ լուր տարածուեց,
որ այն ժամանակուայ հռչակաւոր բժշկապէտ Որբինզօ-
նը Բոդֆօրտից եկել է Հարփելդին հարևան գաղթական-
ներից մինի մօտ հիւանդներին նայելու: Զէմսը մտքումը
դրեց մօրից ծածուկ գնալ տեսնուիլ բժշկի հետ ու հարց-
նել՝ թէ արգեօք կը ներէ իր առողջութիւնը բաւական
դժուար ուսման ընթացքն աւարտելու, ի նկատի ունե-
նալով և այն զրկանքները, որ նա պէտք է կրէ: Ահա
թէ ինչպէս է նկարագրել ինքը Որբինզօնը այս տեսակցու-
թիւնը Միացեալ — նահանգների ապագայ նախագահի հետ.
« Իմ առաջ կանգնած էր, ասում է նա, մի վատ հագնուած
պատանի. կոշտ կտաւի կարճիկ վարտիքը հազիւ հասնում
էր կովէ կաշուից կարած կօշիկներին. հագած էր մի վերքա-
շուած նեղլիկ ժիլետ և խիստ մաշուած ու գունաթափ վե-
րարկու, որի թևերը հազիւ հասնում էին մինչև դաստակը:
Գլխին ծածկած ունէր մի դուրս պըճած և ջարդուած
դտակ. երբ իմ մօտ մտնելիս նա գդակը վերցրեց և քա-

ղաքավարի կերպով ինձ գլուխ տուեց, նրա շէկ և թանձը մազերը թափուեցին ուսերի վրայ: Ես իսկոյն նկատեցի, որ նա քաշվում է. բայց նրա բաց երեսը և համարձակ հայեացքը դրաւեցին իմ համակրանքը դէպի ինքը:»

—Ո՞վ էք դուք հարցը ես բաւական չոր կերպով:
—Ես Զէմս Հարֆիլդն եմ, ասաց նա:

—Լաւ, ասում եմ, շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս,
ձեր մօր հետ ես վալուց ծանօթ եմ. ես լիշում եմ երբ
դեռ պստլիկ երեխալ էիք:—

—Բժիշկ, ես կը կամենալի ձեզ հետ առանձին խօսել,
հազիւ լսելի ձայնով ասաց իմ ամօթխած հիւրը:

Ես վերկացալ, տարալ նրան տան մօտի փոքրիկ
բակը, նստեցի մի կոճղի վրալ և նրան էլ նստեցը մօտս:

Պատանին յալտնեց, որ ցանկանում է իրան բժըշկական
զննութեան ենթարկել—իմանալու՝ թէ արդեօք
իր կազմուածքը կը ներէ մտաւոր և Փիզիքական ծանր
աշխատութեան դիմանալու:

Մի քառորդ ժամ զննելուց յետով ասացի.

—Դուք կարող էք առողջակազմ երիտասարդ մար-
դու տիպարը լինել: Ձեզ հարկաւոր է միայն աշխատել.
աշխատեցէք ինչքան կարելի է շատ, ձեր կազմուածքը
կը տանի: Ես նախագուշակում եմ, որ դուք նշանաւոր
մարդ «կը դառնաք:»

XV

Մարտի հինգին՝ դասեր սկսելու նախընթաց օրը,
Զէմսը և իր մօրաքրոջ որդիքը ոտով ճանապարհ ըն-
կան դէպի Զեստէր. նրանք բեռնաւորուած էին զա-
նազան պիտանի իրերով և իրանց ուտեստի պաշարով:
Թէպէտ մինչեւ քաղաք տարածութիւնը շատ մեծ չէր՝

ընդամենը տասը մղոն էր, միայն գարնան անձրե-
ներից Օգիօի նահանգի անտառներում ճանապարհները
գրեթէ անանցանելի են լինում և այդ պատճառով
մեր ճանբորդները բաւական ցեխ կոխ տուին: Նը-
րանց բեռն էր՝ ճերմակեղէնի մի փոխնորդ, մի փոք-
րիկ արկղ, որի մէջ կար իւրաքանչիւրի գաւաթը, մի
քանի ափսէ, դանակ, պատառաքաղ և գրգալ ու մի
պատիկ կաթսալ իր կասկարանքով: Բացի դրանից ծնող-
ները նրանց հետ դրել էին բաւականաչափ տանը պատ-
րաստած ապուխտ և հաց: Զեստէր հասնելով՝ նրանք
ուղղակի գնացին դպրանոցի վերատեսուչ Դանիէլ Բրէն-
չի մօտ, որ թէև մի տարօրինակ, բայց շատ յարգելի մարդ էր:
—Պարոն, մենք եկած ենք Օրանժի գետափից, ասաց
Հարֆիլդը գլուխ տալով. մենք ցանկանում ենք մտնել
ձեր պարանոցը:

Հարցնելով նրանց ազդ-աննուները ծերունին յայտ-
նեց, թէ ինքը շատ ուրախ է, որ նրանք ուսանելու փա-
փագ ունին:

—Դուք, պարոններ, երկում է մեր միւս ուսանող-
ներից հարուստ չէք, ասաց վերատեսուչը նրանց՝ ոտից
մինչեւ գլուխը զննելով:

—Պարոն, խնդալով ասաց Հարֆիլդը, մենք ախտել
ենք եկել ոչ թէ ոսկով-արծաթով բեռնաւորուած, այլ
գաւաթներով, կաթսաներով և տնալին պաշարով:

—Ուրեմն դուք կամենում էք ձեր տնտեսութիւննի
ապրել, հարցը Բրէնչը:

—Այն, պարոն, չէք կարող արդեօք մեզ ցոյց տալ մի
յարմար ու աժանագին բնակարան:

Գլուխնոցից երեսուն քայլ հեռու մի հին տան մէջ
մէկ պառաւ ալրի կին սենեակներ էր վարձով տալիս:
Բրէնչը մեր երիտասարդներին ուղարկեց այնտեղ, ուր
շատ աժան գնով վարձեցին մի սենեակ իր օջաղով, մի

քանի հին աթոռներով և երկու մահճակալներով: Տանա-
 լով իրանց իրեղէնները՝ նրանք իսկոյն սկսեցին ճաշ պատ-
 րաստել: Դա կամ առ առ առ առ առ առ առ առ առ
 Դասերն սկսուելուն պէս Հարֆիլդը ջերմ կերպով
 սկսեց ուսումնասիրել քերականութիւնը, թուաբանու-
 թիւնը, բնական փելիսովայութիւնը: և հանրահաշիւը
 Առաջին անգամ գտնուելով հարիւրաւոր պատանի-
 ների և օրիորդների մէջ, որոնք իրանից աւելի մաքուր:
 Են հագնուած, Հարֆիլդը բաւական քաշվում էր. ի բնէ
 էլ ամօթխած լինելով, նա բոլորովին իրան կորցրեց ու-
 սանողուհիների առաջ. ստական ուսման ծարաւը յազմեց
 երկչուսութեանը, նա խորասուզուելով իր զբաղմունքների
 մէջ՝ այլ ևս ուշագրութիւն չը դարձրեց իր շրջապատող-
 ների վրայ: Մեր նորեկները բաւական յաջողութիւնով
 յառաջ էին տանում իրանց տնտեսութիւնը, բայց ճաշի
 լետեից ընկնելու հոգսերը նրանց խիստ ձանձրացնում
 էին և ժամանակ խոնամ. ուստի երկու շաբաթից լետոյ
 նրանք խոհանոցի բոլոր գործերը յանձնեցին պառաւ
 տան տիկնոջը, որ յանձն առաւ և նրանց ճերմակեղէնի
 լուանալը: Ինչքան էլ որ Հարֆիլդը և իր ազգականներն
 աշխատում էին տնտեսաբար վարուել, բայց այնուամենայ-
 նիւ նրանց փողերը հատնում էին: Գրքեր և մի քանի
 այլ իրեր գնելու համար Զէմսի փողերի մեծ մասը գնացին:
 — Պէտք է այլ պարապմունք ճարել, յախոնեց Զէմսը
 Բօյտօն Հարազատներին, ապա թէ ոչ ես շուտով կը
 մնանկանամ, մի քիչ լետոյ իմ 11 դենարից քիչ բան
 կը մնայ:

— Ե՞նչ ինչ պարապմունք կարելի է գտնել ալսպիսի
 պստիկ քաղաքում, պատասխանեց Ուիլեամ Բօյտօնը:
 — Թէ կուզ հինց հիւսնութիւն, այս օրերս ես տեսալ
 Վուդվորթ հիւսնի ցուցանակագիրը, կը գնամ նրա մօտ
 բախտս կը փորձեմ:

Միւս օրը դասերից ազատ ժամերին Հարֆիլդը
 գնաց Վուդվորթի մօտ և պարզ սրտով խոստովանեց,
 որ ինքը Զեստէր է եկել 11 դենար միայն գրանումը. իսկ
 այժմ պէտք է տան վարձ տալ, գրքեր գնել, կերա-
 կըուել — մի և նոյն փողերով:

— Եկէք դասերիցդ լետոյ, տեսնենք ինչ կարելի է ա-
 նել ձեզ համար ասաց հիւսնը:

Դպրանոցի մատենադարանը մեծ բաւականութիւն
 էր պատճառում Զէմսին. այնտեղ վիպասանութիւններ և
 բանաստեղծական գրուածքներ թէւ չը կար, բայց գի-
 տութեան զանազան ձիւղերին վերաբերեալ գրքեր շատ
 կալին: Հարֆիլդը շատ անգամ զրկելով իրան քնից, գի-
 շերուայ մեծ մասը նստած ծանօթանում էր ուսումնա-
 կան գրքերի հետ:

Դպրանոցում սովորութիւն կար, որ սաներն ամիսն
 երկու անգամ հրապարակով պէտք է կարդալին իրանց
 շարագրութիւնները, որոնց նիւթը կամ տեսուչն էր ընտ-
 րում կամ հինց իրանք: Դրա համար դահլիճում ամ-
 բիոնի պէս մի բարձր տեղ էր շինած, որտեղից կար-
 դացողը լաւ երևում էր ամենին:

Ոչ մի սարսափելի կռուի մէջ Զէմսը այդ աստի-
 ճան վեհերոտ չէր եղած, ինչքան երբ առաջին անգամ
 ամբիոնի վրայ երևաց հասարակութեան առաջ:

— Բախտս բերեց, ասում էր Հարֆիլդը ծիծաղելով
 իր ընկերներին, որ ամբիոնի առաջեկից վարագուր կար
 կախած, ապա թէ ոչ պիտի տեսնեիք տեսդալին դրու-
 թիւնից ինչպէս իմ ոտները գողդողում էին:

— Քեզանից ալդպէս բան չէի սպասում, ասաց
 Ուիլեամը:

— Թէ ալսպէս և թէ այնպէս, բանն այն է՝ որ ալ-
 սօրուայ պէս ես վախեցած չէի:

—ի՞նչ վախենալու բան կար, ես հազար անգամ պատրաստ եմ այդպիսի տենդալին դրութեան մէջ լինել՝ միայն թէ կարողանալի այդպիսի շարադրութիւն գրել։ Ամենքը զարմացած էին քո շարադրութեան գեղեցկութեան վրայ։

Զէմսը կարդալով նշանաւոր մարդկանց կենսագրութիւններ, որոնք բարձրագոյն ուսում առնելու համար տարել են ամեն տեսակ զրկանք, նա յատնեց սենեկակիցներին, որ իրանք շատ շռալ են ապրում և թէ պէտք է օրինակ առնել նկարիչ Ռայտից, որ միայն կաթով է կերակրուել իտալիում գեղարուեստ ուսանելիս։

Բացի դպրանոցի մատենադարանից Զէմսի համար կար և մի առանձին շահաւետ զբաղմունք, այն է՝ «Դեբատեան ընկերութեան» նիստերը, ուր նշանակած նիւթերի վրայ ընդդիմախօսում էին։ Ընկերութեան անդամ կարող էր գրուիլ ամեն ցանկացող. դպրանոցի տեսուչը խորհուրդ տուեց Հարֆիլդին անդամակցիլ այդ ընկերութեանը, որպէս զի փորձ է զարդացնել իր մէջ բեմբասացութեան տաղանդը։

XVI

Զէմս Հարֆիլդը ձեռի տակ ունենալով լաւ կադմակերպած գիտնական գրատուն և լեզուին էլ շատ լաւ տիրապետելով՝ նրան մնում էր միայն գործն սկսել ինչպէս հարկն է։ Ալդպէս էլ արաւ։ Դեռ մի ամիս չէր անցել, ուսուցիչներն ու ուսանողները հիացման մէջ էին, լսելով երիտասարդ բեմբասացի փորձնական դասը։ Նա կատարելապէս գրաւեց ամբողջ լսարանը և ընդհանուր զմալումն պատճառեց ունկնդիրներին։ Զարմանալի էլ չէ, որ վերջերում Հարֆիլդը ճարտարախօսի մեծ փառք ձեռք բերաւ Ամերիկայի մէջ՝ իբրև գեղեցկախօս և սրամիտ պաշտպան իրաւաբանական մասում։

Ամարալին երկու ամսուայ արձակուրդը միջոց տուեց Զէմս Հարֆիլդին եռանդով պարապելու ձեռքի աշխատանքով։ Հարլեանները բաւականին շատ գործ ունեին, այնպէս որ, երկու ամսուայ ազատ ժամանակամիջոցում խոտ վերտալուց և հնձից նա լաւ աշխատանք ունեցաւ։

Զէմսի դպրանոց վերադառնալու օրը մօտենում էր Ցաւում եմ, որ ճանապարհիք համար փող չունիմ քեզ տալու, Զէմս, ասաց տիկին Հարֆիլդը իրանց անջատուելուց մի օր առաջ։

— Փողն ինչիս է պէտք, ընդդիմաբանեց նրան Զէմսը. գրպանիս մէջ ամբողջ ի ն ն ը պէ ն ս ունիմ— և ծիծաղելով հանեց գրամը—այս ինձ բաւական ժամանակ հերիք է, հենց որ Զեստէր հասնեմ, Վուդփորթի մօտ ինձ համար արդէն պատրաստի գործ կը լինի։ Էլ ինչ պէտք է։

Այսպէս՝ պատանի Հարֆիլդը վերադառնալու Զեստէրեան դպրանոց՝ միայն այդ ի ն ն ը պէ ն ս ա ն ո ց դըրամն ունենալով գրապանում։

— Այս խեղճ որբուկի համար տիսուր կը լինի մենակ պառկելը գրպանիս մէջ, ճանապարհին կատակով ասում էր Զէմսը Գարըի Բոյտոնին՝—որքան կարելի է, շուտ պէտք է սրա համար ընկեր գտած։

Կիրակի օրուայ առաւօտ էր, որ մեր ուսանողները հասան դպրանոց, ուստի՝ ուղղակի գնացին պատարագին ներկայ գտանուելու, որի վերջում սկսեցին գանձանակ պտաեցնել։ Զէմսը, առանց երկար մտածելու, իր «որբուկին» նրա մէջ ձգեց, աւետարանի մէջ լիշուած այն որբեալրիի նման, որ իր ունեցած վերջին լուման Աստուծուն նուիրեց։

Կարճ ժամանակից ինոր դպրանոցում մի անցք պատահեց, որով Զէմսը ցոյց տուեց իր վերին աստիճանի հաստատամտութիւնը։

Այդ անցքը հետևեալն էր. ուսանողներից մինը՝ որ
մի անամօթի մէկն էր՝ խօսքով վիրաւորել էր քաղաքի
ընակիչներից մէկին: Բոլոր քաղաքացիք միաձայն – ինչ-
պէս միշտ պատահում է Ամերիկայում – իրանց անբա-
ւականութիւնը լայտնեցին գպրանոցի աւագանիին: Թէ
գպրանոցի պատիւը և թէ նոյն իսկ վերատեսչի պատիւը
պահանջում էր որ այդ գործի մասին խիստ քննու-
թիւն լինի:

Իրէնչը ըոլոր ուսանողներին ժողովեց և ամենախիստ
կերպով լանդիմանեց նրանց. խօսք տուաւ նը-
րանցից՝ որ այդպիսի դէպքեր այլ ևս չի կրկնուելու,
և լայտարարեց, թէ մեղաւորին անլապաղ արտաքսելու
է գպրանոցից:

Ուսանողների մեծամասնութիւնը՝ մեղագրուածին
անմեղ տեղը զրկուած համարելով նրա կողմը բռնեց:

— Եթէ Բէլլին արտաքսեն, ես իսկոյն կը դուրս-
գամ գպրանոցից, բացականչեց աւագ աշակերտներից մինը,
երբ Իրէնչը ուզում էր դուրս երթալ:

— Նոյնպէս և ես, ձայնակցեց մի ուրիշը:

— Դէ ուրեմն ինձ էլ հետդ քաշտուր, գոչեց եր-
րորդը:

— Եւ ինձ, և ինձ, լսուեց էլի քանի մի ձայներ:
Թող այս պարուները չերևակալեն, թէ ուսանող պատա-
նիներս իրաւունք չունինք . . .

Ուսանողներից շատերը հպատակուեցան ընդհա-
նուրի տրամադրութեանը և միացան անբաւականների
խմբին: Գոնէ կարելի է ասել, որ քսան հոգի լայտնե-
ցին իրանց հաստատ մտադրութիւնը՝ որ գպրանոցից
կը դուրսգան, եթէ Բէլլը արտաքսուի:

Բայց ինչպէս եղաւ լուգուած իմբի զարմանքը,
երբ Զէմս Հարֆիլդը, դէպի որին դիմեցին ամենքը խոր-
հուրդ հարցնելու, շատ սառնօրէն պատասխանեց.

— Նախ և առաջ ես կը խնդրէի ձեզանից՝ մի ինձ
բացատրէք թէ՝ ինչու պէտք է ես անպատճառ գուրս-
գամ գպրանոցից, եթէ նրանից արտաքսեն մի ուրիշին:

— Մենք ուզում ենք ցոյց տալ, որ մենք անբա-
ւական ենք, նկատեց ուսանողներից մինը:

— Օրինակ՝ ինչով:

— Նրանով, որ Բէլլին տրտաքսում են գպրանոցից:

— Բայց, ախար, նա դեռ արտաքսուած չէ: Շատ կա-
րելի է ամենեին չեն էլ արտաքսում:

— Ասենք թէ. միայն մենք չենք ուզում, որ հա-
մարձակուին մեր ընկերոջ հետ այդպէս վարուել:

— Օրինակ՝ ի՞նչպէս:

— Մի թէ կարելի է անպատճել մի մարդու, նրա դէմ
հալածանք լայտուցանել լոկ նրա համար, որ նա փողո-
ցում հանդիպած որևէ մէկին չի ասել այնպէս, ինչպէս
հարկն է:

— Բայց նա ի՞նչպէս է ասել, շարունակեց հարցնել
Հարֆիլդը:

— Քաղաքացին հաւատացնում է, որ իբր թէ նա
իրան լիբր խօսք է ասել: Բայց ինչ մեր բանն է այդ:
Մենք իբրև ընկերներ պարտական ենք միմեանց համար
թևութիկունք լինել:

— Լինի նա արդար թէ անարդար – ողջ մէկ է:

— Ի հարկէ:

— Ե՛, ես ուրիշ կարծիքի եմ, ընդդիմաբանեց Հար-
ֆիլդը վճռողաբար: Եթէ ընկերներցու մինը վտանգի
մէջ ընկած լինի, որի պատճառն ինքը լինի եղած, ես
ուրիշ կերպ չեմ գնալ նրան օգնելու, բայց եթէ ազնիւ
ճանապարհով: Դրա համար ես ձեզ պատասխանատու եմ:

— Իմ կարծիքով, քաղաքացու կողմից այդ ստորու-
թիւն էր, — տաքացաւ ուսանողը, — որ նա հրապարակօրէն

գանգատուեց դպրանոցի աշակերտի վրայ նրա համար, թէ նա դէպի իրան շատ էլ քաղաքավարի չի վարուել: . . .
— Զեղ հետ ես համաձայն չեմ, ասաց Զէմսը: Որքան որ ես կարողացայ նկատել, Բէլլը՝ թէ լեզուով և թէ շարժուածքով, շատ ապերասան է. և եթէ նրան մեղադրում են—ասել է զուր չէ:

— Ալդ բոլորից այն է դուրսգալիս, Հարֆիլդ, որ մեր նրան օգնելու մտադրութիւնը դուք չէք հաւանում:

— Ուղիղ որ չեմ հաւանում: Թող Բէլլը վիրաւորանք կրած քաղաքացուց ներողութիւն խնդրէ և պլ. Բըէնչին էլ խօսք տալ, որ նա այլ ևս քաղաքում անկարգութիւն չի անիլ—այն ժամանակ առաջինը ես կերթամ ինդրելու, որ նրան չարձակեն դպրանոցից: Կրկնում եմ, թող նա առաջին քայլն անէ:

Պատանիների յուզմունքը շիջաւ: Ուսանող Բէլլը կատարեց այն բոլորը, ինչ որ նրանից պահանջեցին, և նա մնաց գլուխոցում: Իսկ Հարֆիլդը՝ իր տղամարդութեան, իր ազնուութեան և հաստատակամութեան շնորհով՝ Զեստէրում բազմաթիւ անձնանուէր բարեկամներ ճարեց: Նա հէնց վաղ երեխալութիւնից անյողողդ համոզմունք կազմեց իր մէջ և մինչի իր կեանքի վերջն էլ պահպանեց:

Հարֆիլդի համար ուսումնական երկրորդ կիսամեակը առաջինից շատ աւելի լաջող անցաւ: Նա նոր-նոր տեսութիւնների լաւ պաշար հաւաքեց, Վուդվորթի մօտ աշխատած փողերով իր ծախսերը ծածկեց և, բացի այդ, մի քանի տասնեակ ուուբլի էլ ընծալ տարաւ իր մօրը:

XVII

Հարֆիլդի տուն վերադարձից լետոյ հազիւ թէ մի օրուգիշեր էր անցել՝ նա նորից ոկտեց ճամբայ ընկնելու պատրաստութիւն տեսնել:

— Ե՞րբ կը վերադառնաս, հարցրեց մայրը:
— Երբ որ ուսումնարանում պաշտօն կը ճարեմ:
Ուսումնարանը՝ որի համար ուսուցչի պահանջ կար՝ գտանվում էր «փայտաշէն» խրճթից տասը մզոն հեռաւորութեան վրայ: Զէմսը հետիոտն գնաց այնտեղ:
Հասնելուն պէս խնդիր տուեց յանձնաժողովին. բայց նրան մերժեցին, ասելով՝

— Մեզ «մանուկներ» հարկաւոր չեն:
— Զեստէրեան դպրանոցի վերատեսուչ պարոն Բըէնչից ես վկայական ունիմ, իրան թոյլ տուեց նկատելու Զէմսը:

— Ալդ մեր բանը չէ: Նատ կարելի է, դուք շատ բան լինիք սովորած, բայց հօ դրանից չափահաս չէք դարձել:
Հարֆիլդին սառը քրտինք վրատուեց: Նա ճամբան շարունակեց: Գնաց առաջին ուսումնարանից ամենամօտիկը և իրան առաջարկեց:

— Նատ ցաւում եմ, որ ուշացել էք: Գէթ մէկ շաբաթով եթէ վաղ էիք եկել՝ ուրախութիւնով մենք ձեզ կընդունէինք, ասաց յանձնաժողովի անդամը: Փորձեցէք, գնացէք պարոն նելսօնի մօտ՝ Նօրթօնեան նահանգումն է: Այստեղից մի երեք մզոն կը լինի. այնտեղ էլ ուսումնարան կայ:

Մեր Հարֆիլդը կամաց-կամաց առաջ գէպի ցոյցտուած տեղը: Մթնովնա հազիւ-հազ կարողացաւ նելսօնին ներկայանալ: Բայց այնտեղ ևս բռնուած էր տեղը: Նելսօնը գթաշարժուեց՝ որ նա պէտք է գիշերով տուն վերադառնայ, ուստի թողեց որ իր տանը գիշերէ:

Զէմսին չիաջողուեց: Միւս օրը նա տուն դարձաւ և լայտնեց, որ իրան համար այլ ևս ուսուցչի պաշտօն չի որոնելու:

Մայրը՝ տեսնելով որ նա շատ շփոթուած ու լոգնած է՝ խորհուրդ տուեց պառկել-քնել:

Պառկեցին քնելու: Արշալուսին Զէմսը յանկարծ

լսեց, որ մէկը գըսից կանչում է տիկին Հարֆիլդին և հարցնում է, թէ ուր է Զէմին:

— Տանն է: Միայն դեռ չի վերկացել: Ինչի՞ համար էք ուզում նրան, հարցրեց իր կողմից մալրը, բանալով սալադոան դռնակը՝ որպէսզի մի տեղեկանալ, թէ արդեօք ում է հարկաւրուել իր Զէմին այդպէս գիշերհանայ:

— Նեղութիւն կրեցէք իմանալ՝ եկող ձմեռ արդեօք նա յանձը չի առնիլ Լէջի ուսումնարանում կառավարչի պաշտօն, շարունակեց եկողը:

Լսելով խօսքս ուսումնարան՝ Զէմին իսկոյն տեղաշորից վերժուաւ, երեք ըոպէում հազնուեց և դուրսեկաւ անձամբ խօսելու չսպասած հիւրի հետ: Երեաց որ նա ուսումնարանական շրջանի անդամն էր՝ օգիօ գաղթականների մէջ յայտնի մի անձնաւրութիւն:

Ալդ ուսումնարանը, որ ուսուցչի պահանջ ունէր «փայտաշէն խրճթից» մի մղոն հեռու կը լինէր:

— Զէմս, ես եկել եմ ձեզ մօտ Լէջի ուսումնարանի ուսուցչի պաշտօն առաջարկելու, ասաց հարեւանը: Դուք լաւ ոոհիկ կ'ստանաք՝ ամսական տասնույթ ու. և 66 կոպ. և ձրի ճաշ: Բայց հարկաւոր եմ համարում ձեզ առաջուց ասել, որ մեզ մօտ ուսումնարան չէ, այլ անլոյս կապըկտրածների բազմութիւն, որոնց կոպէկ չի տալ մարդ, և որ դուք նրանց հետ անչափ շատ գործ էք ունենալու:

— Ալդ ասենք ոչինչ, պատասխանեց Զէմսը, բայց ահա թէ ինչն է անախորժելին՝ մենք շատ մօտիկ հարեւաններ ենք և երեխաններն ինձ մօտից ճանաչում են, չափից դուքս լարմար է ուսուցիչ լինել մի բոլորովին անձանօթ տեղում, այնտեղ շատ հեշտ կը լինէր խիստ կարգապահութիւն պահել:

— Նրան մի օր ժամանակ տուէք խորհելու, շտա-

պէց օգնութեան հասնել որդուն տիկին Հարֆիլդը: Եգուց առաւոտ մենք ձեզ կը տեղեկացնենք:

— Շատ լաւ: Միայն լոյս ունիմ, թէ դուք ինձ փուստ չէք թողնելու, ասաց հարեւանը կատակով և զընաց տուն:

Միւս օրը տիկին Հարֆիլդը որդուն խորհուրդ տըւեց գնալ Ամօս ամու մօտ, առանց որի ընտանիքի մէջ ոչոք որևէ զլիաւոր հարց չէր վճռում: Նա ևս հաստատեց հարեւանի խօսքերը, որ իրաւ Լէջի ուսումնարանը կապըկտրածների բուն է, և որ Զէմսը իր աշակերտների հետ շատ գործ է ունենալու:

Յետոյ ծերը մտածմունքի մէջ ընկաւ:

— Բայց . . . և այնպէս ալդ տեղն ընդունիր, Զէմս, վճռեց նա . . . Եթէ դու ուսուցչական պաշտօնով կը մտնես ալդտեղ ինչպէս Զէմս Հարֆիլդ, այն ժամանակ դու մեծ վարկ կ'ստանաս, և որ գլխաւորն է, նահանգին մեծ բարիք արած կը լինիս: Ախար, երեխանները—ապադալ քաղաքցիններն են:

— Դէ, ուրեմն ես ալդ տեղը կընդունեմ, յալտարարեց Զէմսը:

Ալս խօսակցութիւնից յետոյ դեռ մի երկու շաբաթ չանցած, մէկ էլ ամբողջ շրջակալքում լուր տարածուեց, որ եկող ձմեռուանից՝ «Զէմս Հարֆիլդը» սկսելու է Լէջի ուսումնարանը կառավարել: Տղերքն ու աղջկերքը սաստիկ լուզմունքի մէջ ընկան. այս բանը նրանց համար անվերջ խօսակցութիւնների առիթ եղաւ:

— Ես Զէմսին սիրում եմ, յալտարարեց մեծ երեխաններից մինը՝ նա շատ լաւ տղալ է, այնպէս ուսումնական, որ մեր բոլոր ուսուցիչներին կը կապի: Նա չի

թողնիլ որ ծուլանանք: Նրա հետ կատակ անել, օ, չի կարելի:

Յանձն առնելով իր ուսումնարանական պարտականութիւնները կատարելու, Հարֆիլդը մտքով իրան համար մի նախազիծ կազմեց, թէ ինչպէս վարուի երեխանների հետ, որ փալախալի և ճիպոտի հարկաւորութիւն չլինի, եթէ այդ միայն հնարաւոր է:

Նա սկսեց նրանից, որ դիմեց աշակերտներին մի համառօտ, ազգու, բայց միևնուն ժամանակ և շատ սըրտաշարժ ճառով, որով իր ցանկութիւնը լայտնեց՝ լինելու նրանց համար բարեկամ, դաստիարակ, պաշտպան, և ոչ թէ դրանց հակառակը: «Ես ձեզ օգնելու համար եմ եկել, և ոչ թէ ծեծելու, ասաց նա. դուք պէտք է ուսումնարանի նշանակութնւնը գնահատել իմանաք, դուք պարտական էք այս հիմնարկութեան վարկը պաշտպանել, ուրեմն՝ բարեկամաբար միասին աշխատենք՝ մեր ուսումնարանը շրջակալ բոլոր ուսումնարաններից ամենաբարձր դիրքի վրայ դնել: Մեզանից է կախուած, որ գործը լաւ գնալ. դուք ձեզ այնպէս պահեցէք, որ Լէջի ուսումնարանը օրինակելի համարուի»:

Հարֆիլդը իսկոյն կարգադրեց թէ ով ինչ պէտք է անէ դասատան մէջ: Այն պատմութիւնները՝ որ նա կարդում էր փոքրիկ մանուկների համար, միշտ պարզ էին, վերին աստիճանի հասկանալի և չափից դուքս հետաքրքիր. մեծ աշակերտների համար նա նշանակեց բարձր ձախով կարգալ և կարդացած նիւթի վրայ վիճաբանել, նրանց այդ բանը շատ դուրեկաւ. իսկ ազատ ժամերին թէ մեծերի և թէ փոքրերի հետ նա զանազան խաղեր էր խաղում, բայց և այնպէս երբէք նրանց հետ ընկերաբար չէր վարդում և միշտ էլ պահպանում էր իր արժանատորութիւնը, այնպէս որ նոյն իսկ ամենաանլուսալի

կապըկտրած մանուկներն անգամ զգում էին դէպի նըրան ակամայ երկէւդ և անկեղծ յարգանք:

Ըստ ուսումնարանի սովորութեան, Զէմսը հերթով իր աշակերտների ծնողաց մօտ էր ճաշում. այնպէս որ՝ ձմեռուալ ընթացքում նա բոլոր հարեւանների մօտ էլ եղել էր, ապրելով մի քանի ընտանիքներում մի կամ երկու շաբաթ: Դրանց մօտ նրա ներկայութիւնը անհետք չմնաց: Երեխանների դասերն էր սովորեցնում, ծնողների հետ խօսում. երեկոնները բարձր ձախով կարդում էր կամ չափազանց գըտիչ կերպով պատմում իր կեանքից կամ գրքերից առնուած որևէ պատահար: Ել սրանից յետոյ հարկաւոր է սսել, որ դաստիարակի, երեխանների և ծնողների մէջ մի սերտ և անկեղծ բարեկամական կապ հաստատուեց:

Երբ ձմեռալին ուսման ընթացքը վերջացաւ, աշակերտներն ու նրանց ծնողները միաձալն լայտնեցին, որ այդպիսի ուսուցիչ, որպիսի այս գէմս շաբաթիւն է, և էջում դեռ ևս չէ եղած: Հէնց այդ մտքով էլ նրան վկայական տուին: Ոմօս ամու գուշակութիւնը ևս կատարուեց: Երիտասարդ ուսուցիչը, որ երեխանների մէջ առաջ լայտնի էր «Զէմս» անունով, աշնանը երբ նա մնաս բարով էր ասում իր աշակերտներին՝ ինքն իր ականջով լսեց, որ նրանք իրան ուրիշ կերպ չէին անուանում, բայց եթէ «պարոն Հարֆիլդ»:

Զէմսը կրկին վերադարձաւ Զեստէրեան դպրանոց, բայց ոչ թէ էլի պառաւի կացարանում կենալու, ոչ, այլ իր հին բարեկամ Վուդվորթ հիւսնի տանը, որտեղ նա շաբաթական մէկ ու և 42 կոպ. վճարելով՝ ստանում էր սենեակ, ճաշ, և սպիտակեղէնն էլ լուանում էին: Իսկ իբրև հասարակ արհեստաւորի Զէմսին առանձնապէս օրինաւոր վարձ էին տալիս: Նրա գործը տախտակ-

ներ ռանդելն էր: Իրանց տանից եկած հենց առաջին շբաթ օրը նա 51 տախտակ ռանդեց և միանգամից աշխատեց 1 ո. 39 $\frac{1}{2}$ կոպ. որով համարեա մէկ շաբաթուալ իր ծախսը գուրսբերեց:

Հարֆիլդը գրքերի համար ոչինչ չէր խնայում, ուստի՝ իրան համար շատ քիչ էր միսում: Նրա հանդերձը աննշան կերպով լաւացաւ: Նա ոչ տաք բաճկոնակ ունէր, ոչ ամառուան վերարկու, իր մաշուած հագուստի շնորհով երիտասարդ ուսուցիչը մի անգամ շատ անպատեհ դըրութեան մէջ մնաց: Բարձր դասատան աշակերտների հետ աղաքարուկի վագելով՝ նա մի բանով ընկաւ և անդրավարտիքի մի կողմը վերէնվար պատուեց: Որպէսզի ազատուի երեխաների ծիծաղից՝ որոնք, ինչ ասել կուզի, չէին խնալելու արդպիսի գէպում և իրանց սիրելի ուսուցչին՝ Զէմսը շտապով գնդասեղներով ամրացրեց պատուածը և, իրիկունը գալով իր սենեակը՝ յուզուած սրտով պատմեց պատահած դժբախտութեան մասին իր տանտիրուհի Ստէլլասին, որնոր մի լարգելի պառաւ էր, և Զէմսին իր որդու պէս էր սիրում: Զէմսն ուրիշ փոխնորդ չունէր, ալդ սլատճառով մնացել էր շուարուած:

— Դու անհոգ կաց, հանգստացրեց նրան պառաւը: Պառկի՛ր քնի՛ր դու, իսկ ես մի երկու ժամ կը նստեմ և այնպէս կը կարեմ պատռածը, որ ոչ ոք չկարողանայ գտնել թէ որտեղն էր: Բայց երբ, Աստուծոյ օգնութիւնով, դու ժամանակով նախագոհ կը դառնաս՝ քո ծիծաղն էլ կը գայ, երբ մտարերես, որ այսպիսի չնչին բաները դու դժբախտութիւն էիր համարում, եղափակեց իր խօսքը լարգելի պառաւը ժպտալով:

XVIII

Զէմսին արդէն շուտով աւարտելու էր Զեստէրեան դպրանոցի ուսման ընթացքը, երբ պատահմամբ նրան հանդիպեց Նոր-Անգլիայի Կոլէջի (բարձրագոյն դպրոց) ուսումնական մասի կանդիտատը և սկսեց խօսակցել նրա հետ:

— Ինչո՞ւ համար մեզ մօտ մտնել չէք կամենում, հարցը նրան կանդիտատը:

— Միջոց չունիմ, ես շատ չքաւոր եմ, պատասխանեց Զէմսը:

— Ասենք գրան օգնել կարելի է: Դուք կարող էք թոշակառու աշակերտների թւում ընդունուիլ: Վերջապէս, մեզանում ձեռուը շըջակայ ուսումնարանների համար ուսուցչի մեծ պահանջ կայ, և յանձնաժողովները այդ տեղերի համար առաւելապէս ուսանողներին են նըշանակում: Մեր ուսումնարանի ուսանողի ապրուստը — եթէ միայն նա խնայող է — ուսումնական տարուայ համար 278 ուուլուց աւելի չի նոտի: Բայց թոշակադրամից, եթէ գուք որ և է կողմնակի աշխատանքից էլի մի քիչ եկամուտ ունենաք, այն ժամանակ դուք առանց նիւթական զլկանքի կարող էք ապրել: Մեր ամենալաւ աշակերտներից մինը, ամբողջ ուսման ընթացքում, իրան համար ապրուստ էր ճարում փայտ սղոցելով, այնպէս որ, երբ նա գնաց այստեղից, հատ կոպէկ պարտք անգամ չունէր — բոլորը վճարել էր իր աշխատած փողերով, և բացի այդ, կարծեմ մի քիչ բան էլ հետը տուն տարաւ: Իսկ ուսանում էր գերազանց:

— Կոլէջում բարձրագոյն ուսման ընթացքն աւարտելու համար ամենակարճ ժամանակը որքան է, հարցը գեց Զէմսը:

— Զորս տարի հարկաւոր է պատրաստուելու համար և չորս տարի էլ բարձրագոյն — ճեմարանական ուսման համար: Բայց մի քանի ուսանողներ ուզզակի երկրորդ պատրաստական ընթացքը մտնելով՝ մի տարով էլ ուսումնարանից վաղ են աւարտում: Բոլորը կախուած է պատրաստուելուց և նիւթական միջոցներից: Օրինակ՝ ընկերներից մի քանիսն ապրուստի համար պարտքով փող են վերցնում և վերջը հատուցանում, երբ ընտիր պաշտօն են ստանում:

— Զէ, եղբայր, ես ինձ խօսք եմ տուել երբէք պարտք չանել, ընդդիմաբանեց Հարֆիլդը: Ասել է բոլոր ժամանակ ես իմ ձեռքիս աշխատանքով պէտք է ապրեմ: Բայց և այնպէս՝ ես կաշխատեմ անպատճառ կօլէջ մտնել:

Ինչպէս ասաց — այնպէս էլ արտւ: Նա անմիջապէս գնեց իրան համար լատիներէնի և յունարէնի ձեռնարկներ և սկսեց հին լեզուները սովորել:

Նա արդէն երրորդ ընթացքն աւարտելու վրայ էր, երբ նրանց գլուխոց մտաւ մի համեստ, շնորհալի, ջահիլ օրիորդ Լուկրեցիա Թուդոլֆ անունով:

Զէմսը՝ բնական շատ ամաչկոտ լինելով՝ միշտ խոյս էր տալիս կանանց ընկերութիւնից, բայց ազնիւ օրիորդ Թուդոլֆի արտաքին գրտչութիւնը, և որ գլխաւորն է, նրա շնորհունակ ու ընտիր բնութքը ակամալ դէպի իրան էր քաշում երիտասարդին:

Զէմսի և նորեկ ուսանողուհու մէջ երկու ընկերոջ իդէալական բարեկամութիւն հաստատուեց: Հարֆիլդը զարմացած էր, հանդիպելով իր ջահիլ հասակակցուհու մէջ այդ աստիճան բազմաթիւ լուրջ մտաւոր տեսութիւնների: Նրանք սկսեցին միասին աշխատել և համարեա հաւասարապէս առաջ էին ընթանում: Ուսման ընթացքը երբ աւարտեցին, նրանք մեծ ցաւակցութիւնով

բաժանուեցին միմեանցից, բոլորովին մտքերովն անգամ չանցնելով՝ թէ վերջերում էլի իրանք միմեանց հանդիպելու են, բայց այնպէս՝ որ էլ երբէք չբաժանուին իրարից:

Վերջին ձմեռը, դպրանոցից գուրս գալուց առաջ, երիտասարդ Հարֆիլդը զարմացրեց և ուրախացրեց իր մօրը, որնոր անսպասելի կերպով նկատեց նրա մէջ սէր դէպի ընտիր ուսմունքները: Օգիօի անտառներում կիրակնօրեալ ազգային ժողովները լսողների մէծ բազմութիւն գրաւեցին, հէնց որ յայտնի եղաւ, թէ Զէմս Հարֆիլդը մտադիր է «խօսելու»: Մայրը արտասուքն աչքերին լսում էր իր որդու կրակոտ ճառերը և մտքի մէջ շնորհակալ լինում Աստուծուց՝ որ նա դէպի իրան այդպէս ողորմած գտանուեց:

Երեսում է, որ մէր Զէմսը զուր տեղը չէ քահանայութեան ձգտում, շշնչաց մի անգամ Գարրի Բօյտօնի ականջին երիտասարդ ունկնդիրներից մինը, որ նրա դաշնկերն էր եղած:

— Ո՛վ է իմանում նրա բանը, շատ կարելի է, պատախանեց Գարրի Բօյտօնը:

— Բայց նա նշանաւոր քարոզիչ կը գառնայ, մէջ ընկաւ մի երրորդ ուսանող: Ես համոզուած եմ, որ բընկները երբ նրա բարոզները լսեն՝ զարմանքից բերանները բաց կը մնայ:

— Բայց նա այդ բանի համար պէտք է սպասէ, գէթ մի տասը տարի, եթէ աւելի չէ, շարունակեց առաջինը:

— Է՛հ, տասը չէ-չէ քսան, էլի վեց ասես հա, նըկատեց Գարրին:

— Յոյս ունիմ, որ նա այն ժամանակ իրան համար նոր հագուստի պատուէր կը տալ, ծաղրածութիւնով վրաբերեց առաջինը:

— Նա իսկի ալդպէս դատարկ բաների վրայ ուշադրութիւն կը դարձնէ: Նրա աչքին կատարելապէս մի գին ունի՝ բամբակից է եղած կտորը, թանգ մահուդից, թէ մետաքսից: Այդ մարդը աշխարհային չնշին բաներից շատ բարձր է: Մէկ էլ որ նրան լսելու համար են գալիս ազգային ժողով և ոչ դատելու՝ թէ նա ինչ ունի հագած:

Եկաւ ամառ, նրա հետ եկաւ և աշխատանքի ամենալաւ ժամանակը: Գարդի Բօյտոնը և Զէմս Հարֆիլդը — այս անբաժան բարեկամ-ընկերները, ուղևորուցան դէպի հարևան կալուածատէրերը՝ իրանց համար գործ գտնելու:

Գնացին նրանք բազմաթիւ մարզագետիններ ունեցող մէկ կալուածատիրոջ մօտ:

— Ի՞նչ կը կամենաք, եղբայրներ, ինչու համար էք եկել, հարցը նա:

— Գործ ենք խնդրում, պատասխանեց Զէմար:

— Իրաւ է, խնդրում էք, բայց հնձել էլ կարող էք:

— Կարող ենք, ծիծակցին երիտասարդ բանուորները:

— Ի՞նչ գնով:

— Ինչքանի որ արժանի կը լինինք, այն էլ կը տաք:

Կալուածատիրոջը գուրեկաւ ալդ համարձակախօս, առողջ ջուխտակը: Նա ինքն առաջնորդեց նրանց դէպի հնձատեղ և, դառնալով դէպի երեք հասակաւոր հնձողներին, ասաց.

— Տղերք, ահա ձեզ օգնելու համար էլի երկու շահիներ:

Մեր ջահիները խորամանկութիւնով իրար նայեցին, մանգաղները ձեռք առան և իսկոյնեեթ գործի կացան: Դեռ մի ժամ անցած չէր լինի՝ նրանք ահազին տարածութիւն հնձեցին, խիտ խոտը հիւթալից ցողուն-

ներով պառկել էր նրանց ճանապարհի վրայ, և շատ դուրսլի բան էր տեսնելը, թէ ինչպէս կանոնաւոր շարժմունքով նրանց սուր մանգաղները թռչում էին ճոխ մարգագետնի վրայից:

Կալուածատէր-պարոնը հիացած էր ալդպիսի քաջ բանուորներից և չկարողացաւ իրան զսպել՝ որ չլանդիմանէր հին հնձողներին ասելով.

— Մի նայեցէք, ճանձ-կուլտուողներ, ահա թէ ինչպէս հարկաւոր է հնձել: Ի՞նչպէս մաքուր հնձած է, ինչպէս են շարժում մանգաղները: Ամօթ ձեզ, տղերք. ջահիները ձեզ տուին անցան:

Իսկ ջահիները միմեանց նայեցին և ծիծակցին: Ալդպէս անցաւ երկու շաբաթը: Վերջին շաբաթ իրիկունը մշակներն եկան հաշիւ տեսնելու:

— Ի՞նչ է, եղբայրներ, վճարեմ համար հնձածի համար, հարցը խորամանկ կալուածատէրը, զգալով՝ որ իրան խիզճն էլ է ասում, թէ Հարկաւոր է «ջահիներին» ևս վճարել այն օրինաւոր վարձը, ինչքան որ հասակաւոր մշակներին է տալու:

— Վճարեցէք մեզ այն, ինչքանի որ արժանի ենք պատասխանեց Հարֆիլդը:

— Առաջուց ասում եմ ձեզ, որ չի կարելի մանուկներին տալ այնքան վարձ, որքան հասակաւորներին:

— Ալժ, բայց, ախար, չէ որ գուք էիք, որ մեծերին իրեւ օրինակ ցոյց էիք տալիս այդ «մանուկներին», ընդդիմաբանեց Հարֆիլդը: Քանի որ գուք ինքներդ էլ տեսաք, թէ ինչպէս մենք ձեր այդ մեծերին մեր ետև թռղինք, գուք իրաւունք չունիք զրկելու մեզ հասանելի արժանաւոր վարձից:

— Թող ալդպէս լինի, ուրիշների հետ հաւասար վարձ ստացէք, ասաց կալուածատէրը: Բայց լաւ իմացած

կացէք, որ գուք տռաջինն էք, որոնց ես հասակաւոր մշակների հաւասար վարձ եմ վճարում:

— Յոյս ունիմ թէ և «ոչ էլ վերջինն ենք», պատասխանեց Զէմսը, որ ամեն բանի պատրաստի պատասխան ունէր:

Այդ միջոցներում Ամերիկայի մէջ նեգրների ազատութեան համար յարուցած հարցի առիթով՝ սկսած էր սաստիկ լուզմունք տիրել մտքերին: Ազատութեան համակրողների թիւը բազմաթիւ էր 0գիում. ոչ միայն քաղաքային ուսումնարաններում, բարձրագոյն դպրոցներում և հասարակական տեղերում, այլ և գիւղական ուսումնարաններումն անգամ ազատութեան մասին բարձրաբարք քարոզութիւններ էր լինում: Ամերիկական հասարակապետութեան մէջ ստրկութիւն լինի թէ չլինի: Ահա այն հարցը, որի վրայ Զէմս Հարֆիլդը քիչ չաշխատեց: Նա գրում էր և խօսում այս տեմայի վրայ իբրև եռանդուտ պերճախօս մարդ, որը ատում է ամեն տեսակ բռնութիւն:

— Ազգի համար նախատինք է այս, տաքացաւ նա միանգամ, երբ ընկերների հետ խօսում էր իրան անհանգստացնող հարցի մասին: Մենք պատերամեցինք և մեզ համար ազատութիւն ձեռք բերինք, և յանկարծ թոյլ ենք տալիս մեզ մօտ ստրկութիւն լինելու, որնոր շատ աւելի ամօթալի է, քան այն, որ մեզ շղթալի մէջ էր պահում: Այս խալտառակութիւն է, Ամերիկայի վրայ այս նախատինքի բիծ է. . . Ստրուկ-նեգրների վրայ լոկ մտածելն անգամ արիւնս եփ է բերում երակներիս մէջ: Ես չեմ հասկանում, ինչպէս կարող են համբերել կը թուած և զարգացած մարդիկ, որ իրանց մօտ ալդպիսի ստորացուցիչ ծառայութիւն լինի: . . .

Կարելի է ենթագրել, թէ ինչպէս Զէմսը եռանդուտ և պերճախօսութիւնով պաշտպանեց իր հայցքները և

համոզմունքները այդ հարցի մասին, երբ միանգամ ճառախօսեց նա «Դեբատեան» ընկերութեան նիստերից մինում: Ներկայ եղողներն ապշած էին մնացել երիտասարդ բեմբասացի իդեաների փալունութիւնից, տեսութիւնների հարստութիւնից և տրամաբանական փաստերից: Պարզ երեսում էր, թէ նա այդ հարցը սկզբով ուսումնասիրել էր և շատ գրքեր ու բրոշիւրներ կարդացել՝ որպէս զի լաւ պատրաստուած մտնէր ուսումնական վիճաբանութեան մէջ:

— Եզրակացներ, սրան ուղարկենք իբրև պատգամաւոր 0գիօ նահանգի կողմից միջազգային ժողովին, աղաղակեցին ուսանողները, երբ նիստը վերջացաւ:

— Խնդրեմ ինձ ոչ մի տեղ չուղարկեք, մինչեւ Զեստէրեան գարանոցից կանդիդատի պաշտօնով գուրսգալս, ընդդիմաբանեց ծիծաղելով Զէմսը՝ դիտմամբ կատակի տեղ դնելով ընկերների առաջարկութիւնը: Բացի ալդ, պէտք էր իմանալ թէ ո՞վ պիտի վճարէր ընտրութեան ծախսերը:

— Ո՞վ, ի հարկէ, կանդիտատն ինքը՝ յարգուսպատիւ Զէմս Հարֆիլդը, բացականչեց Պարրի Բոյտօնը, և նրա խօսքերը ծածկուեցան ներկայ եղողների բարեկամական բարձր ծիծաղով: Ամենից բարձր Զէմսն էր ծիծաղում:

Այն ըոպէից, երբ Հարֆիլդը վճռեց բարձրագոյն դպրոց մտնելու, լատիներէն լեզուն նրա առանձին մըտադիւր ուսումնասիրութեան առարկան եղաւ, նա նրան էր նուրիւում իր ամեն մի ազատ ժամը: Աշնան վերջերում, եկաւ Զեստէր նրա մօտ համօրէն գիտութիւնների ինստիտուտի ուսանողներից մինը. ալդ ուսումնարանը նոր էր բացուել Ալբամի մէջ, որը 0գիօ նահանգում Պարթէջի գրաֆութեան մէջ էր գտանփում: Այստեղ երկու սեռից ընդհամենը հարիւր հոգի ուսանող կար, բայց ալդ թիւը օրբստօրէ շատանում էր: Նորեկ ուսանողը

Հարֆիլդին շատ միիթարական տեղեկութիւններ հայորդեց, նա ասաց որ Ալբամում կեանքն այնպէս թանգչէ, ինչպէս Զեստէրում, որ ինստիտուտի ուսուցիչները բոլորն էլ հոգեւորական ընկերութիւնից են, որին պատկանում են և Հարֆիլդեանները, և որ ուսումնարանը նահանգի մէջ բարի համբաւ ունի: Այն ժամանակ Զէմսը վճռեց նախ և յառաջ պատրաստական ընթացքն անցնել Զեստէրում և յետոյ արդէն մտնել կոլէջ:

1850 թուականի նոյեմբերին Զեստէրեան դպրանոցից աւտորողների մէջ Զէմսը կանդիտատի կոչում ստացաւ. մնաս բարովին նա մի ալնպիսի փազուն ճառ խօսեց, որ կատարելապէս բոլոր լսողներին գրաւեց:

Զմեռը մօտենալու ժամանակ, մայրը համոզեց Հէմսին մի քիչ հանգստանալ և ուղղեկցել իրան Կլեելանդ և Զանեսվիլ, ուր նա հիւր էր գնալու իր ազգականների մօտ: Եւ որովհետեւ այդ ժամանակ հէնց նոր էր երկաթուղու դիմը բացուել Կլեելանդի և Կոլումբուսի մէջ՝ որ Օգիօ նահանգի մայրաքաղաքն էր, ուստի՝ մօր ու որդուն յաջողուեց առաջին անգամ շոգիով ճանապարհորդել: Բնութեան վրայ արած գիտութեան յաղթանակը խորը տպաւորութիւն ունեցաւ զդայուն երիտասարդի վրայ:

Ընդհանրապէս, քաղաքային կեանքի առաջին ծառօթութիւնը, վիթխարի շինութիւնների տեսքը, փողոցների լայնութիւնը, անդադար շարժողութիւնները՝ չէին կարող անհետ անցնիլ մի երիտասարդ մարդու համար, որ անտառներումն էր մեծացել: Նա առաւտախց մինչի իշիկուն ամեն բանի նայում էր, սովորում էր, ամեն օր վագում էր տեղական գատարանի նիստերին ներկայ լինելու և հիացած ասում էր մօրը, թէ այս ճանապարհորդութիւնն իր համար դիտողական ուսման ընթացքն է: «Ես, մայրիկ, ալնքան բան տեսալ և այնքան բան

լսեցի այստեղ, որ ալժմս ես պարզ հասկացողութիւն կազմեցի այն բանի մասին, թէ ինչ բան է հասարական գործունէութիւն», բացականչեց նա միանգամ, երբ վերադարձաւ տուն քաղաքում շրջագայութիւնից:

Կլեելանդից մինչև Զանեսվիլ անցնող ճանապարհը մօր ու որդու համար աննկատելի կերպով անցաւ. այնտեղ մօրաքրոջ մօտ մի քիչ հիւր մնալով՝ նրանք նըստեցին մի փոքր մակոյկ և փոքրիկ գետի վրայից դէպի ներքեւ շարունակեցին իրանց ճանապարհը Զանեսվիլից 18 մղոն հեռու, ուր նոյնպէս կենում էին նրանց ազգականները: Տիկին Հարֆիլդը շատ ուրախացաւ նրանց տեսութեանը. և ինչպէս չուրախանար, մօտ 15 տարի կը լինէր, ինչ նա իր մօտիկ ազգականներից ոչ մէկին չէր այցելել:

Զէմսը տեղը դադարել չէր կարողանում. նա սկսեց տեղեկանալ, թէ արդեօք այդ մօտերքում ուսուցչի տեղ կալ, և խսկոյն երեք ամսուան մնալու համար սկսեց պատրաստութիւն տեսնել: Ուսումնարանը ամենազրմելի դրութեան մէջ էր. թէ ծնողներից և թէ հոգաբարձութեան անդամներից ոչ ոք չէր հոգում գոնէ փայտի հարկաւոր պաշարի մասին, այնպէս որ երեխանները և ուսուցիչը ցըտից գողգողում էին փայտաշէն խրճթում: Բախտաւորապէս ուսումնարանից մի քանի սաժէն հեռաւորութեան վրայ հին մնացած քարածուխի հանք կար: Զէմսը աշակերտներին առաջարկեց, որ գասերից ազատ ժամերին իրանք ձեռք բերեն իրանց վառելիքը: Երեխանները նրա հետ ի միասին սկսեցին քարածուխ կտրել, և արդէն քանի մի օրից յետոյ ուսումնարանի խրճթի փոքրիկ վառարանից ամեն առաւօտ չաղ կրակի բոց էր բարձրանում:

Ուսումը լաւ առաջ էր գնում, չնայելով այն բանին որ երեխանների մեծամասնութիւնը մի առանձին

զարգացումով չէր գերազանցվում: Ուսումնարանի մասին շատ լաւ էին խօսում. ծնողները՝ որոնք մինչև այդ ժամանակ անտարբեր էին դէպի իրանց զաւակների կրթութեան գործը՝ այժմ ակամայ սկսեցին նրանով հետաքրքրուել, և երբ, երեք ամիսն անցնելուց յետոյ, Զէմս Հարֆիլդը իր մօր հետ այնտեղից հեռացաւ, ամենքն էլ անկե զծօրէն ափսոսացին: Երեխաները և նրանց ծընողները դեռ երկար ժամանակ լիշում էին 0գիօից եկած իրանց խելօք և բարի ուսուցչի մասին:

XIX

Երբ յայտնի ժամանակամիջոցը հասաւ՝ Զէմսը դէպի Ալրամ ուղևորուեց, ուսումնարանական յանձնաժողովին ներկայացաւ և յայտնեց իրան ով լինելը. որ ինքը երեք տարի Զեստէրեան դպրանոցումն է եղել, երեք ձմեռ ուսուցչութիւն է արել տեղական ուսումնարաններում և ցանկանում է այժմ ինստիտուտ մանել՝ ուսման ընթացքը վերջացնելու համար:

—Ես, պարոններ, չքաւոր եմ, ուղղակի յայտնեց նա, — ես ինձ համար վճարելու համար ոչինչ չունիմ, չի կարելի արդեօք ինձ գոնապան կարգէք: Ես կը զանգահարեմ և գաւիթը կաւելեմ, իսկ փոխանակ ոռնիկ տալու՝ դուք իմ աշխատանքս համարեցէք թէ դասախոսութիւնների համար վճարում եմ:

—Ինչպէս իմանանք, թէ դուք կարող եք այդ պարտականութիւնները լաւ և ճշտութիւնով կատարել, հարցրեց յանձնաժողովի անդամնենից մինը: Այստեղ ձրի մենք ոչ ոքի չենք սովորեցնում:

—Փորձեցէք, ինձ երկու շաբաթ ժամանակ տուէք. Եթէ ես ձեզ պէտքը չգամ—կերթամ, պատասխանեց Հարֆիլդը, առանց ուրիշ բան ասելու:

Այդժամանակ նրան 20 տարին նար էր լրացել: Զանգահարողի և գլխաւոր սրբազի պաշտօնը յանձնեցին նրան, ուրիշ խօսքերով՝ սրահի պահապան նշանակեցին: Հէնց առաջին օրից նա, աշխատեց մօտենալ տեղական հիւմն-կամալառուին, նրա հետ գործ շինելու համար պայմանաւորուեց և լեառ չորս ուսանողների հետ մի սենեակ վարձեց: Ինչ ասել կուղի որ նեղուածք էր, բայց նեղուածքի մէջ էլի կարելի է ապրել, եթէ միայն զրկանք չլինի: Երբոր այս հոգսերը վերջացան, Զէմսն սկսեց իր պահապանողական ճառը գրել, և նա այնպիսի բարեխզօրէն այդ բանի մասին նիւթեր պատրաստեց՝ որ ուսուցչապետների ուշադրութիւնն իր վրայ գրաւեց: Զանգահարողի պաշտօնը ստիպում էր նրան համարեա արշալուսից առաջ զարթնել, որովհետեւ առաջին զանգը պէտք է տար ճիշտ հինգ ժամին: Ամենախիստ ճշտութիւն էր պահանջվում՝ մի ըոսէ ոչ վաղ և ոչ ել մի ըոսէ ուշ: Ճշտութիւն սիրող Հարֆիլդի համար կատարելապէս ողջ մէկ էր՝ 4-ին թէ 5-ին վերկենալ. օրուայ մէջ երեք թէ տասներկու անգամ զանգ խփել: Ինչպէս որ նրան հրամայում էին՝ այնպէս էլ կատարում էր նա:

Զէմսը երբ սրահի պահանութիւն էր անում Ալրամեան ինստիտուտում, այդտեղ ուսանում էր և մի երիտասարդ ամերիկուհի, որնոր այժմս բնակվում է Իլլինօիս նահանգում. ահա թէ Զէմսի մասին նա ինչ է պատմում.

«Երբ Հարֆիլդը մեր ուսումնարան մտաւ, դասախոսութիւնների համար վճարելու փոխարէն՝ նա դռնապահի պաշտօն սկսեց կատարել, ալսինքն զանգահարում էր և գաւիթն աւելում: Կարծես Հէնց Հիմա ևս տեսնում եմ նրան զանգի թուկը ձեռքին, որ պատրաստէ նշանակած ժամին ձգել և նրանով իմաց տալ ուսուցիչներին և աշակերտներին՝ հաւաքուել իրանց տեղերը

և այնօրուալ աշխատանքով պարապել։ Մինչի մեր պատրաստական դահլիճ՝ մտնելը, չգաղտարելով զանգահարելուց՝ նա մեզանից իւրաքանչիւրին քաղցրութիւնով բարով էր տալիս։ Ամբողջ ինստիտում ամենաժողովրդական անձնաւորութիւնը, նա էր, միշտ էլ ուրախ, ասող-լսող և գրաւիչ էր։ Նա վերին աստիճանի սրամիտ էր և ընդունակ, որի նմանը չկար մեր ուսումնարանում։ Նրա կատակները, որ այնպէս համով էին և գուարծալի, երբէք ոչ կծու էր լինում և ոչ վիրաւորիչ։ Ես չեմ լիշում, թէ նա նրանցով մէկնումէկիս վիրաւորած լինի»։

Զէմսն իր համեստ պարտականութիւնները պատուով և բարեխղճօրէն կատարելով՝ այնպէս ազնուացրեց նրանց, որ ընկերների աչքում բարձր նշանակութիւն ստացան, ինչպէս թէ նա մի որևէ պատուառը պաշտօն լինէր կատարելիս։

Գարնանը՝ երբ Հարֆիլդը գեռ առաջին ընթացքումն էր՝ ինստիտուտի վերատեսչի գլխում մի լաւ միտք ծագեց։ Նա ուսանողներին առաջարկեց՝ ամեն մէկը մի-մի ծառ հանի անտարից և բերի ինստիտուտի շինութեան առաջ եղած հրապարակում տեղ փորի և տնկի։ Այսպիսով՝ սկիզբն եղաւ այն ապագայ ալգու, որի ծառերի շուաքի տակ հանգստանում են ուսանողների երըրդ և չորրորդ սերունդներ։

— Այ գեղեցիկ միտք, բացականչեց Հարֆիլդը լսելով արած կարգադրութիւնների մասին։ Բայց եթէ մեզանից իւրաքանչիւրը համաձայնի ոչ թէ մի-մի, այլ երկերկու ծառ հանել, այսինքն մէկը մեր փոխարէն, իսկ միւսը ուսանողուհի-օրիորդներից մէկնումէկի փոխարէն, այն ժամանակ ոչ միայն ինստիտուտի հրապարակը կը ծածկուէր, այլ մօտիկ փողոցներն էլ խիտ ծառաստան

կը դառնար։ Արդեօք եկող շաբաթ օրուանից չսկսե՞նք տեղափոխութիւնը։

— Հիանալի՛ է, համաձայնեցին ընկերները։ Եւ իւրաքանչիւր ծառը մենք կանուանենք այն ջահիլ օրիորդի անունով, ի պատիւ որի ծառը կը տնկենք։

— Այո՛, մի երեսուն տարուց լետով, ինստիտուտի ուսանողները և ուսանողուհիները շնորհակալ կը լինին մեզանից՝ երբ մեր տնկած ալգու ծառերի ստուերների տակ կը զբոսնեն, բացականչեց Հարֆիլդը։

Այրամեան ինստիտուտի Հարֆիլդի ընկերները չափազանց յարգում էին նրան։ Նա նրանց աչքում առանձնապէս բարձրացաւ, երբ նրա ընտիր լատկութիւնների մէջ երևաց և նրա բնաւորութեան ամենաչքի ընկնող կողմը, այն է՝ նա անկաշառելի արդար էր լինում նոյն իսկ ամենաշնչին բաների մէջ։ Զէմսը սաստիկ սիրելով կոժօփի խաղը՝ միշտ ցաւում էր նրանց համար, ովքեր զուրկ էին լինում այդ բաւականութիւնից։ Մի անգամ երբ նա փալտը վերցնելով՝ պատրաստվում էր իրան տեղը բռնելու, նա նկատեց որ խաղացողների չորս կողմն են ժողովուել ստորին դասատան աշակերտները և նախանձով մտիկ են տալիս իրան վրայ։ Փոքրիկների աչքերում պարզ կարգացրեց էր հետեւեալ խընդիրքը՝ «Թոյլ տուէք մենք էլ խաղանք»։

— Մի՞թէ այս փոքրելը չպէտք է մասնակցեն մեր խաղին, հարցըց Զէմսն իր ընկերներից մէկին։

— Սա էլ ինչ մտածեց, բացականչեց նա։ Երեխաների հետ խաղանք։ Նրանք մեզ միայն կը խանգարեն։

— Բայց եթէ նրանք սաստիկ ցանկանում են։ Ինչո՞ւ չթոյլ տալ . . .

— Հարկաւոր չէ։ Որտեղից նրանք կարող են այս ծանր փալտը բանացնել, շատ կարելի է վնասուեն էլ։

— Եթէ դուք նրանց չընդունէք և ես Էլ չեմ խաղալ, ասաց Զէմսը վճռողաբար և մի կողմ ձգեց ձեռքի փալտը:

— Պարոններ, Թող ալդպէս Էլ լինի, Հարֆիլդի խաթեր համար փոքրերին Էլ թոլլ տանք, ձայնեցին մի քանի ուսանողներ, որոնց ափսոսներն եկաւ որ զրկուելու են Զէմսի պէս ճարպիկ խաղընկերից: Թող գան մեզ հետ խառնուեն, և եթէ մեզ խանգարեն՝ ալդ Զէմսի մեղը կը լինի:

— Երբէք նրանք մեզ չեն խանգարիլ, այլ ընդհակառակը՝ նրանք խաղն աւելի կը կենդանացնեն, ընդդիմաբանեց Զէմսը բարձրացնելով փալտը և կանչելով երեխաներին խաղացողների մէջ մտնելու, — եթէ խաղը իրան կանոնով Էլ առաջ չերթալ՝ ալդ մի մեծ կորուստ չէ, բայց լետոյ գիտէք ո՛րքան բաւականութիւն կը պատճառուի. չէ՞ որ խաղի բուն նպատակն Էլ հէնց դրա մէջն է կայանում:

XX

Հարֆիլդն իր ուսման առաջին ընթացքի վերջում թողնելով Ալրամեան ինստիտուտի գոնապանութիւնը՝ կրտսեր ուսուցչի պաշտօն ստացաւ անդիմացիների պատմութեան, գրականութեան և հին լեզուների բաժնում: Ալսպէս՝ նա միևնոյն ժամանակ Էր և՝ ուսանող, և՝ դաստու, և՝ հիւսն: Նրա մուրճի թղթղկոցին և հարթչի ճղճը զուգը շուտով ընտելացան թէ ընկերները և թէ քաղաքացիք: Ուսանողները՝ լսարանից գուրս գալիս՝ յաճախ տեսնում էին Զէմսին ինստիտուտից մօտիկ կառուցանուղը մեծ տան տանիքի վրայ աշխատելիս և մի առանձին լարգանքով խօսում իրար հետ ալդ նշանաւոր

աղքատ երիտասարդի մասին, որի համար ամենամեծ բաւականութիւնը աշխատելն էր:

Հիւսնութիւնից հարֆիլդը լաւ արդիւնք էր ստանում, նա դրանով ոչ միայն կարողանում էր կացարանի, ճաշի համար վճարել և իր բոլոր միւս ծախսերը ծածկել, այլ և նա կարողացաւ հարկաւոր գումարը ձեռքբերել կոլէջին վճարելու իր ուսման համար:

Չնայելով որ Հարֆիլդը դորձերով ծանրաբեռնուած էր, բայց և այնպէս նա էլի ժամանակ էր գտնում կրօնական և քաղաքական ժողովներին մասնակցելու, ամեն տեղ նա ճառեր էր արտասանում, և իր ազդու պերճախօսութիւնով լսողներին գրաւում: Ալրամի քահանաներից մինք՝ հայր Բենտլէյը սերտ մտերմութիւն հաստատեց ուսանող-քարոզչի հետ, բայց քահանային լուզմունք էր պատճառում մի քիչ այն հանգամանքը, որ Հարֆիլդն աւելի սիրով քաղաքականութեան մասին էր խօսում քան թէ կրօնի:

Մի անդամ ալսպիսի մի դէպք պատահեց. Հարֆիլդը հայր Բենտլէյի հետ եկեղեցու զառում կանգնած էր, եկան կանչեցին նրան որ գնալ ճառախօսի մի նշանաւոր քաղաքական ժողովում՝ այնտեղ «Հոետոր» չգտնուելու պատճառով: Զէմին իմանալուն պէս եկեղեցուց դուրս եկաւ:

« Զէմս, մի գնար այնտեղ», ուզում էր աղաղակել լուզուած ծերունի քահանան Հարֆիլդի ետքից, բայց մի ըսպէ մտածելուց լետոյ նա ճարահատուած ձեռքը շարժեց ասելով ինքն իրան. « Սակայն, Աստուած իրան հետ, թող գնայ. ես գիտեմ որ, վաղ թէ ուշ, այս երիտասարդը Միացեալ — նահանգների նախագահ է դառնալու: »

Պէտք է ասած՝ որ Ալրամի համօլէն գիտութիւնների ինստիտուտ եղած երկրորդ տարին Հարֆիլդի կեանքի համար շատ մեծ նշանակութիւն ունեցաւ: Բայց այն որ աւելի ու աւելի զարգացաւ նրանում

Հաետորութեան տաղանդը, այլ և նրա քաղաքական համոզմունքները նշանաւոր կերպով ամրացան ու կոկուեցան: «Անտառների որդին»՝ մտաւորապէս և բարոյապէս զարդանալով՝ աննշմարելի կերպով պատրաստում էր իրան ապագայ մեծ կոչումի համար:

Զէմսը շարունակում էր հին լեզուների դասախոսութիւնը: Մի անգամ ինչպէս եղաւ նրա ուրախութիւնն ու զարմացումը, երբ լուսարէնի դասի ժամանակ նա իր լսարանում նստած տեսաւ Չեստէրեան դպրանոցի երբեմն ուսանողուհի օրիորդ Լուկրէցիա Բուդոլֆին: Օրիորդը շատ լաւ էր սովորում, և, ինչ ասել կուզի, ալդ բանով աւելի ևս դէպի իրան էր քաշում նրան: Զէմսն ու օրիորդ Լուկրէցիան ազնիւ և անկեղծ սիրով սիրում էին իրար, ուստի՝ ուսման ընթացքի վերջում խօսք տուին իրարու հետ ամուսնանալ, միայն այն պայմանով՝ որ սպասեն մինչի իրանց լիսկատար կրթութիւն ստանալլ:

Մինչի ալդ ժամանակ Զէմսն ընկերների մէջ վալրենիի պէս էր, իսկ դասարանից դուրս ամենալն կերպ աշխատում էր խոլստալ կանանց ընկերութիւնից: Բայց օրիորդ Բուդոլֆի ներկայութեան միջոցին կարծես նա վերածնում էր. նա սկսեց յաճախել ուսանողների և ուսանողուհիների կազմած երեկոյեան խնջուքներին. երբ նրանք գնում էին անտառ կամ լեռան վրայ զբունելու, Հարֆիլդն էլ էր գնում նրանց հետ. մէկ խօսքով՝ կատարելապէս ընկերութեան հոգին դարձաւ: Նա վազում էր, թռչկոտում էր, երգում էր, զանազան ոտանաւորներ էր կարդում, — որոնցից շատը նա անդիր գիտէր, և միւնոյն ժամանակ երեխայի պէս սկսում էր ուրախանալ, երբ իրան անլալտ ցեղին պատկանող մի թռչուն էր տեսնում, կամ երբ աչքին էր ընկնում դարաւոր ծառերի գեղեցկութիւնը:

Զէմսն այն աստիճան ուրախ ու սրամիտ էր, որ նրա կենդանութիւնը համարեա և իրան շրջապատող-

ների վրայ էլ էր անցնում, և, ուր որ նրա ձայնը լըսու էր, կարելի էր վազօրօք գուշակել թէ այնտեղի մարդիկ ուրախ են: Նոյն իսկ լոկ նրա ձեռքը սեղմելիս մարդ կարծես մի տեսակ ազնիւ, չերմ բարեկամական բան էր զգում: Հարֆիլդը յառաջադէմ էր թէ գիտութիւնների և թէ արհեստների մէջ և նրա ձեռնարկութիւնների մէջ ունեցած յառաջադիմութեան գլխաւոր պատճառը պէտք է համարել այն անփոփոխ կանոնը, որ նա իրան համար գրել էր՝ և թէ մարդ մի գործ սկսում է, հապա ուրեմն պէտք է անպատճառ շար ունակի մինչի նրա աւարտումը: Նորբ բարձր գասատնից աշակերտներ թողնելու օրը մօտեցաւ՝ ինստիտուտի վերատեսուչն ու ուսուցչապետները միմեանց ասում էին.

—Մեզ համար անհրաժեշտ է, որ Հարֆիլդը ետքայ Այրամ մեզ մօտ: Միայն առ ալժմս թող նա իր ուսման ընթացքն աւարտէ կօլչում, իսկ իւտոյ մենք նրան որևէ ամբիոն կառաջարկենք: Ալդ բանով մեր ուսումնարանը մեծ ժողովրդականութիւն կ'ստանայ, որովհետեւ ուսանողներից սկսած մինչի քաղաքի վերջին բնակիչը, ամենքն էլ պաշտում են ալդ մարդուն:

Եւ կարծես անկարելի էր չմտերմանալ ուսանողուցիչ հետ: Դասատանը, ուր երեխն 90-ից աւելի լըսողներ էին լինում նստած, Զէմսը կարողանում էր միակերպ ամենքի հետաքրքրութիւնը շարժել. բայց նա մի առանձին հոգացողութիւն և ուշադրութիւն էր դարձնում դէպի այն աշակերտները, որոնք չէի գերազանցում իրանց ընդունակութիւնով: Քանի մի խրախուսական խօսքեր, մի քաղցը ժալիտ երիտասարդ ուսուցչի համար որևէ արժէք չունէին, մինչդեռ նա դրանցով գրաւում էր աշակերտների սիրտը և նրանք էլ ամենայն ճիգ թափում էին, որ ապացուցանեն Զէմսին՝ թէ իրանք հակացան նրան:

«Ես երբէք չեմ կարող մոռանալ, պատմում է Ալ-
րամեան ինստիտուտում եղած աշակերտներից մինը, այն
քաղցր տպաւորութիւնը, որ ունեցաւ ինձ վրայ Հար-
ֆիլդի Հմտութիւնը՝ կարողանալ հարկաւոր եղած ժա-
մանակ փայփայել։ Մի օր՝ մեր տան և քաղցր Հայրենի-
քիս կարօտը քաշելուց՝ սաստիկ տխուր էի. մտնում եմ
ինստիտուտի լսարաններից մինը, ուր հանրահաշիւ էր
գասախօսում բարձրահասակ, թիկնաւէտ և գանգրահեր
ուսանողը։ Հենց նա իմ երեսիս տխուր արտայատու-
թիւնը նկատեց թէ չէ, եկաւ մօտս, գրկեց ինձ երկու
ձեռքով և քնքօրէն կրծքին սեղմեց։ Ալդ բանից զգա-
ցուած՝ մի ըոպէում չքացաւ տխրութիւնս»։

Հարֆիլդը՝ տաքսիրտ բնութեան տէր լինելով, չա-
փազանց զգայուն էր գէտի նրանց, որոնք բարի սիրտ
ունէին։ Ալսպէս օրինակ. Ալրամեան ինստիտուտը թող-
նելու ժամանակ նա ամենից առաջ նամակներ ուղարկեց
քանի մի բարձրագոյն գպրացների վերատեսուչներին՝ ի-
մանալու համար նրանց տառմնարանի կանոնագրութիւ-
նը, ուղղութիւնը և նախագիծը։ Նրանք ամենքն էլ
թէւ ուղարկեցին նրա ուզածը, բայց շատ չոր կերպով
պատասխանեցին։ Նրա ուշադրութիւնը գրաւեց նոր—
Անգլիայի Ուիլեամս անունով կօլէջի վերատեսուչ գոկտօր
Խոպկինսի կարճառօտ, բայց զգայուն որտով գրած նա-
մակը։ «Եթէ գուրք մեզ մօտ գաք, գրում էր ծերունին,
այն ժամանակ մեզ համար առանձին բաւականութիւն
կը համարենք ձեզ համար անելու այն բոլորը, ինչ որ
հնարաւոր է»։ Ալս սրտանց գրած քանի մի խօսքերի
մէջ կարծես լսելի էրպէմի ինչ որ եռանդագին անկե-
ծութիւն։

— Աճուռածէ, ես Ուիլեամս եմ գնում, բայտն եց
Զէմսն ընկերներին և ուսուցչապետներին տուն գնալիս
մնաս-բարովի ժամանակ։

XXI

զի՞ բաննեմ զիմսը այսուհետու ուղար գոր մին
ունի անմաս ու անմասու անմաս ու անմաս ու անմաս
ունի զէմին, Ուիլեամսուն հասնելուն պէս՝ իսկոյն
գոկտօր Խոպկինսին ներկայացաւ։ Տեսնելով իր առաջ
կանգնած մի բարձրահասակ, ամօթխած, աղքատ-Հագ-
նուած, իստ, շէկ մազերով և մեծ, բաց ճակատով երի-
տասարդ՝ և ուշադրութիւնով նայելով նրա բարի, մտա-
խոհ երեսին, որի վրա չէր նկատվում կրած զրկանքնե-
րի ամենափոքը հետքն անգամ, — գոկտօր Խոպկինսն
ամենեին չէր կարողանում ենթադրել, թէ իրան առաջ
կանգնած է Զեստէրեան դպրանոցի այն ուսանողը, որի
պերճախօս, խելօք նամակն ալնպէս հետաքրքրել էր ի-
րան։

— Երեւում է, խեղճն աւելի իր կրթութեան մասին
է Հոգում, քսան թէ իր արտաքինի մասին, մտածում էր
ծերունին՝ լուս նայելով մտնողին։

— Ես եմ Հարֆիլդը, Օգիօ նահանգից, ամաչելով
արտասանեց ուսանողը։

Ալդ մէկ խօսքն արդէն բաւական էր։ Խոպկինսն իր
ձեռքը տուեց և սրտագին սեղմեց նրանը։ Ալդ բարեկամա-
կան ձեռք սեղմելուց յանկարծ Զէմսի սիրտը թեթեւութիւն
զգաց։ Նրան ալնպէս թուաց թէ ալդ ծանրագլուխ և
արտայալտող ճակատով վսեմ վերատեսուչն իր ազգականն
է։ Մինչև ալդ ժամանակ Զէմսը միայն կարողացել էր
չերմեռանդութիւնով Խոպկինսի աստուածաբանական դա-
սախօսութիւնները կարգալ — և յանկարծ նոյնիսկ հեղի-
նակին տեսնում է իր առաջ։

— Ի՞նչպէս ուրախ եմ, որ ես այստեղ ընկայ, մտա-
ծեց Զէմսը։

Հարֆիլդը շատ հեշտութիւնով քննութիւն տուեց
և խօսին ընդունուեց բարձրագոյն ընթացքի ստորին դա-
սախօս։

—Եթէ դուք բոլոր արձակուրդների ժամանակ մը-
նաք կօլէջում, նկատեց նրան վերատեսուչը քննութիւ-
նից լեռով, այն ժամանակ դուք կարող էք ուզածիդ
պէս օգտուիլ ուսումնարանական գրադարանից, որը
շատ հարուստ է գրքերով:

Հարկաւոր է ասել, որ ստանալով այդ թույլտուու-
թիւնը, ի՞նչպէս ուրախացաւ հարջիւդը. մինչեւ այդ
ժամանակ նա ժամանակ չունէր, որ կարգար իր անձ-
նական բաւականութեան համար, բայց այժմ նա կա-
րող էր ամբողջ չորս շաբաթ գործ դնել այդ բանի
համար . . .

Գրադարանի մեծութիւնը և կազմակերպութիւնն
իրանց հոլակալութիւնով ապշեցրին նրան: Առաջին
հեղինակը, որին Զէմսն ամբողջ օրեր էր նուիրում՝ Շէ-
քըսպիրն էր: Նա այն աստիճան գրաւուեց նրանավ, որ
բերանացի սովորեց շատ տեսարաններ, մենախօսութիւն-
ներ, և սկսեց բարձրաձայն արտասանել այդ սովորած-
ները:

Կոլէջի ուսանողները, մանաւանդ թէ նրանք, որոնք
հարուստ էին և բարձր դասակարգից, առաջին անգամ
աչքի-տակով և մի քիչ էլ տնազով էին մտիկտալիս ան-
բարեձեւ և ցնցոտիներով հագնուած նորեկի վրայ: Ամե-
նից աւելի աչքի էր ընկնում նրա մաշուած հին ձեւի ըզ-
գեստը: Այնպէս երեսում էր թէ նրանից հեռու էին
մնում: Զէմսը չէր կարող չնկատել այդ վարմունքը, բայց,
ըստ իր սովորութեան, որ միշտ բարեսրտութիւնով և
ներողամտաբար վտրուել գիտէր դէպի ուրիշների թուլու-
թիւնները՝ հէնց այս անգամին էլ այդ կերպ վարուեց:
Դեռ երկու շաբաթ անցած չէր լինի՝ ընկերներն իրանց
կարծիքը փոխեցին նրա մասին:

Սա կատարելապէս հոգի է, բացականչում էին
նրանք: Մանաւանդ ի՞նչպէս էլ զօրեղ է: Տեսաք ի՞նչպէս

լաւ էր խաղում, և ի՞նչպէս լոքում էր. ի՞նչպէս վազում
է, նրան հասնի չի կարելի: Բայց ի՞նչպէս էլ զարգացած
է, կարծես թէ նա բոլոր գրքերը կուլ է տուել:
Խաչը գիտենալ, եղբայրներ, լաւ քաջ տղայ է: Նա
մեր ուսումնարանի համար վառաւոր գիւտ է: Միայն
մի բան ափսոս որ նա շատ չքաւոր է, սարսափելի վատ է
հագնուած: Եթէ նրան օրինաւոր կերպով հազցնէին,—
նրանից մի լաւ երիտասարդ կը դուսպար:

Ամենքն էլ սիրեցին Հարֆիլդին: Առանց նրան
ուսումնարանում ոչ մի բանի չէին ձեռնարկում, ամեն
ինչի նա մասնակցում էր, մինչև անգամ իր ուսանաւոր-
ները նա սկսեց տպագրել «Դպրոցական Տեսութիւն» ա-
նունով լրագրի մէջ, որ հրատարակում էին կօլէջի
ուսանողները: Վարչութիւնը չէր կարողանում ըստ ար-
ժանուն գովարանել հեռու արևմտքից եկած շնորհալի
երիտասարդին: Բայց Խոպկինսն այնպէս մտերմացաւ
նրա հետ, որ կարծես իր հարազատ որդին լինէր:

Անցաւ աշունը, վրահասան ձմեռուայ արձակուրդ-
ները:

—Հարֆիլդ, դուք ի՞նչ էք մտադրուել, ո՞նց պէտք
է անցկացնէք այս երկու ամիսը, հարցը ընկերնե-
րից մինը:

—Ես կարծեմ լաւ կը լինի գեղագրութեան ուսում-
նարան բանալ, ուրախ պատասխանեց Զէմսը: Բայց միայն
չգիտեմ, ի՞նչ տեղ ընտրեմ:

—Դնացէք Վերմոնտի կողմերը, այնտեղ կը թուած
և հարուստ մարդիկ շատ կան. ձեր ուսումնարանը լա-
ջողութիւն կունենալ:

Հարֆիլդը հէնց այդպէս էլ արաւ. գնաց Նիւ-Եօրկի
նահանգը, Վերմոնտի մօտ գեղագրութեան ուսումնա-
րան բացեց, որից վնաս չկրեց: Այնտեղ նա շատ բարեկամ-
ներ ձարեց, իսկ եկեղեցիներում իր արտասանած քարոզ-
ներով կատարելապէս մեծ անուն հանեց:

Տարիքով քահանաներից մինը սրտանց խորհուրդ
էր տալիս նրան իր մօտ քարոզիչ մտնելու, խոս-
տանալով մեծ ռոճիկ տալ. բայց Հարֆիլդը բոլորովին
չընդունեց այդ ձեռնտու առաջարկութիւնը, ասելով որ
ինքը միայն մի նպատակ ունի աչքի առաջ,—բարձրագոյն
կրթութիւն ստանալ:

—Անկասկած Ալրամեան ինստիտուտում եղբէք
ալսպիսի մեծ ռոճիկ չեն տալ ինձ, ինչպէս ձեզ մօտ, ասաց
Զէմսը, և ես գիտեմ որ էլի ես պէտք է քանի մի տարի իմ
պարտքերս վճարեմ. սակայն ես խօսք եմ տուել կոլէ-
ջում ընտրելիի գիպլոմ ստանալ, իսկ յետով Ալրամեան
ամբիոն ընդունել: Այնտեղի ինստիտուտին ես շատ բա-
նով պարտական եմ, և ես չէի ցանկանալ անշնորհակալ
գտնուիլ: Ես իմ մտադրութիւնս չեմ փոխելու:

Այդ արգէն Զէմսի կողմից անշահախնդրութեան
նշանաւոր յատկութիւն էր, որովհետև Հէնց այդ ժամա-
նակ նրա նիւթական դրութիւնը շատ աննախանձելի դրու-
թեան մէջ էր: Զէմսին անհրաժեշտ էր օրինաւոր կեր-
պով ոտքից մինչև գլուխ զուքուիլ, իսկ նա համ կո-
պէկ չուներ:

Բարեխախտաբար նրան ազատեց այդ նեղ դրութիւ-
նից մի բարեկամ, որնոր լաւ ծանօթ էր այն գիւղի ըն-
տիր գերձակի հետ, ուր էր և Զէմսի ուսումնարանը:

—Պարոն Խասկէլ, ասաց նա, մտնելով գերձակի խա-
նութը, — ինդը պարտքով մի ձեռք շոր կարէք մի ե-
րիտասարդ ուսանողի համար, որնոր մեր գիւղում գեղա-
գրութեան ուսումնարան է բացել: Նատ լաւ տղայ է. ճիշդ
է թէե չքառոր է, բայց չափազանց ազնիւ է: Նա ուսա-
նում է Ուկիեամս-Կոլէջում, այստեղ է եկել նա մի առ-
ժամանակ մնալու:

—Նատ լաւ կը լինի, ես պատրաստեմ, պատասխա-
նեց գերձակը:

Թէե ոչ միանուագ, բայց քիչ-քիչ նա ձեր պարտ-
քը անպատճառ լիովին կը հատուցանէ: Ես ձեզ խօսք
եմ տալիս:

—Նրա անունն ի՞նչ է:
—Զէմս Հարֆիլդ, Օգիոից:
—Նրան ինձ մօտ ուղարկեցէք:

Միւս օրը Զէմսն ինքը ներկալացաւ գերձակին և
պարզապէս բացատրեց իք դրութիւնը:

—Պարտքիս համար ժամանակ չեմ
կարող նշանակել, ասաց Հարֆիլդը, բայց կը վճարեմ
ձեզ մինչև ամենավերջին կոպէկը, —դրա համար ես ձեզ
ազնիւ խօսք եմ տալիս:

—Լաւ, ասաց Խասկէլը, որին շատ դուրեկաւ չքա-
ւոր-ուսանողի բաց և սպնիւ տեսքը, այս պարտքի մա-
սին անհանգիստ մի լինիք, շարունակեցէք լսու առաջ-
նոյն ուսանիլ և երբ որ դուք աւելորդ փող կունենաք
ժողոված ահա այն ժամանակ ինձ էլ մտաբերեցէք:

Քանի մի օրից յետով Զէմսին ըերին մի ձեռք ընտիր
հագուստ, Հէնց այդ հագուստով էլ նա գնաց կոլէջ:
Խակ իր գերձակի պարտքը վճարեց նա ամենակարճ ժա-
մանակամիջոցում:

Զէմսն ամեն տարի իր մօրը տես էր գնում, նա
ալժմս բնակվում էր Սոլօնում՝ կրտսեր աղջկալ մօտ, որը
նոյնպէս ուսունացել էր: Կարելի է ենթադրել, թէ տի-
կին Հարֆիլդն ինչպէս երջանիկ էր զգում իրան, որ
յաջողուեց գոնէ երկու շաբաթ էլ է իր որդու հետ մի-
ասին անցկացնիլ:

Ուկիեամս-Կոլէջի ուսանողները նեգրների ստրկու-
թիւնից ազատութեան ամենաեռանդու կողմնակիցներն
էին համարվում: Բայց ստրկութեան դէմ ամենից աւելի

ձայն բարձրացնողը Զէմսն էր: Քաղաքական ժողովներում իր ամեն մի հրապարակական ճառով հիացնում էր ունկնդիրներին ոչ միայն իր պերճախօսութիւնով, բայց և պատմական բազմաթիւ տեղեկութիւններով, որովհետեւ նա միշտ ստիպուած էր վկայութիւններ առաջ բերել իր փաստերը հաստատելու համար:

— Սմերիկալի ամենահեռաւոր նահանգներումն անգամ Զէմսի անունը լայտնի է, ասում էին ուսանողները նրան լսելիս, և ստրկատէրերը խիստ նեղ տեղն են ընկնելու նրա ձեռքից . . .

Խիստ վերահասու լինելով իր վրայ հէնց ամեն բանի վերաբերմամբ, Հարֆիլդը յանկարծ սկսեց նկատել, որ իր ուղեղն սկսում է սաստիկ լոգնիլ չափազանց մտաւոր լարումերից. նա արգէն առաջուալ պէս լաւ չէր կարողանում կշռագատել կարգացածը մոռանում էր, մէկ խօսքով՝ կարծես թէ ուղեղը թուլացել էր: Նա չանհանգըստացաւ այդ մասին, այլ վճռեց մի առժամանակ իր պարապմունքների եղանակը փոխել՝ աւելի թեթև կերակուր տալ ուղեղին: Առաջ նա իրան համար կանոն էր գրել վիպասանութիւններ չկարդալ, իսկ այժմ, ընդհակառակը, սկսեց գրանք կարդալ և ամեն ամիս կարդում էր Պալտէր Սկոտի, Կուպէրի, Դիկէնսի, Տեկիւրէլի շարադրութիւններից միմի բան: Այդ միջոցով նա բոլորովին բժշկեց իրան և թարմացրեց իր ուղեղը: Վիպասանութիւնները կարգալիս նա նրանցից քաղսւսոցքներ էր անում, երբ նրան որևէ անծանօթ բան էր պատահում պատմութեան, գիւցաբանութեան կամ ոշխարհագրութեան վերաբերմամբ, և չնորհիւ այդ սիստեմի նա համօրէն գիտութիւնների բազմաթիւ նորանոր տեսութիւններ ձեռք բերեց: Առհասարակ նա իրան կանոն էր գրել՝ ցանելուց առաջ ամենալին խնամքով հողը պատրաստել:

1856 թուականին Հարֆիլդը կօլէջից աւարտելու ժամանակ բնազանցութեան մասին գրած շարադրութեան համար ընտրելի աստիճան ստացաւ և, վերատեսչի, ուսուցչապետների և ուսանողների ընդհանուր վճռով՝ արժանացաւ հրապարակական ամենաբարձր վարձատրութեան: Ըստ այսուհետու զայն աշխատանքից առաջը պահպան գործութիւն ունեցաւ ու այնուհետու ամենամասշտաբ պահպան առաջը պահպան ունեցաւ: Այս պահպանը կարգանութիւնը չտուած: Ալրամեան ինստիտուտի ուսումնական յանձնաժողովի անդամները Հարֆիլդին առաջարկեցին իրանց ուսումնարանի կին լեզուների և գրականութեան ամբիոնը: Այն ընդունելութիւնը, որ ուսանողներն արին երիտասարդ ուսուցչապետին՝ ամենասքանչելի էր: Զէմսն ալժմս մի շատ պատուաւոր դիրք ունէր:

— Իմ վառակիրութեանը լիովին բաւականութիւն է տուած, ասում էր այն ժամանակ իր բարեկամներից մինին: Ես բարձրագոյն դպրոցի դիպլօմ ունիմ և Ալրամում ամբիոն ստացաբ: Այժմ ես ինձ բոլորովին նուիրելու եմ ինստիտուտին, և այդ ուսումնարանը այն կէտին պիտի հասցնեմ, որ արևմտեան նահանգները նրանով պարծենան:

Ուսուցչապետի-տեղակալի պաշտօնում՝ Հարֆիլդի ոռճիկը մեծ չէր՝ ընդամենը 1100 ռ. տարեկան. Նա կարող էր շատ հեշտութիւնով ուրիշ տեղ պաշտօն ստանալ երկու անգամ այդ ոռճիկից աւելի, բայց աշխարհիս երեսին ոչ մէկ գանձ չէր կարող նրան ստիպել ձեռք վերցնելու իր թանգագին դպրոցից, ուր նա իրան կատարելապէս բախտաւոր էր համարում:

ինստիտուտում եղած հէնց առաջին տարուայ վերջում նշանակեցին նրան մ ա մ ն ա մ ա ր գ ա կ ա ն խ ո ր հ ը դ ի ն ա խ ա գ ա հ, իսկ երկրորդ տարում — ա ւ ա գ ա ն ի, ա լ ս ի ն ք ն ուսումնարանի վերատեսուչ:

Հարֆիլդը վերին աստիճանի ընդունակ էր երիտասարդներ ընտրելում, գուշակում էր նրանց ընդունակութիւնները և առաջ մղում: Նա այդ բանը հանաքուց «երեխանների ընտրութիւն» էր անուանում. և ձշմարիտոր նա իր ուսումնարանի համար պատանիներ էր ընտրում. յաճախ նա սաստիկ վէճեր էր ունենում տգէտ ծընողների հետ, որոնք բաւական էին համարում մէկ կամ երկու տարուայ ուսումը, և պահանջում էին որ իրանց որդիքը տուն դառնան և կըկին գիւղատնտեսութիւնով պարագեն, բայց Զէմսն ընդունակ աշակերտին երբէք չէր թողնում ուսումնարանից դուսդալու: Միայն նա իր այդ կոխւն այնպէս զգուշութիւնով և խելացի կերպով էր վարում որ կոսիտ գաղթական-հայրերից ոչ մինն էլ է երբէք չէր վիրաւորվում. նա իր համոզողական պերճախօսութիւնով այնպէս էր ներգործում իր հակարտկորդի վըրայ, որ վերջին նրա պարապման սենեակից դուրս էր գալիս բոլորովին հիացած նրա քաղաքավարութիւնից և, ինչ ասել կուզի, որդուն էլ ժողնում էր ուսումնարանում:

Ենորհիւ իր անսովոր փափուկ բնաւորութեան և մարդավարութեան, որոնցով վարփում էր նա մարդերի հետ, Հարֆիլդն սկսեց քիչ-քիչ ընդհանուրի մէրն ու յարգանքը վայելել: Ամերիկայի Միացեալ-նահանգները միմիայն նրան են պարտական, եթէ նրա նախագահութեան ժամանակ վարչութեան գլուխ էին կանգնած ազնիւ և շնորհալի մարդիկ: Նա շատերին առաջ տարաւ այն պատանիներից, որոնք Ալրամեան ինստիտուտում ուսել էին իր ձեռքի տակ: Ահա թէ ինչ է ասում իր բերանով այդ գպրոցի ալժմեան վերատեսուչ պ. Խինսդալը, որնոր Հարֆիլդի

ինստիտուտ կանավարած, ժամանակուայ ամենաընդունակ ուսանողներից մինն էր: Կազմակերպութիւններից մինն էր:

— Մենք բոլորս էլ պաշտում էինք մեր երիտասարդուսուցավետին, պատմում էնա իմոքաժինս՝ բաւական էր միայն նրա հայեցքը, նրա միքաղաղը ժպիտը, որ ես ամբողջ օրը ոգեսորուած լինէին:

— Պարոններ, յալտարարեց նա միանգամ ուսանողներիս, եկող շաբաթից ես ձեզ համար սկսելու եմ կարդալ պատմական գասախօսութիւնների մի ամբողջ շարք, բայց իմացած կացէք, որ միայն ձեր օգուտը չունիմ աչքիս առաջ՝ ես պատրաստուելով այդ գասախօսութիւնների համար՝ աննշմարելի կերպով ես ինքս էլ կը սովորեմ պատմութիւնը:

— Աիր նա այդ ինչպէս է անում, որ կարողանում է՝ գասատան զանգի վերջին հարուածի ձայնը դեռ նոր վերջացած՝ անմիջապէս ամբիոն բարձրանալ, Հարցնում էին ուսանողները մէկմէկուց:

— Սատուած է իմանում: Միայն մի կենտ անգամ եմ տեսել, պատասխանեց ուսանողներից մէկը, որ նա սանդուխքի վրայ երևացել է զանգի վերջին հարուածից ուղեղ կէս բոսկ ուշ:

Եւ ճիշտ որ Հարֆիլդն իր պարտականութիւնն էր համարում ամենայն կերպ գգուշ և ճիշդ լինել հէնց ամեն բանում, օրինակ՝ աղօթքի ժամանակ, գասախօսութիւնների ժամանակ, աշխատանքի միջոցին, մինչև անգամ և այն ժամանակ երբ խոստանում էր մէկին մի որեւէ տեղ գնալու: Յետոյ նա գիտէր սաստիկ շուտով աւարտել իւրաքանչիւր սկսած գործ, թէկուզ ինչքան էլ որ դժուար լինէր այդ գործը: Իր աշակերտներին նա սովորեցնում էր հասկանալ և գնահատել հետեւալ երկու յատկութիւնների՝ զգուշութեան և ճշգույթի անհրաժեշտութիւնը:

Պէտք է ալսուեղ նկատած, որ Հարֆիլդը երբէք ու-
րիշներից չէր պահանջում մի բան՝ որն ինքը ևս չէր
կարող կատարել:

Մի առաւօտ՝ ամենամօտ քաղաքից վերադարձին,
ուր նա առաջին որը հրաժարակական դասախո-
սութիւն էր կարգացել՝ Հարֆիլդը մի բոպէ ուշացել էր:
Երիտասարդ ուսուցիչներից մինը նրա տեղը բռնել էր.
Երբ նա դասատուն մտաւ, աշակերտներից մինը ուսուց-
չի առաջարկած հարցին պատասխանում էր: Հարֆիլդը
թողեց որ ուսանողը խօսի և երբ նա վերջացրեց, անմի-
ջապէս ժամանով առաջարկեց նրան հետևեալ հարցը, որ
կարծես թէ հէնց առաջին հարցն էլ ինքն էր տուել:
Երիտասարդ ուսուցիչը՝ հասկանալով վերատեսչի գուռնով
հասկացնիլը՝ գլուխ տուեց և դասատնից գուսեկաւ:

Ուսանողները բարեկամաբար հրհռացին. նրանք էլ
գլխի վնակն, որ վերատեսուչը կամեցաւ դրանով կամաց
հասկացնել իրանց դաստիարակին, որ նո շտապել
էր և իրան թույլ տուել կասկածելու իր ճշութեան մասին:

1858 թուականի նոյնմբերի 11-ին Զէմո Հարֆիլդն
ամուսնացու օրիորդ Ռուգոլֆի հետ, և ջահիլ կնոջ օդ-
նութիւնով նա կարողացաւ իր ուսումնական աշխատու-
թիւններից շատ բան աւարտել: Նատ անգամ՝ երբ նո
կամենում էր պատրաստուիլ որևէ գիտնական կամ հրա-
պարակական դասախոսութեան համար՝ Զէմոը կնոջն էր
լանձնում հարկաւոր նիւթերը ժողովել և դասաւորել. և
նա էլ՝ ամբողջ օրերով խորասուզուելով ինստիտուտի
գրադարանի գրքերի մէջ՝ որոնում էր իրան ցոյց տուած
հեղինակութիւնները: Ալրամի բնակիչների համար շատ
սովորական բան էր տեսնելը՝ թէ ինչպէս երիտասարդ
վերատեսուչը գրքերը խըխըտած փազում էր գրադարա-
նից լորդառատ անձրեսի ժամանակ. այդ միջոցին նրա կողքից
մի ուսանող գնում էր բացարած անձրևապահը բռնած:

Սաստիկ սէր ունէր դէպի գրքերը, որոնցից մի քանիսը
նա կը կին անգամ կարդում էր հիացած: «Թոմա: Բրունի
գլուխական օրեքը» անունով գիրքը նրան գմալեցրել
էր, Մակուելը, Միլլը նոյնպէս նրա սիրած հեղինակնե-
րից էին:

— նա կատարել անգին գանձնէր և ոչ թէ
դաստիարակ, առում էր Հարֆիլդի մասին լարգելի քարո-
զիչ պլ. Դարսին, որն որ Ալրամում ուսանող էր եղած:
Նա մեր ամենիս անուն-անուն կանչում էր, ազատ ժա-
մերին խաղում էր մեզ հետ ինչպէս ընկեր բայց և
այնպէս ոչոքի չէր թուլտալիս մոռանալ իր առաջ: Եթէ
նա հարկաւոր էր համարում աշակերտներից մինուում իսկ
նկատողութիւն անել կամ մինչեւ անգամ լանդիմանել
այն ժամանակ նա մեզաւորի վկից բռնում էր և, մօտե-
ցնելով իրան՝ աննշմարելի կերպով շնչում էր նրա ա-
կանջին ինչ որ պէտք էր:

XXIII

Հարֆիլդի պէս քաջազոր հռետորը և էր կտ-
րող չզբանուիլ քաղաքականութիւնով: Օգիօ նահանգի
առաջաւոր մարդիկ նրան իրանց ապագայ ընտրելին
էին համարում և ամեն մի լաջող դէպքում նրան
էին առաջ մզում: Աշնանը երբ նա վերադարձաւ Ալրամ,
համարեա ժամանակ չտուին նրան ինստիտուտ կարգա-
ւորուելու ինչպէս հարկն է, այլ ամեն կողմից առաջար-
կեցին ճառ արտասանել, մինչ այս հարցի վերաբերմանը,
մին մի ուրիշ հարցի: Հասարակագետական կուսակցու-
թիւնը, որ նեղըների ազատութեան գործի եռանգոտ
կողմանակիցն էր՝ նրան ամուր բռնել էր, չնայելով որ
այն ժամանակ նրանք իրանց առաջնորդ ունէին
ամենաշնորհալի մի անձնատորութիւն՝ Փրիմանին, որ-
նոր նոյնպէս կտրուկ էր, ինչպէս և Հարֆիլդը:

1859 թուականին իշխանութեան գլխաւոր ներկայացուցիչներն Ուիլեամս-Կոլեջում Հարֆիլդին մի չլուսուած պատիւ արին, — նրան առաջարկեցին մի բոլորովին ուրիշ ուսումնարանի աշակերտների աւարտման ակտին հրապարակական ճառ արտասանել: Հարֆիլդն ընդունեց այդ առաջարկութիւնը և կնոջ հետ ուղեղուուեց դէպի Մասսաչուզետա նահանգը, ուր էր գլխաւոր քաղաք Ուիլեամստունը: Այս նրա կետնքում առաջին ճանապարհորդութիւնն էր, որ նա ազատ կամքով ձեռնարկեց: Զահիլ ամուսինները ս. Լաւրենտիոս գետի վրայով իջան մինչի Կվերէկա, իսկ յետոյ անցան Նոր-Անգլիայի բոլոր նահանգների միջով. Հարֆիլդին ամեն տեղ անկեղծ ցընծութիւնով էին ընդունում. բայց նա առանձնապէս զարմացաւ, երբ հասաւ Ուիլեամստունի մօտ: Մենատօնում նրան դիմաւորեց քաղաքի պատգամաւորութիւնը և, առաջին բարեւումից յետոյ՝ նահանգական սենատորի ընտրելիի պաշտօն առաջարկեց նրան:

— Ի՞նչպէս, զարմացած բացականչեց Հարֆիլդը, չէ որ ձեզ մօտ ալդտեղը բռնած ունի պ. Պրէնտիսը:

— Նա մեռաւ յանկարծակի, պատսսխանեցին նրան պատգամաւորները:

Պրէնտիսը՝ որ մի շատ հասակաւոր մարդ էր՝ մեծ ժողովրդականութիւն ունէր իր նահանգում. հասարակապետականների մեծ բազմութիւն պատրաստվում էր նրան միջազգային յանձնաժողովի նախագահ ընտրել. բայց երբ յանկարծակի մահը քանդեց նրանց նախագիծը, այն ժամանակ այդ կուսակցութեան հայեցքները դարձան դէպի Ալրամեան ինստիտուտի երիտասարդ վերատեսուչը:

— Այժմ գուք էք, Հարֆիլդ, մեր նահանգի հասարակապետական կուսակցութեան առաջին ընտրելին, ոսում էին նրան պատգամաւորութեան անդամները:

— Անկեղծօրէն շնորհակալութիւն այդ պատուի համար, պատասխանեց Հարֆիլդը, ձեր այդ առաջարկութիւնն ինձ համար շատ հրապուրիչ է, սակայն չգիտեմ, կարող եմ ընդունել:

— Լոկ միայն ձեր անունը հերիք է, որ մենք կարդանանք ձայների բազմութիւն քաշել դէպի մեր կողմը: Համարձակվում ենք յուսալ, թէ գուք չէք մերժելու:

— Բայց, պարօններ, ի՞նչ անեմ ես ապա ինստիտուտը, հօ չի կարելի միւնոյն ժամանակ կատարել և սենատորի պարտականութիւն և ուսումնարանի վերատեսչի:

— Սենատում տարուայ մէջ պաշտօնական գործերի համար միայն քանի մի շաբաթ է պէտք զալիս: Լաւ կշռեցէք այս հարցը, իսուցէք ուսումնական ժողովի հետ և մի շաբաթից յետոյ իմացում տուէք մեզ, թէ ի՞նչ էք վճռել:

Հարֆիլդը երեակայել անգամ չէր կարող, որ ուսումնական ժողովի և հոգաբարձական խորհրդարանի անդամները ցանկանային որ նա քուէարկուէր: Ալրամ վերազանալով երբ հարցըց նրանց կարծիքն այդ մասին՝ բոլորն էլ միաձայն խնդրեցին որ չհրաժարուի ընտրուելուց:

Ընտրութեան օրն եկաւ: Հարֆիլդին կանչեցին Կուլումբուս, որպէսզի ինքն անձամբ ներկայ գտնուի իրան սպասող յաղթանակին: Քուէարկողներից մէկը շատ զարմացաւ, երբ տեսաւ երիտասարդ ընտրելիին, որին առաջարկում էին սենատորութեան համար քուէարկել:

— Այդ ի՞նչ բանի վրայ էք գուք, ծիծաղի համար է թէ ինչ է որ ուզում էք ալդպէս երիտասարդին սենատոր ընտրել, գիմեց նա հասարակապետական կուսակցութեան առաջնորդներից մինին:

— Նա ջահլ է միախ տեսքով բայց ոչ լելքով,
ընդդիմաբանեց նա:

— Ասենք թէ այդ այդպէս է, բայց նրա հասակում
անկարելի է փորձառութիւն ունենալ քաղաքական գոր-
ծերում:

— Բայց սպասեցէք մի քիչ և լսեցէք երբ նա կը
խօսի՝ դուք իսկոյն ձեր կարծիքը կը փոխէք նրա մասին:

Ընտրութիւնների վերջում, ըստ սովորութեան, Հար-
ֆելդը ճառ արտասանեց, որը չափազանց նշանաւոր էր
թէ պերճախօսութեան կողմից և թէ մտքերի պար-
զութեան: — Սքանչելիսէ, բացականչեց ու քուէարկուն, ու որնոր
կասկածել էր ընտրողների խոհեմութեան վրայ: Այս մար-
դը — ուժ է:

Հարֆելդը ձայների մեծամասնութիւնով ընտրուեց
և սենատօրի պաշտօնն ստանձնեց 1860 թուականի յուն-
վար ամսին: Նրա ընտրութիւնը սաստիկ խռովութիւն
պատճառեց: Հարաւային նահանգները սպառնում էին,
որ եթէ ապագայ ընտրութիւնների ժամանակ հասարա-
կապետական ընտրուի նախագահ՝ մերժելու են և քա-
ղաքական պատերսզմ Հրատարակելու: Հիւսիսային բոլոր
նահանգներն էլ իրանց կողմից սպառազինուեցան ան-
պատճառ պատերազմելու նեղընների ազատութեան հա-
մար: Հարֆելդը չնալելով իրան երիտասարդութեանը՝
հէնց այն մարդն էր, որ պէտք է սենատում նախագահէր
մի այդպիսի փոթորկալից ժամանակ: Նրա սենատի ըն-
կերներից, ի միջի ալլոց, կալին երկու շնորհալի երիտա-
սարդ մարդիկ, որոնցից մինը Կոկսն էր, վերջում գլխա-
ւոր-նահանգապետ Օգիօ նահանգի և ատենադպիր ներ-
քին նախարարութեան: Հարֆելդն ու նա ընտրութիւն-
ների ժամանակ մի կացարան փարձեցին և ապրում էին
այնպէս ընկերաբար, ինչպէս եղբայրներ: Նրա միւս ըն-
կերն էլ Մօնրօն էր, որնոր Օբերլիննեան կոլէջի ուսուց-

չապետն էր. այդ ուսումնարանը կառուցուած է ընդ-
հանուրի տպատութեան սկզբունքների առիթով: Այս ե-
րեք երիտասարդ սենատօրները ձեռք-ձեռքի տուած ա-
ռաջ էին գնում՝ հաստատուն կամքով դիմադրելով
ստրկութեան դէմ, որի համար և նրանց անուանեցին
«արմատական վերանորոգիչներ»:

Հարֆելդի սենատօրութեան երկրորդ տարում, երբ
Լինկոլնը նախագահ ընտրուեց, հարաւային նահանգ-
ները պատրաստուեցան մերժելու, և ուրեմն քաղաքա-
կան պատերազմն անխուսափելի եղաւ: Առիթը ներկայա-
ցաւ վճռելու ազգային չափազանց նշանաւոր հարցեր՝
«Հարկաւոր է արդեօք Օգիօ նահանգին պատերազմի
պատրաստութիւն տեսնել. արդեօք հարաւայիններն իրա-
ւունք ունին մերժելու. կարելի՞ է արդեօք նրանց վե-
րաբերմամբ սահմեցուցիչ միջոցների ձեռնարկել. ար-
դեօք հարկաւոր է պատժել դաւաճաններին»: Հար-
ֆելդը գիշեր ցորեկ աշխատում էր այս չորս հարցերի
մշակման համար: Նա՝ շատ անգամ կէսպիշերից անց
նատած ազգային գրադարանում՝ նորանոր նիւթեր էր
ձեռք բերում: Զարմանալի չէ ուրեմն երբ ապշած
էին մնում նրա ճառերի ազդուութեան և ճշմարտու-
թեան վրայ: Նա չէր խնայում դաւաճաններին և վախ-
կուներին, սարսափելի կերպով հարուածում էր իուա-
կանին, որ բաժանման ձգտող հարաւինների կուսակցու-
թեան պաշտպան էր. Կօբբիին, որ կողոպտեց ազգային
գանձարանը. Փլօիդիին, որնոր ազգային զինարանները
յափշտակեց. Տուսիին, որ գիտմամբ նաւատորմդի մի մասը
հեռու աել ուղարկեց:

— Ընկճենք հալբենիքի բոլոր դաւաճաններին, բա-
կանչում էր Հարֆելդը:

Դեռ այդ ոչինչ. երբ յանձնաժողովն ինքն առա-
ջարկեց զիջողութիւն անել հարաւայինների հետ հաշ-
տութեան համար, Հարֆելդը սենատում հրապարակաւ

յայտնեց, թէ ստրկատէրերին երեստալ—միւնոյն է թէ
դաւաճանել հայրենիքին:

—թող կոնդանալ իմ ձեռքը, ասում էր նա տա-
քացած, եթէ ես երբեկիցէ ստորագրեմ ստրուկութեան
կողմնակիցների հետ կապած համաձայնական թղթին:

Երբ կամեցան յանձնաժողովի առաջարկութիւնը
քուէարկել՝ հարփիլդն ու էլի վեց սենատօրներ հրաժա-
րուեցան ստորագրելու իրանց անուններն այդ ստորա-
ցուցիչ համաձայնական թղթի տակ:

Հարփիլդը խստիւ բողոքեց ամենայն տեսակ հաշ-
տարարական միջոցների գէմ, նա այդ բանը վախկոտու-
թիւն անուանեց և ուղղակի էլ յայտարարեց, որ ինքը հա-
ւատարիմ կը մնալ իր դրօշակին, կը կռուի ընդհանուր-
մարդկային իրաւունքի համար: Պատերազմի հարցը, վեր-
ջապէս, վճռուեց:

Գիշերն ուշ պառկելով քնելու՝ Հարփիլդը դարձաւ
դէպի իր սենեկակից Կոկսը.

—Կոկս, ասաց, նա, կարծեմ պատերազմն անխու-
սափելի է:

—Կասկածելու տեղիք չկալ, պատասխանեց Կոկսը:

—Ասել է մենք իմիսսին պէտք է զօրքին առաջ-

նորդենք:

—Ի հարկէ, որովհետև եթէ այդպէս չանենք, մեզ

վախկոտ կանուանեն:

—Դէ ուրեմն երդուինք հայրենիքի վիրկութեան

համար մեր անձը զոհել:

Եւ բարեկամները յուգուած սրով տաք-տաք ի-
րաբու ձեռք սեղմեցին:

Սումտեր նաւահանգստի ոմբակոծութեան լուրը
հասաւ Օգիօ նահանգ համարեա այն միջոցին, երբ Լին-
կոլնին նախագահ հրատարակեցին Շօ հազար հոգուց
բաղկացած նոր բանակ կազմակերպելու համար: Ամեն

կողմից ծափահարութիւնով ընդունեցին հրապարակա-
կարդացած նախագահի նոմակը: Երբ փոթորիկն անցաւ,
Հարփիլդը տեղից վերթուաւ և մի կարճառօտ, եռանդուն
ճառից լետոյ այսպէս եղրափակեց իր խօսքը.

—Օգիօ նահանգն իր կողմից հայրենիքի ազատու-
թեան համար նուերում է 20 հազարի չափ զինուոր և
4 միլիոն 50 հազար ոռուբլի:

Ներկայ եղողների հիացմանը չափ չկար:

Պատերազմական առաջին յանձնարարութիւնը որ
տեղական նահանգապետը տուեց Հարփիլդին կայանում
էր նրանում, որ պէտք է Միստորի հասցնուէր 5 հազար
հրացան: Նա այդ յանձնարարութիւնը շատ ճարպիկ
կերպով կատարեց՝ հրացանները ջրով ուղարկելով՝
անվնաս հասցըց կոլումբուս:

Ամեն տեղ Հարփիլդին յաջողում էր: Նրա անձնա-
կան քաջութիւնը, նրա ամենքի հետ վարուել իմանալու
ընտիր յատկութիւնը պատճառ դարձան նրա շուտով
առաջանալուն: 1862 թուականի Միգլ-Կրիկի տակ հիւ-
սիսալինների տարած յաղթութիւնից լետոյ՝ չնայելով
հարփիլդի երիտասարդութեանը, նրան յառաջադէտ
գնդի զօրավար նշանակեցին: Յետոյ Զիկկամօգի մօտ
պատահած պատերազմում իր ցոյց տուած «պանծալի
քաջութեան համար» 8-րդ աստիճանի զօրավարի կոչում
ստացաւ: Սպաների և զինուորների մէջ նրա ժողովրդա-
կանութիւնը շատ մեծացաւ. հաստրակապետութեան
բանակի մէջ չկար մի մարդ, որ Զէմս Հարփիլդի անունը
հպարտութիւնով չարտասանէր:

Երկու տարի և երեք տամիս պատերազմի դաշտի
վրայ անցկացնելով՝ Հարփիլդն իր հայրենակիցների կողմից
էլի մի նոր ուշադրութեան արժանացաւ: Օգիօ նահան-
գը՝ Լինկոլն նախագահ ցանկութեան համաձայն՝ ձայ-
ների մեծամասնութիւնով միջազգային յանձնաժողովի

Համար իրան ներկայացուցիչ ընտրեց Երիտասարդ զօրավարին, և 1863 թուականի դեկտեմբերին նա առաջին անգամ իր աթոռը ըռնեց «Սպիտակ Տանը», ազգային շինութեան մէջ, ուր հաւաքվում են Միացեալ-Նահանգների ըոլոր գաւառներից պատգամաւորները, ուր և բընակվում է նախագահը:

Չնայելով միջազգային լանձնաժողովի նիստերին մասնակցիլը և սենատօր լինելը, այնուամենայնիւ Հարֆիլդն Ալրամեան ինստիտուտից չուսեկաւ, այլ, պատգամաւորների ժողով չեղած ամիսներում, նա շարունակեց իր գասախօսութիւններն այնտեղ: Վերջին ժամանակներում նա առանձին եռանդով սկսեց պարապել ինստիտուտում նոր բացուած գեղագրութեան դասարանով: Նրա առաջնորդութիւնով ուսանողները պարտաւորուած էին շարադրելու ամենայն տեսակ բովանդակութիւնով—բարեկամական, ազգակցական, գործնական մաքուր գրած նամակներ: Երբ Հարֆիլդը գնաց Կոլումբուս սենատի նիստերին ներկայ լինելու, ուսանողներն այդպիսի բազմաթիւ նամակներ էին ուղարկում: Նա ամենայն ուշադրութիւնով կարդում էր այդ նամակները, ուղղում և յետ ուղարկում իրանց տէրերին:

Կարելի է ենթադրել թէ ինչպէս լաւացաւ նրանց ձեռքը, ինչպիսի սիրուն ոճերի հետ ընտելացաւ բոլոր ուսանող երիտասարդութիւնը և ինչպիսի ահագին օգուտ տուց ուսուցման այդ եղանակն այն ուսանողներին, որոնք պէտք է վերջերում գործ ունենալին վաճառականական գրասենեակներում կամ դրամանոցներում: Տասնեօթը տարի շարունակ 0դիօ նահանդից Զէմս Հարֆիլդը պատգամաւոր էր ընտրվում, և արդէն հէնց այդ ժամանակուանից նրա անունը մի առանձին հպարտութիւնով էին արտասանում իր բոլոր հայրենակիցները: Սրանից յետով հասկանալի է թէ ինչու 1880 թուակա-

նին հասարակութետական կուսակցութիւնը միաձայն վճռեց հանդուցեալ Տերմէնի տեղ նրան ընտրել օրէնսդրական ժողովի անդամ: Երբ Հարֆիլդի բարեկամները հաղորդեցին իրան այս մասին, նա պատասխանեց.

— Արէք, ինչ որ կամենում էք: Եթէ ձեր կարծիքով այդ հարկաւոր է, ես չեմ ընդդիմանալու:

— Մենք ցանկանում ենք՝ որ դուք էլ մեզ հետ գաք Կոլումբուս և ներկայ գտնուիք ընտրութիւնների ժամանակ, ասացին բարեկամները:

— 0, ամենեին: Մազի չափ անգամ չեմ աշխատիլ այդ յարգելի պաշտօնն ստանալու: Ես իմ կեանքիս մէջ միայն մի անգամ ինձ համար տեղ խնդրեցի, այն է՝ Ալրամեան ինստիտուտի գունապանի պաշտօնը: Եթէ ժողովուրդն ինձ է ցանկանում նա առանց ինձ էլ կընտրի:

Որչափ էլ խնդրեցին, բայց նա էլի իրան խօսքն առաջ տարաւ:

— Մի անգամ ասացի՝ որ ընտրութիւննրին չեմ գայ Կոլումբուս, — ես իմ խօսքս չեմ փոխիլ:

Երբ Վաշինգտոնում Սպիտակ-Տան մէջ օրէնսդրական ժողովը բացեց իր նիստերը, ընդհանուրի տրամադրութիւնը յօգուտ Հարֆիլդի այնպէս նկատելի էր, որ միւս բոլոր ընտրելիները հրաժարուեցան քուէարկուելուց և նա միաձայն հաւանութիւնով Միացեալ-Նահանգների սենատօր ընտրուեց:

Օրէնսդրական ժողովի անգամ ընտրուելուց հինգ ամսին յէտով Միացեալ-Նահանգների նախագահի տեղը թափուր մնաց:

Հարֆիլդն անձամբ ներկայ էր ժողովին, ուր այդ մասին հարց բարձրացաւ: Թէև նա իր գիրքով իրաւունք չունէր ընտրելի լինելու, սակայն ընդհանուրի ուշադրութիւնը դէպի իրան էր քաշում: Հէնց որ վեր էր կենում քանի մի խօսք ասում, կամ երբ ժողովի ընդմիջման

միջոցին ահագին դահլճում զբօսնում էր, ոմենայն կողմից բարձրաձայն նրան էին գովում։ Ակներև էր որ նրա և ժողովրդի մէջ մի տեսակ զօրեղ, անքակտելի կապ կար։ Երեսունուշըսերորդ չափողուած քուէարկուղներից լեռոյ ՅՅ-րդը՝ որ Հարֆիլդն էր՝ 50 ձայն գուսեկաւ։ Երբ այդ ծանուցուեց՝ դահլիճը թնդաց բազմութեան ուրախ և մոլեգին աղաղակներից։ Ամենքն էլ զգում էին, որ Հակառակ ընդունուած կանոնների, հասարակապետականներից ամենաժողովրդականը միաձայն նախագահ է ընտրուելու, իբրև ներկայացուցիչ ամենայն կուսակցութիւնների։ Մի ակնթարթում 0գի նահանգի պատգամաւորները վերառան իրանց դրօշակը (իւրաքանչիւր նահանգի ներկայացուցիչները՝ լանձնաժողովում առանձնակի նստած ժամանակ իրանց դրօշակն ունէին), առաջ տարան և բոնեցին նշանաւոր հայրենասէրի և արքունական գործիչի գլխի վրավ. նրանց հետեւեցին և միւս ընտրողներն իրանց դրօշակներով ու հաւաքուեցան լուզուած և զարմացած Հարֆիլդի շուրջը։ Դահլճի 700 քուէարկողների և վերին լարկի 10 հազար հանդիսականների ձայները միանալով՝ մի փոթորկալի, անզապելի-ուրախ աղաղակ լսուեց. դրօշակները պարզեցին, քանի մի երաժշտական խմբեր միասին հնչեցին «Գրօշակի շուրջը ժողովուինք» հայրենասիրական հիմնը։ Հասարակութիւնը, կարծես ըստ նշանացի, ձայնակից եղաւ խմբովին նոյն խօսքերին և միենոյն միջոցին փողոցից բազմաթիւ թնդանօթների միահամուռ ձայնը լսուեց։ Ամենքն էլ առանց բացատրութեան հասկացան, որ հայրենիքը Զէմս Հարֆիլդին արժանի ճանաչեց բռնելու Միացեալ-Նահանգների նախագահի տեղը։

Այդպիսի մի օրինակ հազիւ թէ կրկնուի էլի մի որևէ քաղաքական ժողովում։ Այդտեղ ամեն բան անկեղծորէն էր, ամեն ինչ անխարդախախ։ Ազգը պատկեց ի-

րան հաւատարիմ որդուն և հպարտութիւնով իմացում տուեց ամբողջ աշխարհին։

Զօրավար Հարֆիլդի նախագահ ընտրուելու լուրը կայծակի արագութիւնով անցաւ երկրի մէկ ծալրից միւսը։ Զարութիւնը լուեց. չքացան գաղտնի խոռովութիւնները. բոլոր կուսակցութիւնները գլուխ թեքեցին երիտասարդ ընտրելիի արժանիքի և ժողովրդականութեան առաջ։

Ուրեմն ալսպէս՝ 1880 թուականի նոյեմբեր 2-ին Հարֆիլդը Միացեալ-Նահանգների նախագահ դարձաւ։ Երեսուն ութ նահանգներից 20-ը յօգուտ նրա ձայն տրւեց, իսկ նրա հայրենի քաղաք Կոլումբուսը միաձայն նրան ընտրեց։ Հարֆիլդը՝ 1881 թուականի մարտի 4-ին, գնաց Սպիտակ-Տանը բնակուելու։

XXIV

Հարֆիլդը սաստիկ բարոյական կոիւ ունեցաւ ինքնիրան հետ այն օրը, երբ նա վճռեց թողնել քաղաքական սապարէզը և զինուորական ծառայութիւն մտնել. այդ այն միջոցին էր, երբոր հարաւալին նահանգները գլուխ էին բարձրացըրել հիւսիսայինների դէմ։ Մանկութիւնից սովորած լինելով առանց ազօթքի չսկսել և ոչ մի լուրջ զործ, ամբողջ գիշերը նախորասուզուած տեսարան էր կարդում, որը մայրն էր ընծալել նրան, և նրա մէջ որոնում էր իրան լուզող հարցի վճիռը՝ պատերազմ գնալ. թէ չգնալ. «Գնա, գնա, շշնջում էր նըրան մի ներքին ձայն, թո՛ղ մօրդ, թո՛ղ ընտանիքդ և գնա հայրենիքիդ համար պատերազմելու, որովհետեւ ամենից առաջ կեանքդ նրան է պատկանում. ուրեմն իբրև մարդ կատարիր պարտականութիւնդ—ամեն բանից առաջ հալընիքիդ օգնութեան հասիր, ապա թէ ուրիշ բանի վըրալ մտածիր»։ Նա մինչի արշալոյս կարդաց ու մտածեց,

և վերջացրեց նրանով որ իր ամենալաւ բարեկամներից մէկին հետեւեալ նամակը գրեց.

«Ես չափազանց շատ եմ սիրում մտքերիս շարժողութեան ընթացքին հետևիլ, երբոր ինձ ներկայանում է հիմնայտակ կործանել կեանքիս որևէ աւարտած նախագիծ և նրա տեղը կանգնեցնել մի բոլորովին նորը: Բոլորը՝ ինչոր մինչև օրս ինձ թւում էր թէ հաստատու ամուր էր, անփոփոխելի էր — բոլորը, ասում եմ, յօդս ցնդեցան, և իմ ներքին աչքերովս ես տեսնում եմ թէ ինչպէս իմ առաջ բարձրանում է բոլորովին նոր հիմնարկած շինութիւնը: Խորին ցաւակցութիւնով նայում եմ առաջինի աւերակներին: Բայց եթէ նրա բեկորների վրայ՝ թէկուզ հէնց պատերազմի դաշտում քանի մի տասնեակ հազար ամերիկացիների մահով՝ կարելի լինի ըստեղծել կեանքի նոր կարգութիւնում մի բոլորովին ազատ թագաւորութեան, այն ժամանակ ես իրաւունք չունիմ իմ զոհաբերութիւնս ծանր համարել: Ես իմ կեանքիս չեմ ափսոսում, բայց մի բանից երկիւզ եմ կրում. — արդեօք շատ քիչ չէ բերած յօդուտ քաղցր հալրենիքիս»:

Երբ բանակատեղը հասաւ, ուր տեղաւորուած էր նրան յանձնած զօրաբաժինը՝ Հարֆիլդը հէնց առաջին իսկ բոպէից հետևեց նոյն կանոնին, որին հետևում էր հիւսնութեան արհեստով պարապելիս, այն է՝ սկսեց իր ձեռնարկած գործի այբուբենից: Ամենափոքը հասկացողութիւն անդամ չունենալով զինուորական կրթութեան և առհասարակ պատերազմական գիտութեան, նա մի առանձին տեսակ խաղ մտածեց, որի օգնութիւնով առաջ ինքը սովորեց ամեն բան, ինչ որ հարկաւոր էր, իսկ յետով սկսեց սովորեցնել իր զօրքին: Հարֆիլդն ինքնիրան ձեռքով հացի ծառ կտրեց, տաշեց, մի խումբ զինուորներ ու սպաներ շինեց և, ահազին տախտակի վրայ շարելով նրանց՝ ամենալն օր սկսեց զօրքերի զանազան

տեսակ կրթութիւնով վարժուիլ, — մին պատերազմ տանենով, մին տանուլտալով: Այդ միջոցով նա ամենակարճ ժամանակի մէջ հասաւ այն բանին, որ կատարելապէս սովորեց զինուորական կրթութիւնը: Այն ժամանակ նա սպաների համար գպրոց բացեց, ուր նրանք գալիս էին և բարձրաձախ կարդում զանազան պատերազմական հեղինակութիւններ և վարժվում պատերազմական խաղերում: Միշտ սովորելով և զինուորական կրթութիւնով պարապելով, որ երբեմն Յիշ մինչի 8 ժամ էր տեսում մի օրուայ մէջ, Հարֆիլդն իր զօրաբանակն այն աստիճան կանոնաւորութեան հասցրեց, որ ուրիշ բանակների համար կատարելապէս մի ընտիր օրինակ եղաւ:

Զօրքի գլխաւոր հրամանաւորաբից Հարֆիլդին տըւած պատերազմական առաջին յանձարարութիւնը կայանում էր նրանում, որ նա պէտք է զաղանի հաղորդակցութիւն գտնէր գնդապետ Կրէնորի մօտ գնալու և աշխատէր միանալ նրա հետ. թէև նրանց երկուսի զօրքը միացած՝ թշնամու ոլժի կէսն էլ չէին կազմում: Դրահամար անհրաժեշտ էր Կրէնորին հեռագիրը հասցնելու համար գտնել մի այնպիսի յուսալի մարդ, որնոր ցանկանար շաւտով մեռնել, քան իր գաղտնիքը երևան հանել: Կրէնոր գնդապետն իր զօրաբանակով Հարֆիլդի բանակատեղից հարիւր մղոն հեռաւորութեան վրայ էր գտանվում. և բացի այդ հեռագիր տանողը պէտք է անցնէր այն տեղերով, ուր ինսուրքէնտներն (հարաւայինները) ու գուերիլեաններն (լեռնական տագակներն) էին բնակվում: Հարֆիլդը գիմեց 14-րդ Կենտուկօւան գնդի հրամանատար Մուրին այս հարցով՝ թէ արդեօք նրա մօտ չկայ մի այնպիսի գաղտնապահ զինուոր, որնոր յանձնառնէր այդ վտանգաւոր ձեռնարկութիւնը՝ ի կատար հանելու:

— Իմ ցուցակումս այդպիսի մի մարդ կալ, պատասխանեց Հրամանատար Մուռը մտածելով՝ այդ Զօն Զօրդոնն է, տուէք նրան հեռագիրը նա կը տանի:

Զօրդոնի ետևից ուղարկեցին: Եկաւ մի շատ բարձրահստակ, թիկնաւէտ, չոր-չոր, սուլուլիկ դլխով մի երիտասարդ, որնոր խօսում էր Համարեա անհասկանալի լեռնալին բարբառով: Նա ծնուել և մեծացել էր լեռներում, մանկութիւնից սովորել խիստ կեռնքի և ամենայն տեսակ զրկանքների: Այն շրջակալքը նրան լաւ ծանօթ էր. բայց չնայելով այդ բաներին—նա կատարելապէս երեխայ էր: Զինուորական խորհրդի անդամները կատկածի գնացին, թէ արդեօք նա կարող է մի գաղտնապահ զինուորի պարտականութիւն կատարել: Իսկ Հարֆիլդն իսկոյն ճանաչեց. նա հանկացաւ որ այդ կոպիտ, թերուս մարդը բոլորովին յուսալի երիտասարդ է:

— Դու ինչու Համար ես եկել պատերազմ, Հարցրեց Հարֆիլդը նրան:

— Որպէս զի անձս զոհեմ Հալլբենիքիս փրկութեան համար, պատասխանեց Զօնը, — Տէր Աստծու հետ առ Ատուր անել չի կարելի: Եթէ Նրա սուրբ կամքը վճռել է, որ ես ընկնեմ, թող այդպէս էլ լինի, ես իրաւունք չունիմ տրտնջալու, մանաւանդ որ Հալլբենիքիս Համար է որ պէտք է ընկնեմ:

— Կը նշանակէ դու այն մաքով ես եկել պատերազմը, որ կենդանի չվերադառնաս:

— Այո՛, պ. գնդապետ, հէնց այդ մտքով:

— Խօսք տալիս ես, որ դու աւելի շուտով կընտրես մեռնել, քան թէ քեզ յանձնած հեռագիրն ուրիշին տալ:

— Պ. գնդապետ, խնդրում եմ չկասկածէք ալդ մտին:

— Նատ լաւ, ես, քեզ բոլորովին Հաւատում եմ: Հարֆիլդն իսկոյն հեռագիրը գրեց չինական ամենաբարակ թղթի վրա, կոլուց շինեց գնդակ, արձնով պատեց

և Զօրդոնին տուեց գնդակի ձեռվ: Յետոյն բան մի քարաբինայով և մի զոյգ ատրճանակով սպառազինելով՝ զօրքի ունեցած ամենալինակի երիվարներից մինի վրաւ նստեցին: Զօրդոնը բանակտանդից ճանապարհ ընկաւ գիշերով, երբ արդէն լուսինը շրջելու վրայ էր. նրան Հրամայուած էր ցերեկով թաք կենալ տնտառների մէջ կամ մի յուսալի գաղթականի մօտ, իսկ ամբողջ գիշերներն առանց հանգստանալու յառաջ գնալ: Ճիշդ երկու օրու գիշերից յետոյ մօտ կէս գիշերին՝ երբ Հարֆիլդն ընկըղմուած էր խոր քնի մէջ, Զօրդոնը ջուխտափակ քշած բանակտանդը վերադարձաւ: Քրտնքում մտած ձիուց վայր իջնելով՝ նա շտապով վագեց մտաւ Հրամանատարի վրանը և սկսեց նրա ուսին այնքան դուրժել, մինչև որ վերկացաւ:

— Ա՛ ա, վերադարձել ես, ողջ-առ նդջ, ուրախ-ուրախ բացականչեց Հարֆիլդը նայելով կտրչի երեսին: — Գնդապետ կրէնորին տեսար:

— Տեսալ, պ. Հրամանատար: Երկու օրու գիշերից յետոյ իր զօրաբանակով նա այստեղ կը լինի: Իմ բռնած ճանապարհով նա էլ գալիս է:

— Կեցցես Զօրդոն: Մեծ ծառայութիւն արիր գումեզ: Աստուած դրա փոխարէն քեզ կը վարձատրի, բացականչեց Հարֆիլդը, սրտանց սեղմելով քաջ զինուորի ձեռքը:

— Խորին շնորհակալութիւն, պ. գնդապետ, խօսեց Զօրդոնը յուզուած ձալնով, ես չէ սպասում ալդպիսի վարձատրութեան . . . :

Հարֆիլդն իր զօրքի մէջ մեծ ժողովրդականութիւն ունէր: Բաւական էր միայն նրա մի խօսքը, որ ամեն մի զինուոր պատրաստ լինէր ինքնիրան ջուրը կամ կրակը նետելու:

Մի անգամ Ռոգէնկրանցի բանակից մի խորհրդապահ զինուոր եկաւ Հարֆիլդի գլխաւոր կացարանը և

պահանջեց, որ իրան Հրամանատարին ներկայացնեն: Հարֆիլդն այդ միջոցին յառաջապահ գծի վրայ էր: Զինուորին նրա մօտ տարան:

— Զիմ, ուրախ կերպով աղաղակեց նա և վազեց Հարֆիլդի մօտ ու նրա ձեռքը սեղմեց:

— Ով էք դուք, զարմացած Հարցրեց Հարֆիլդը:

— Քո հին ընկերը, Զիմ: Ես Ռողէնկրանցի մօտ պատերազմական լրաեսի պաշտօն ունէի Հարաւալին Ալիրգինիայում. երբ լսեցի թէ Օգիօի մէջ զօրք է կազմակերպվում Զէմս Հարֆիլդի առաջնորդութիւնով՝ մտածեցի, արդեօք չլինի թէ իմ Զիմն է՝ «Երեկոյեան աստղի» նաւընկերս, և ուղիղ քեզ մօտ վազեցի:

— Դարրի, միթէ այդ դու ես, բացականչեց իրան կարգին Հարֆիլդը և ամուր սեղմեց նրա ձեռքը: Նա նոր կարողացաւ ճանաչել այդ արեգակից չափազանց այրուած. տկարացած, պատառուտած զգեստով զինուորի մէջ Գարրի Բրունին, այն նաւաստիին, որնոր իրանց նաւի վրայ եղած ժամանակ այնպէս սերտ կապուած էր իրան հետ:

— Պարոն գնդապետ, սկսեց Բրունը, յանկարծ ընկերականից պաշտօնական դիրք ստանալով, և ձեր ծառան եմ, ինչպէս ձեզ հաճելի է այնպէս էլ ծառայեցրէք ինձ:

Հարֆիլդն ուրախ ծիծաղեց:

— Ո.յ, հէնց ինձ այդպիսի խորհրդապահ զինուոր է Հարկաւոր, ասաց նա, և նոյն րոպէից Բրունը նրա զօրքի մէջ ընդունուեց: Հարֆիլդը նրան բոլորովին հաւատում էր: Բրունին Օգիօի շրջակալիքն այնպէս էր ծանօթ, ինչպէս իրան Հինգ մատները. իսկոյն նշանակեցին, որ նա գնայ թշնամու դիրքը լրտեսէ, հետազոտէ Հարաւալինների զօրքի դիտաւորութիւնը և մօտաւորապէս իմանալ թէ այդ Հատուածի զօրութիւնը ո՞րչափ է: Ապա Հարֆիլդը յանձնեց նրան որ բարձրանայ Ալիրգինիա


լեառը և ուղիղ տեղեկութիւններ ստանայ, թէ արդեօք Հիւսիսայինները նահանջած են թէ չէ: Այս երկու յանձնարարութիւններն էլ Բրունը ամենայն ճշգութիւնով կատարեց Հերոսաբար:

Ենորհիւ այդ երկուսի, — Զօրդոնի և Բրունի՝ Հարֆիլդը կարծ ժամանակում առանձին «պատերազմական լրաեսների» մի խումբ կազմեց, որնոր յետոյ թշնամու զօրքի ամեն մի շարժողութեան մասին անհրաժեշտ տեղեկութիւնները շուտ և ճարպիկ կերպով ձեռք բերելուն համար «Հիւսիսային զօրքի աչքեր» անուն ստացաւ: Ամբողջ զօրքը միաձայն խոստովանվում էր, թէ տեղեկութիւններ ստանալու համար նրանց ընտրած եղանակն օրինակելի էր:

Վերը մենք տեսանք թէ Հարֆիլդը վաղ երեխայութիւնից միշտ էլ իր ընկերների առաջնորդն էր լինում: Նրա բնաւորութեան մէջ նկատելի էր մի ինչոր անսովոր մեղմ հաշտեցուցիչ բան, այնպէս որ ամենքին դէպի իրան էր ձգում: Ուսուցիչ եղած ժամանակ նա իր աշակերտներին դրաւել էր և անպայման իրան էր հպատակեցրել նրանց: Նա նոյն կերպ վարուեց և զօրքի հետ:

Ո.յ բանի գեղեցիկ ապացուց կարող է լինել այն փառաւոր յաղթութիւնը, որ Հարֆիլդն ունեցաւ 1865 թուականին հարաւալինների հետ ունեցած պատերազմում: Ալրամեան ինստիտուտում եղած ուսանողներից մօտ Հարիւր հոգի նրա իշխանութեան տակն էին այդտեղ: Երկու կողմն էլ պատերազմում էր կատաղաբար. Հարաւալինները՝ ցրուելով անտառի մէջ՝ սկսել էին յաղթահարել Հիւսիսայիններին: Հարֆիլդի զօրքից շատ երիտասարդներ ընկան: Խոկ ինքը փոքրիկ խմբով կանգնած մի ժայռի վրայ, որն ամեն կողմից գնդակոծվում էր թըշնամիններից, յուղուած սրտով պատերազմի ընթացքին էր հետեւում և ջերմեռանդագին աղօթք վերուղղում առ

Բարձրեալն իր աներկիւղ զինուորների համար: Ռոպէ առ
ըսպէ զօրավար Շիլդոնի օգնութեանն էին սպասում, սա-
կայն նո չէր երևում: Ի՞նչ էր մնում անելու . . . : Թշնա-



Զէմբն պատերազմի խաշում:

մին հետզետէ իր լարձակմունքները սաստիացնում էր,
անտառի ծառերի բարձր կատարները ցածացան հրացան-
ների գնդակներից, որոնք և կոտորած էին լառաջացնում

Հարֆիլդի զօրքի մէջ: Ռոպէն թանկ արժէր: Հարֆիլդը
վճռեց վերջին յուսահատական միջոցի դիմել: Վերնա-
գգեստը հանելով վրալից, դիմեց դէպի այն հարիւր քաջ
Ալրամցիներին, որոնք նրա մօա մի առանձին խումբ էին
կազմում:

— Եղբայրներ, եկէք իմ ետևից: Կեցցէ՝ Կոլումբիան:
Այդ պատերազմական բացականչութիւնը բարեկա-
մաբար կրկնեցին երիտասարդները և փոքրիկ բանակը,
Հարֆիլդին իր գլուխն առած, դիմեց դէպի սարսափելի
անտառը, ուր արիւնահեղ պատերազմն էր մզգում: Քա-
ջերն թուչնի արագութիւնով օգնութեան հասան իրանց
վտանգի մէջ եղած ընկերներին: Արեգակն արդէն թե-
քուել էր և սկսել էր ծածկուիլ բարձր լեռների ետեր,
մէկ էլ լանկարծ հիւսիսային կողմից ծառերի միջով ե-
րկաց իրանց ծանօթ աստղաւոր թանկագին դրօշակը:
Դա Շիլդոնն էր որ գալիս էր իր օգնական զօրքով:
Փշսամի զօրքի մէջ շփոթ ու աղմուկ տիրեց և միենայն
ժամանակ հարաւալիների գլխաւոր առաջնորդն ընկաւ
Ալրամցիների վեց հատ գնդակի հարուածներից:

— Ծնորհակալ եմ Եղբայրներ: Դուք աղատեցիք կեն-
տուկեան զօրքը, ուրախ աղաղակեց Հարֆիլդը, դառնա-
լով դէպի իր առաջուալ ընկերներին, երբ նրանք թշնա-
մուն հալածելը դադարեցրին:

Սնհրաժեշտ էր որ անպատճառ Թոմաս զօրավարին
իմացում տրուեր, թէ Կումբերլանդիան զօրքը Չիկկամօգի
մօտ եղած կռւում սարսափելի վնաս էր կրել: Ոչ ոք չէր
վճռում իր վրայ առնելու այդպիսի վտանգաւոր լանձ-
նարարութիւնը, որովհետեւ մինչի նրան հասնելու համար
նո պէտք է անցկենար թշնամու պահնորդների մէջից:
Հարֆիլդն երբ լալտնեց որ ինքն է կամենում այդբանը՝
սաստիկ լուզում պատճառեց զօրքի հրամանատար Ռո-
գէնկբանցին: Նա ձեռքը մեկնեց դէպի համարձակ ե-
րիտասարդը և ամբոխուած սրտով ասաց.

— Զօրավար, շատ կարելի է որ մենք այլ ևս չտեսնուինք: Թող Աստուած օրհնի ձեզ:

Այդ շտապ գնալու ժամանակ Հարֆիլդն ամեն մի քայլափոխում վտանգի էր ենթարկվում. և եթէ նրա լաւ փախս ունեցող ձին չլինէր, այն ժամանակ թշնամու գնդակները, որոնք բազմութիւնով նրա ետևից տեղում էին, վաղուց նրան ձգած կը լինէին: Նրանցից երկուսը ձիուն դիպան, իսկ նստողն առողջ պրծաւ: Երբ նա հասաւ զօրքի սռաջապահ գծին, բոլոր սպաները սարսափած նրան դիմաւորեցին:


— Հարֆիլդ, միթէ դուք կենդանի մնացիք, ուրախ բացականչեց զօրավարներից մինը: Դուք կատարելապէս ազատուել էք հրաշքով: Ի՞նչպէս ձեզ Աստուած պահպանեց...:

Բայց Հարֆիլդը ոչ լսում էր և ոչ էլ տեսնում, այլ նրա աչքերը վախեցած որոնում էր նրան, որնոր իր այդ յանդուգն ձեռնարկութեան նպատակն էր եղած: Վարը՝ բլրի ստորոտում, ուր սփոռուած կալին գնդակներ և երկաթի կտորտանք՝ աներկիւղ Թոմաս զօրավարը կանգնած էր մի փոքրաթիւ խմբի առաջ:

Հարֆիլդը՝ երբ նրան տեսաւ՝ մի բոպէ իր ձին ոտնարաւ և, ձեռքը դէպի երկինք բարձրացնելով՝ արտասուքն աչքերին բացականչեց.

— Ահա նա, թող Աստուած նրան օգնական լինի, այժմ մեր բանակն այլ ևս չի կորչելու:

Եւ իրաւ Թոմասը Լոնգստրիտի բանակին ջարդ տալով՝ հարաւայինների ոյժը թուլացրեց, որով միջոց տուեց Ռոգէնկրանցին շունչ առնելու և մի փառաւոր կերպով վրէժ լուծելու իր կրած անյաջողութեան համար: Ըստ այժմեան կարծիքի այդպիսի հանդամանքների մէջ հիւսիսակին զօրքն իր ազստութիւնով պարտական է զլխաւարապէս զօրավար Հարֆիլդի անսովոր համարձակութեանը:



Նախագահ Հարֆիլդ

Զէմս Հարֆիլդի կառավարչական փայլուն ընդունակութիւնը պարզ կերպով երևաց նրա նախագահութեան հէնց առաջին չորս ամսուալ մէջ: Այդ մարդը կատարելապէս արժանի էր այն պատուին, որպիսին անում էին նրան: Նոյնիսկ անկողնապահ մարդերի կարծիքով յանձնաժողովի անդամների մէջ բարձր զարգացումի և շատ գրքեր ընթեցման կողմանէ Հարֆիլդին հաւասար մէկը չկար: Ամերիկայի Միացեալ-Նահանգները երբէք իրանց առաջնորդ չէին ունեցած այդպիսի գիտնական և երիտասարդ նախագահ: Իր կարճատև կեանքի համարեա կէսը ժողովրդի հասարակական և քաղաքական պահանջման ուսումնասիրութեանը նուիրեց: Հարֆիլդն իր նախագահութեան պարտականութիւնն ստանձնած հէնց առաջին օրերից պարզ և որոշ կերպով ընդգծեց իր գործունէութեան յատակա-

գիծը, և ամեն մի արտասանած հրապարակական ճառի մէջ առանց քաշուելու յալտնում էր իր հայեացքներն ու համոզմունքները:

Իր հայրենիքի կանոնները նա անձեռնմխելի սըրբութիւն էր համարում: Նրա ժամանակ Միացեալ-Նահանգների ներքին վաճառականութիւնն արագ կերպով ծաղկեց, որովհետեւ, հասկանալով նրա օգուտը, Հարֆիլդն ինչոր կարող էր արաւ նրա ընդարձակման ու ապահովութեան համար. նեղըների ազատութիւնը նա այժմս առաջուանից աւելի եռանդուն կերպով էր պաշտպանում, և մանուկների պարապեց կրթութեան միտքը նա ամենայն հաստատամտութիւնով առաջ էր տանում:

Ընդհանրապէս Հարֆիլդն իրան նպատակ ընտրեց ժողովուրդը բարձրացնել բարոյական, հասարակական և վաճառաշահութեան կողմից:

Նախարարների ընտրութեան ձեռնարկելով՝ Հարֆիլդը հոգում էր միայն մի բանի մասին, այն է՝ իւրաքանչիւր վարչութեան համար գործունեալ ու ազնիւ մարդ ընտրուի. բայց թէ ինչ կուսակցութեան կարող էր պատկանել ապագայ նախարարը՝ այդ նրա համար բոլորվին միւնոյն էր:

Անկաշառել — իազնիւ Հարֆիլդն առանձնապէս շատ թշնամիներ ունեցաւ, երբ հրաժարուեց հաստատելու օրէնսդրական ժողովի առաջարկութիւնը, որով պահանջվում էր վարչական ամենաընտիր և աչքի ընկնող պաշտօնների վրայ բացառապէս սենատորներ ընտրուին: Այդ առիթով սաստիկ յարձակուեցան նրա վրայ. նրա հակառակ կուսակցութեան առաջնորդն իսկոյն հրաժարական տուեց, և համարեա ամբողջ ժողովը նոր ընտրութիւններ էր պահանջում: Շատ կարելի է հենց այդ ժամանակ Գիտոն մտածեց սպանել նախագահին:

Ոչ մի խօսքով չի կարելի ճշտօրէն արտայալտել յուլիսեան առաւօտուայ դժբախտ անցքը: Եղանակն աննման էր. արեգակի փալլուն ճառագայթները լուսաւորում էր մայրաքաղաքը, որ կարծես ամառուան տերեներով ու ծաղիկներով գարգարուած լինէր տօնի համար: Պաշտօնական հոգսերից և անբաւականութիւնից Փիզեքապէս և բարոյապէս խոնջացած Հարֆիլդը երեխալի պէս ուրախացել էր, որ գործերի գագարման ժամանակը մօտեցել է: Նա մտքումը զրել էր կնոջ հետ ամենից առաջ ուղեւորուել դէպի Լոնդ-Բրէնչ, ուր նա միանգամ դժուար հիւանդութիւնից առողջացել էր, յետոյ այցելել համալսարան և ներկայ լինել իր ուսանողական կեանքի ընկերների հետ համալսարանի հրապարակական ակտին, ապա գնալ նիւ-Զէրս իր թանկագին մօր մօտ մի երկու շաբաթ մնալու: Նա որչափ բաւականութիւններ էր ունենալու . . . :

Գիտոն, այս հանգամանքին տեղեկանալով, յուլիսի երկուսի առաւօտը ատրճանակն առած, նախարարի գալուց մի ժամ առաջ, գնաց Բալտիմոր-Պոտոմական երկաթուղու կալարանը: Ժողովրդի վրէժինդրութիւնից երկուղ կրելով՝ վաղօրօք կառք էր վարձել, որ սպանութիւնը կատարելուց յետոյ կարողանալ անմիջապէս թաքնուիլ:

Հարֆիլդն եկաւ կայարան բաց կառքով և, իր աշակցի թւեին՝ կոթնած հանդարտ մտաւ կայարանի նախագաւիթը: Զարագործը՝ որ կընկալոյն հետեւում էր նրան՝ հանեց գրպանից ատրճանակը և արձակեց ուղիղ Հարֆիլդի մէջքին. վիրաւորուածը երերաց, կամեցաւ ետնայել, բայց մանգաղով հնձածի պէս վալլընկաւ. նոյն ըովէին լսուեց ատրճանակի երկորդը արձակումը: Այդ տեսարանին ներկայ եղողների վրայ աննկարագրելի սարսափ տիրեց: Ժողովրդը քիչ մնաց կտոր-կտոր անէր մարդասպանին:

Սկզբում ամենքն էլ կարծեցին թէ նախագահը հենց
տեղնուտեղը հոգին աւանդեց, բայց երբ նրան տարան
Սպիտակ-Տուն, շնորհիւ նրա անխոնջ կնոջ հոգատա-
րութեան և ամեն կողմից կանչած ամենահմուտ բժշշ-
կների աշխատանքների, կարելի եղաւ նրա թանկագին
կեանքը երկարել յուլիսի 2-ից մինչի սեպտեմբերի 19-ը:
Նոյնիսկ այդ դէպքում ևս այդ նշանաւոր մարդը
ցոյցտուեց իր երկաթի նման հաստատուն բնաւորու-
թիւնը: Զնալեռվ իր սարսափելի և անընդհատ ցաւին՝
նա միշտ իր հոգու գուարթութիւնը պահպանեց և
համբերութիւնով տանում էր իր տանջանքներին:

Ամենայն օր ժողովրդի մեծ բազմութիւն էր հա-
ւաքվում Սպիտակ-Տան առաջի հրապարակի վրայ և
լուռ ու խորին յարգանքով հիւանդի դրութեան մասին տե-
ղեկութեան էր սպասում: Տիկին Հարֆիլդն Ամերիկայի
և Եւրոպայի ամեն կողմերից անկեղծ ցաւակցական նա-
մակներ ու հեռագիրներ էր ստանում: Նախագահին
շրջապատողները շարունակ աշխատում էին մի բան մը-
տածել և նրան զբաղեցնել. օրինակ՝ իմանալով որ նա
շատ սէր ունի դէսի ծաղիկները՝ նրա առաջ շքեղ ծաղ-
կափնջեր էին դնում: Ամենայն զգուշութիւնով աշխա-
տում էին որ ոչ ոք տխուր չլինի. այնպէս որ հիւանդը
միշտ իր առաջ տեսնում էր համեստ ու քաղցրաժպիտ
երեսներ: Մինչև անգամ նրա կինն աշխատում էր որ-
քան կարելի է բաց գոյնի զգեստ հագնել, որպէս զի ոչ
մի բանով առիթ չտայ մտածելու իր թանկագին հի-
ւանդին, թէ ինքը տխուր է: Երբոր ցաւի սաստկութիւ-
նը մի քիչ իջաւ՝ բժիշկները Հարֆիլդին իսորհուրդ
տուին օդափոխութեան գնալ: Ամենայն կարելի զգուշու-
թիւնով նրան Նիւ-Զէրս տեղափոխեցին, յուս ունենա-
լով որ ծովի մերձաւորութիւնը և մօր տեսութիւնը
կամրապնդեն նրա թուլացած ուժերը: ծանապարհորդու-

թիւնը յաջողութիւնով վերջացաւ, մինչև անգամ մի քիչ
յոյս ևս ծագեց հիւանդի զրութեան լաւանալու մասին.
բայց գժբախտ ըրպէն մօտենում էր. և երբ Միացեալ-
Նահանգի ազգաբնակութիւնը միսիթարում էր իրան
այն մտքով, թէ իրանց նախագահը առողջանալու է՝
նրա մաքուր հոգին առ Բարձրեալը թռաւ:


Հանգուցեալի զմուսած դիակը կրկին յետ ուղարկե-
ցին Վաշինգտոն, ուր երկու օրուգիշեր շարունակ ան-
համար մարդերի բազմութիւն էր հաւաքվում իրանց մը-
նաս-բարովն ասելու հալլենիքի անձնանուէր անխորդախո-
ու ազնիւ որդու վերջին մնացորդին: Յետոյ այնտեղից
տարսն նրան իր ծննդեան քաղաքը—Կլելանդ, ուր և,
1881 թուականի սեպտեմբերի 26-ին, հողին յանձնեցին:

Վ Ե Ր Զ



ՀԱՅ ԺԵ ԽԱՐԻՄԱ ԱՀՅԻՆ առօսնոցի խալվելու պահի
հիմուն արքայաց մասելուց հրամակը ընդու և ուղարկեցին զբա և զա և աշխատու մժրոյ տախուեր պատ
մասի զա նարակի իման ըմբէի ափամատարու պատահու
և այս աշխատան պատահու ըմբէ ան խաղու մաս
առանի պատահու առ մժրոյ պատահ այս
մժրաբա ու մժրոյ պատահ ճառու պատահուն
ան խաղու զժշիք այս ամենու մաս
ու ան պատահ նախան ու ու ամենու պատահ պատահ
պատահ պատահ պատահ պատահ պատահ պատահ
պատահ պատահ պատահ պատահ պատահ պատահ

Զ Գ Ֆ Յ



ԱՐԴՅՈՒԹ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՄԻԱՄՍԵԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆՆԵՐԻ ԵԲ ԴԱՍՏԱՐԱԿՆԵՐԻ

ՀԱՄԱՐ:

(ՏԱՐԵՆԻ 1.030 ԿՐ. ՏԵՍՆԻ 12 ՀԱՄԱՐ 2-3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)

Կը հրատարակուի միևնուն զերքով միևնուն ուղղութեամբ և նոյն
աշխատակիցների մասնակցութեամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

- I) Վէպեր, մանրավէպեր, զրոյներ, տռակներ, հեքիաթներ,
ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ:
- II) Բանաստեղծութիւններ:
- III) Գիտութիւն և արուեստ:
- IV) Հետաքրքիր տեղեկութիւններ:
- V) Ալլ և ալլք:
Զ Ա Խ Ա Բ Ճ Ա Լ Ի Բ Փ
- VI) Մանկական, ֆրեքելեան, շախմատի և ալլ խաղեր, մասնաւութիւններ,
բուսներ, թուաբանական խնդիրներ: Անեկդօտներ, հանելուկներ,
շուտակներ, շուտառելուկներ:
- VII) Երգեր նոտանելով:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

- VIII) Կրթութեան և գաստիարակութեան վերաբերեալ լոգուած-
ներ և տեղեկութիւններ:
- IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ:
- X) Մատենախօսութիւն և նոր զրքեր:
- XI) Խառն լուրեր:
Պատասխաններ: Յայտարարութիւններ:
Երկրորդ բաժինը կը հրատարակուի առանձին թերթերով տա-
րենը չորս անգամ:
Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պրեմիա, յուլիսին և
դեկտեմբերին:
«ԱՂԲԻԲԻՐԻ» տարեկան բաժանորդագինը Յ բուբլի է, կէս
տարուանը՝ 2 բուբլի:
Հասցէն՝ Տիֆլիս. Ռեդակցիա „Ագրոր“ իսկ արտասահ-
մանից՝ Tiflis(Caucase) Rédaction du journal. «AGBUR.»
«ԱՂԲԻԲԻՐԻ» Թիֆլիսում կարելի է ստորագրուել և հայ գրա-
փանառանույներում, պ. Շահվերդեանի պավիլիոնում ու Մանկա-
կան գրադարանում, իսկ Պօլտում «Բուրաստան Մանկանց» հանդիսի
խմբագրատանը: Խմբագիր հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵՅՆՑ:

ԱՐԴՅՈՒԹ
ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՎՈՍՏՈՎԵДЕНИЯ
СЕВЕР
БИБЛИОТЕКА

1190

2013

